

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

42րդ. ՏԱՐԻ ԹԻԻ 50 (2060)ՇԱԲԱԹ,ՅՈՒՆՈՒԱՐ 6, 2024
VOLUME 42, NO. 50 (2060) SATURDAY, JANUARY 6, 2024



Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

Շնորհաւոր Նոր Տարի եւ
Սուրբ Ծնունդ

2024



ԲԱՆԱԿ

ՅԱՂԹԱՆԱԿ

ՀԶՕՐՈՒԹԻՒՆ

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱԶԴԻՄՈՒԹԻՒՆ

ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հայութիւնը Բոլորեց Դժուարութիւններու Տարի Մը Եւս

2023 տարին մնաց մեր ետին ու այժմ կը թեւակոխենք նոր տարի մը այն ակնկալիքով, որ ան ըլլայ տարբեր վերջին մի քանի տարիներէն, որոնք Հայաստանի ու Հայ ժողովուրդին համար եղան դժուարին ու տխուր տարիներ, երբ տուինք հազարաւոր զոհեր ու ամբողջութեամբ հայաթափուեցաւ Արցախ աշխարհը:

2023-ը եղաւ այն տարին երբ մեր բարեկամները անտեսեցին Արցախցիներու օգնութեան կանչերը: Ատրպէյճան ամիսներ շարունակ ամբողջական շրջափակման տակ պահեց 120 հազար հայերու, որոնք կը ձգտէին ապրիլ ազատ ու անկախ իրենց դարաւոր հողին վրայ: Քաղաքակիրթ կոչուող երկիրներուն համար աւելի թանկ արժեքին Պաքոյի նաւթահորերը ու կազի աղբիւրները, քան սովի մատնուած Արցախցիներուն կեանքը:

Հայ ժողովուրդը ապրեցաւ իր պատմութեան ամենէն մեծ յուսախաբութիւններէն մին, երբ մեր դաշնակից պետութիւնը, որ իր վրայ առած էր Լեռնային Ղարաբաղի հայութեան պաշտպանութիւնը, իր լուռ մեղսակցութեամբ մասնակից եղաւ հայ ժողովուրդի նոր օրերու տեղահանութեան ու զանգուածային գաղթին:

Հայաստանի կառավարութիւնն ու հասարակ քաղաքացիները օգնութեան ձեռք մեկնեցին իրենց քոյրերուն եւ եղբայրներուն՝ մեղմելով անոնց տառապանքը: Շնորհիւ այդ վերաբերմունքին Արցախցիները ստիպուած չեղան ապրելու ՄԱԿ-ի սպիտակ վրաններուն տակ, ինչպէս որ նման պատահարներէ ետք ականատես կ'ըլլանք նման տեսարաններու՝ աշխարհի տարբեր վայրերուն մէջ: Պետութեան տրամադրած աջակցութիւնը եկաւ մասամբ ամոքելու մեր հայրենակիցներուն վերքերը ու անոնք այժմ կը փորձեն վերականգնել իրենց կեանքը՝ օր մը իրենց տունները վերադառնալու յոյսով:

Հակառակ այս ողբերգութեան ու թշնամիներուն կողմէ մնայուն սպառնալիքներուն, Հայաստանի ժողովուրդը շարունակեց ապրիլ ու արարել, իր Հայրենիքը վերածելով տարածաշրջանի տնտեսապէս ամենէն արագ զարգացող երկրի: Այդ մասին վկայեցին միջազգային վարկանիշային եւ ֆինանսական կազմակերպութիւններու յաջորդական գէկոյցները:

Հայաստանի տնտեսութեան մէջ արձանագրուող յառաջընթացը եւ պետական գանձին մէջ նուտքագրուող գումարները առիթ տուին, որպէսզի մեծ յատկացումներ կատարուին Հայոց բանակին ու երկրի պաշտպանական ուժերին: Արդիական նոր զինատեսակներ հերթաբար կը հասանին Հայաստան՝ մտահոգութիւն պատճառելով Ատրպէյճանի ղեկավարութեան, որ սկսած է բողոքել հոս ու հոն, թէ անոնք զենք մատակարարելով Հայաստանին կը վնասեն «խաղաղութեան» գործընթացին:

Ժողովրդավարութիւնը շարունակեց մնալ Հայաստանի գլխաւոր դրամագլուխը, որ մեր երկիրը կը մօտեցնէ Եւրոպային ու անոնց մօտ զգալի միտում կը յառաջացնէ Հայաստանի անկախութիւնը եւ հողային ամբողջականութիւնը պաշտպանելու առումով: Հոն ուր ձախողեցան մեր աւանդական դաշնակիցները, Արեւմուտքը պատրաստակամութիւն կը յայտնէ լեցնելու անոնց տեղը:

Սփիւքահայութիւնը կը շարունակէ ապրիլ Հայաստանի հոգսերով, ազգապահպանման մարտահրաւերներով ու ապրած երկիրներուն մէջ տեղի ունեցող քաղաքական ու տնտեսական տագնապներով: Մեր աչքերուն առջեւ կը ջլատին ու կը հիւծին հայաստանամերց երբեմնի հայահոծ ու ազգային կեանքով հարուստ մեր համայնքները: Շատեր կը գաղթեն հեռաւոր երկիրներ, ուր ծուլումի վտանգը շատ աւելի մեծ է: Սակայն կան ուրիշներ, որոնք կը նախընտրեն նոր կեանք սկսիլ Հայրենիքի հողին վրայ, որ կը մնայ մեր ազգի գոյութեան միակ երաշխիքը:

Գալով Ամերիկային, Միացեալ Նահանգները կը պատրաստուի 2024 թուականի նախագահական ընտրութիւններուն, որոնք տեղի պիտի ունենան նախորդ ընտրութիւններուն շուրջ շարունակուող վէճի շուրջին տակ: Հրապարակի վրայ կը շարունակէ մնալ նախկին նախագահ մը, որ կը մերժէ ընդունիլ իր պարտութիւնը ու իր միլիոնաւոր հետեւորդները մոլորեցնելով կը վտանգէ ամբողջ երկրի ապագան: Ստահոգութիւն կայ որ ան վերադառնալով իշխանութեան Ամերիկան պիտի հեռացնէ ժողովրդավարական իր սկզբունքներէն ու պաշտօններու վրայ նշանակէ մարդիկ, որոնք դառնան իր կամակատարները, անտեսելով կարգ ու կանոն, որոնք կը հանդիսանան Միացեալ Նահանգներու հզօրութեան գլխաւոր սիւները:

Երկու պատերազմներ իրենց վրայ կեդրոնացուցին Աշխարհի ուշադրութիւնը: Կարծատեւ ենթադրուող Ուքրաինոյ պատերազմը մօտ օրէն պիտի բոլորէ իր երկրորդ տարին, առանց որ, հորիզոնի վրայ երեւնայ անոր աւարտը: Ուքրաինոյ պատերազմին վրայ եկաւ աւելնալու Կազախի հակամարտութիւնը, որ կը շարունակէ խել հազարաւոր անմեղներու կեանքը: Իսրայէլն ու Համասը կը շարունակեն գործել զիրար կործանելու նպատակադրութեամբ: Մեծ է մտավախութիւնը, որ այս պատերազմի կայծերը կրնան տարածուիլ այլ վայրեր՝ ամբողջ տարածաշրջանը ներգրաւելով անոր կրակներուն մէջ:

Տարուան ընթացքի հրապարակ եկաւ բարձր արհեստագիտութեան (թեքնոլոճի) մէջ նոր զարգացում մը, որ ճանչցուեցաւ «Արհեստական Բանականութիւն» անուամբ: Այս գիւտը հնարողներն անգամ

ՄԴՅԿ Կեդրոնական Վարչութեան Խօսքը՝ Ամանորի Առթիւ

Հայ ժողովուրդը բոլորեց տարի մը եւս, որուն ընթացքին ան ապրեցաւ իր պատմութեան ամենէն ծանր եւ ճակատագրական ժամանակաշրջաններէն մին: Ամիսներ շարունակ շրջափակման տակ գտնուող Արցախը յարձակման ենթարկուեցաւ եւ հայաթափուեցաւ՝ համաշխարհային ընտանիքի լուռ ու մեղսակից հայեացքին ներքոյ, առանց իսկ դոյզ միջամտութեան կամ կանխման փորձի: Իսկ այսօր Հայաստանի Հանրապետութեան հողային ամբողջականութիւնը եւ սահմաններու անձեռնմխելիութիւնը դարձած են մեր առջեւ ծառայած գլխաւոր մարտահրաւերը:



Այստեղ գնահատանքով կ'ուզենք արձանագրել բռնի տեղահանուած արցախահայ մեր քոյրերուն եւ եղբայրներուն ցուցաբերուած պետական օժանդակութիւնը, որուն շնորհիւ կարելի եղաւ արդիւնաւետ կերպով ապաստան եւ անհրաժեշտ միջոցներ ապահովել անոնց, հակառակ բռնագաղթածներու անսպասելի մեծ հոսքին: Յատուկ գնահատանքի արժանի է նաեւ Հայաստանի քաղաքացին, որ սրտբաց եւ ջերմութեամբ ընդունեց եւ աջակցեցաւ իր հայրենակիցներուն: Անշուշտ կասկած վեր է, որ տեղահանուած մեր քոյրերն ու եղբայրները սոսկ պետական օժանդակութեան պէտք չէ ապաւինին, այլ համայն հայութիւնը պէտք է շարունակէ նեցուկ կանգնիլ անոնց՝ նիւթապէս ու բարոյապէս:

Անցնող տարուան իրադարձութիւնները եկան վերջնականապէս ցոյց տալու նաեւ, որ այն պաշտպանութեան համակարգը, որուն ապաւինած էինք տասնամեակներէ ի վեր, գոյութիւն ունէր միայն թուրքի վրայ՝ անյետաձգելի դարձնելով երկրին անվտանգութիւնը սեփական նախաձեռնութեամբ եւ ուժերով ապահովելու հրամայականը:

Վերջին ամիսներուն ժողովրդավար Հայաստանի նկատմամբ ցուցաբերուող միջազգային հետաքրքրութիւնը եւ ռազմական օժանդակութիւն տրամադրելու պատրաստակամութիւնը կու գան հաստատելու այն փաստը, որ հայրենի կառավարութեան վարած բազմաբեւեռ արտաքին քաղաքականութիւնը սկսած է տալ իր դրական արդիւնքները: Նոր դաշնակիցներ կու գան լեցնելու այն բացը, որ 2020էն ասդին ստեղծուած է Հայաստանի պաշտպանական համակարգէն ներս:

Դժուարութիւններու կողքին, ականատես կը դառնանք նաեւ դրական երեւոյթներու: Հայաստանի տնտեսութեան մէջ արձանագրուող յաջողութիւնները կը յուսադրեն մեզ: Շնորհիւ փտածութեան, մենաշնորհներու եւ ստուերային տնտեսութեան դէմ մղուող պայքարին՝ պետական պիտոճէն տարուէտարի կ'ուճանայ, հնարաւոր դարձնելով ոչ միայն Հայաստանի քաղաքացիներու կենսամակարդակի բարելաւման ծրագրերը, այլեւ հայոց բանակը արդիական սպառազինութեամբ օժտելու յոյժ կարեւոր գործը:

Միւս կողմէ, Միջին Արեւելքի հայութեան վիճակը կը շարունակէ մնալ անմխիթար՝ տարածաշրջանէն ներս տնտեսական ու քաղաքական ծանր եւ անկայուն պայմաններու լոյսին տակ: Անյուսալի եւ անորոշ այս վիճակը կը ստիպէ շատերը բռնելու արտագաղթի ճամբան՝ յաճախ յայտնուելով օտար ափեր: Մեր մաղթանքն է, որ անոնք իրենց հայեացքը ուղղեն դէպի հայրենիք, եւ այդ առումով կը կարելորեն շուտափոյթ կերպով համապարփակ ներգաղթի ծրագիր մը կեանքի կոչելու ամհրաժեշտութիւնը:

Նոր տարին կը թեւակոխենք լաւատեսութեամբ, մանաւանդ ի տես 32 հայ ռազմագերիներու տուն վերադարձի բերկրալի փաստին, եւ կը յուսանք, որ 2024ը իսկապէս դառնայ խաղաղութեան տարի:

Ամանորի եւ Ս. Ծնունդի տօներուն առիթով մեր հայրենիքին կը մաղթենք յարատեւ բարեբերութիւն ու վերելք, իսկ մեր հայրենակիցներուն՝ առողջութիւն, երջանկութիւն եւ նորանոր յաջողութիւններ:

ՄԴՅԿ Կեդրոնական Վարչութիւն
01/01/2024

մտահոգութիւն կը յայտնեն, որ ան կրնայ տակնուվրայ ընել մարդկութեան կեանքը՝ իրականութիւնը եւ արհեստականը խառնելով իրար ու այդ երկուքին միջեւ զատորոշումը դարձնել գրեթէ անհնարին: «Արհեստական Բանականութիւն» կոչուող՝ օժտուած ըլլալով տեղեկութեան ահռելի պաշարներով ապագայի կրնայ փոխարինել տարբեր բնագաւառներու մէջ աշխատուածը:

2024 տարուան սեմին կը մաղթենք որ երկրագունդի վրայ դադրին պատերազմները, նուազին մարդկային տառապանքները, վերանան բնական աղէտները ու աշխարհի վրայ տիրէ ընկերային արդարութիւնն ու հաւասարութիւնը:

Նոր տարին նաեւ կը դիմաւորենք այն յոյսով որ ան կ'ըլլայ իր նախորդներէն տարբեր ու Հայաստանը կը կարողանայ ապրիլ աւելի խաղաղ պայմաններու տակ՝ իր շուրջ համախմբելով համայն հայութիւնը, որպէսզի կերտենք աւելի փայլուն ապագայ մը յաջորդող սերունդներուն համար:

Շնորհաւոր Նոր Տարի

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի Ուղերձը Ամանորի Եւ Սուրբ Ծննդեան Առթիւ

«Սիրելի ժողովուրդ, Հայաստանի Հանրապետութեան սիրելի քաղաքացիներ,

2023 թուականը մեր աչքի առաջ ահա հալուում է, եւ 2024 թուականը բոլորիս անց մեր տները կը մտնի ջերմեռանդ պատանու նման:

2023 թուականը նոյնպէս փակում ենք բարձր տնտեսական աճով եւ նախ ուզում եմ շնորհակալութիւն յայտնել այն մարդկանց, ովքեր 2023 թուականին աշխատել են, ստեղծագործել աշխատանքի մէջ, աւելացուած արժէք ստեղծել եւ վճարել օրէնքով նախատեսուած հարկերը:

Նախեւառաջ այդ մարդկանց շնորհիւ է, որ գինուորականների եւ ուսուցիչների աշխատավարձերը կրկնապատկելու հնարաւորութիւն ենք ստացել եւ այսօր մեր երկրում 450-ից մինչեւ 500 հազար դրամ աշխատավարձով ուսուցիչներ ու շարքային կազմի գինուորականներ կան:

Աշխատող, աշխատանքի մէջ ստեղծագործող եւ օրէնքով նախատեսուած հարկերը վճարող մարդկանց շնորհիւ է, որ մենք կարողացել ենք Լեւոնային Ղարաբաղի փախստական դարձած մեր քոյրերի եւ եղբայրների առաջին անհրաժեշտութեան կարիքները հոգալ:

Աշխատող, աշխատանքի մէջ ստեղծագործող եւ օրէնքով նախատեսուած հարկերը վճարող մարդկանց շնորհիւ է, որ կարողացել ենք Երրորդ Հանրապետութեան պատմութեան մէջ առաջին անգամ նուազագոյն կենսաթոշակները համապատասխանեցնել նուազագոյն պարէնային գամբիւրին:

Աշխատող, աշխատանքի մէջ ստեղծագործող եւ օրէնքով նախատեսուած հարկերը վճարող մարդկանց շնորհիւ է, որ երրորդ տարին անընդմէջ Յունուարի 1-ից կը բարձրանայ գիտաշխատողների աշխատավարձը:

Աշխատանքի մէջ ստեղծագործող, նոր գաղափարներ առաջ բերող, այդ գաղափարների իրագործման պատասխանատուութիւնից չվախեցող մարդկանց շնորհիւ է, որ 2018 թուականից ի վեր Հայաստանում 190 հազար աշխատատեղ է ստեղծուել:

Աշխատող, աշխատանքի մէջ ստեղծագործող եւ օրէնքով նախատեսուած հարկերը վճարող այդ մարդիկ արժանի են գովասանքի ու շնորհակալութեան, եւ յոյս ունեմ, որ 2024 թուականի բերած ջերմեռանդութիւնը նոր լիցք, նոր ուժ, նոր գաղափարներ կը հաղորդի նրանց: Սիրելի ժողովուրդ, սիրելի հայրենակիցներ,

Որպէս Հայաստանի Հանրապետութեան վարչապետ 6-րդ անգամ եմ Ամանորեայ ուղերձով ձեզ դիմում: Եւ միասին անցած մեր այս ճանապարհին հետհայեցքը ցաւի, ափսոսանքի բայց եւ հպարտութեան զգացումներ է յարուցում: Յաւի եւ ափսոսանքի մասին շատ ենք խօսել եւ խօսում, բայց Ամանորեայ այս երեկոյին ուզում եմ իմ խոնարհումն ու հպարտութիւնն արտայայտել բոլորիդ եւ իւրաքանչիւրիդ հասցէին, որ անտանելի բեռնէր ունենալով մեր ուսերին, կարողացանք ու կարողանում ենք մեր պետութիւնը՝ Հայաստանի Հանրապետութիւնը տանել անկախութեան ու ինքնիշխանութեան ամրապնդման բարդագոյն ճանապարհով:

Մեր անցած ճանապարհի մասին մտածելիս հասկանում եմ, որ այս



պատմութիւնը սխալ եւ ճիշտ որոշումների ըմբռնումներից անդին է եւ մենք ընթացում ենք որքան էլ դժուար, բայց եւս միակ հնարաւոր ճանապարհով, որը մեզ հնարաւորութիւն կտայ պետութիւն ժառանգել մեր սերունդներին:

Այս ճանապարհի մեծ մասն անցել ենք, բայց առջեւում նոր փորձութիւններից ու դժուարութիւններից ապահովագրուած չենք եւ մեզ հարկաւոր է չսասանուել, չերկմտել անկախ պետութիւն ունենալու եւ այդ պետութիւնը մեր սերունդներին ժառանգելու մեր վճռականութեան մէջ:

Նաեւ ուզում եմ ներողութիւն խնդրել բոլորիցդ եւ իւրաքանչիւրիցդ, Հայաստանի Հանրապետութեան բոլոր քաղաքացիներից, Լեւոնային Ղարաբաղի փախստական դարձած մեր քոյրերից ու եղբայրներից այն ցաւի համար, որ վերջին տարիներին ապրել էք:

Ներողութիւն խնդրում եմ ոչ այն պատճառով, որ ձեր առաջ ուրեւէ յանցանք եմ գործել կամ թէկուզ մէկ ակնթարթ մոռացել ձեր առաջ ունեցած պատասխանատուութիւնն ու որեւէ պարտաւորութիւն, այլ որովհետեւ գիտեմ, թէ ինչ էք զգում եւ նոյնը զգում եմ ես:

Բայց այս զգացումը որեւէ կերպ չի կարող սասանել պետութեան ղեկավարի իմ պարտքը, որից բխում է, որ իմ բոլոր որոշումներն ու գործողութիւնները պէտք է բխեն Հայաստանի Հանրապետութեան պետական շահից: Այս է պատճառը, որ ես առաջնահերթ եմ համարում մեր տարածաշրջանում մեր հարեւանների հետ յարաբերութիւնների կարգաւորման եւ խորացման բանաձեւեր գտնելը եւ շարունակելու եմ վճռականօրէն ընթացում այդ ճանապարհով՝ յանուն պետութեան, յանուն ապագայի, յանուն սերունդների:

Պետութեան ղեկավարի պարտքից է բխում, որ անհոգնել ու անընդհատ կրկնեմ, որ մենք շատ բաներ պէտք է աւելի ու ամբողջական հասկանանք, շատ բաներ պէտք է նայենք ու վերանայենք՝ անընդմէջ շահակալու համար, որ հայրենիքը պետութիւնն է:

Հայրենիքը պետութիւնն է: Սիրում ես հայրենիքդ, ուժեղացրու պետութիւնդ:

Հայրենիքը պետութիւնն է: Սիրում ես հայրենիքդ, վճարիր հարկերդ:

Հայրենիքը պետութիւնն է: Սիրում ես հայրենիքդ, բարեխալիր կրթութիւնդ:

Հայրենիքը պետութիւնն է: Սիրում ես հայրենիքդ, աշխատանքով կերտիր քո ու քո երկրի բարեկեցութիւնը, հարստացիր եւ հարստացրու:

Սա է Հայաստանի Հանրապետութեան պետական շահը: Այն ուղենիշ ու առաջնորդող պէտք է լինի բոլորիս համար եւ համոզուած եմ՝ 2024 թուականը, այդ ջերմեռանդ պատանին, պետութեան ու պետական ըմբռնման խորհրդանիշ է դառնալու մեզ համար:

Սիրելի ժողովուրդ, սիրելի հայրենակիցներ, Լցրէք բաժակները եւ յոտնկայս իմենք Հայաստանի Հանրապետութեան կենացը:

Փառք նահատակներին եւ կեցց'է Հայաստանի Հանրապետութիւնը: Կեցց'է Հայաստանի Հանրապետութիւնը: Շնորհաւոր Ամանոր եւ Սուրբ Ծննդդ»:

Հանրապետութեան Նախագահ Վահագն Խաչատուրեանի Շնորհակարական Ուղերձը Ամանորի Առթիւ

Սիրելի հայրենակիցներ, Հայաստանի Հանրապետութեան յարգելի քաղաքացիներ,

Աւարտին է մօտենում մեր պետութեան ու ժողովրդի համար ծանր կորուստներով, դժուարին փորձութիւններով, յաջողութիւններով ու ինքնիշխանութեան համար պայքարով լի 2023 թուականը:

Հեռացող տարում բազմաթիւ էին մեր երկրի համար ուժերի գերլարման ու մարտահրաւէրներին դիմակայելու դրուագները, որոնք նաեւ բազում մտորումների ու արժեւորումների տեղիք են տալիս:

Արցախահայութեան բռնի տեղահանումն իր հազարամեայ հայրենիքից, Հայաստանի ներքին ու արտաքին յաջողութիւններն ու ձախողումները, մեր երկրի տնտեսական վերելքը, հանրային կեանքում ընթացող իրադարձութիւնները ձեւաւորում են մեր պետութեան առաջնահերթութիւնները գնահատելու, մեր երկրի տեղն ու դերը փոփոխող աշխարհում ամրագրելու, հարեւանների եւ գործընկերների հետ յարաբերութիւնները յստակեցնելու հրամայականը:



Սիրելի ժողովուրդ, ես հաւատում եմ, որ հօր Հայաստան մենք կարող ենք կերտել այստեղ ապրելով ու աշխատելով, մեր գիւղն ու քաղաքը շինացնելով, գիտելիքներ ձեռք բերելով ու շարունակաբար կրթուելով, հաւատում եմ մեր պետութեան չկոտրուող ներուժին:

Վստահ եմ, որ մեր երկրի անգնահատելի հարստութիւնը քաղաքացիներն են, ամենաուժեղ գէնքը՝ մեր ժողովրդի հաւաքական կամքն ու իմաստութիւնը, վստահ եմ նաեւ, որ մեր ժողովրդին բաժին է հասած փորձութիւնները մեզ աւելի ուժեղ, ամուր ու միասնական են դարձնելու:

Սիրելի հայրենակիցներ, Տարեմուտի տօնական լոյսերի ներքոյ մաղթում եմ բոլորիս ընտանիքներին անսպառ երջանկութիւն, անվտանգ ու խաղաղ հայրենիքում արարելու բերկրանք, կերտելու ու կառուցելու կորով՝ յանուն Հայաստանի Հանրապետութեան հզօրութեան ու բարօրութեան:

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ուղերձը՝ Ամանորի Առթիվ

«Միրելի բարեպաշտ ժողովուրդի հայրենիս եւ ի սփիւռսս,

Տարեմուտի այս երեկոյ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սէրն ու բարեմաղթանքերն ենք բերում ամէնքիդ: Ամանորը սահմանագիծն է պատմութիւն դարձած օրերի եւ յուսառատ գալիքի:

Փրկչական 2024 թուականը դիմաւորում ենք խոր մտահոգութիւններով, դիմաւորում ենք ահռելի կորուստների անամոքելի ցաւը մեր սրտում: Ծանր տարի ապրեցինք, սակայն Տիրոջն ապաւինած՝ յոյսով ու լաւատեսութեամբ ենք նայում մեր ազգի ապագային: Արցախի բռնազաւթման եւ հայաթափման, Հայաստանի շուրջ ստեղծուած լրջագոյն իրավիճակով եւ առկայ հիմնախնդիրներով հանդերձ՝ հաստատակամ պիտի յաղթահարենք դժուարութիւնները՝ ամուր պահելով նուիրումն ու սէրը առ հայրենին եւ հաւատը առ մեր Ամենակալ Տէրը:

Միրելիներ, ուրախութեան, թէ նեղութեան պահերին մեր ժողովուրդը միշտ ապաւինել է Աստուծոյն, միշտ ուժ ու գորութիւն առել Բարձրեալից՝ հաւատքով, որ Աստուած մեզ հետ է: Անտարակոյս, մեր ժողովրդի հոգեւոր ներուժն ու ոգու ամրութիւնը մեզ պիտի առաջնորդեն վերհասնումի եւ հայոց կեանքի յաղթական վերընձիւղման: Մենք ժառանգներն ենք մի ազգի, որ տառապել ու շարժարուել է, բայց չի յանձնուել, ցեղասպանուել է, բայց չի կործանուել, սրտուել է, բայց չի մահացել: Արդարեւ, չի կարող ընդհատուել պատմութիւնը մի ժողովրդի, որի տարեգրութիւնը զարդարուած է աստուածապաշտութեան եւ հայրենասիրութեան հրաշալի վկայութիւններով, ապրելու եւ արարելու անընդմիջելի տենչանքով: Փորձութիւնները յաճախ են պատահում ժողովուրդների կեանքում, սակայն դժուարին իրավիճակներից յաղթանակած են դուրս գալիս այն ազգերը, որոնք աննկուն են մնում ոգով ու առ Աստուած հաւատքով եւ արիաբար դիմակայում նեղութիւններին ու մարտահրաւէրներին:

«Տերը ապաւինէն է բոլոր նրանց, ովքեր յոյսը դրել են Նրա վրայ», - ասում է սաղմոսագրուն (17.31):

Արդ, սիրելիներ, նոր տարում նորոգուենք հոգով ու մտքով, գորանանք յոյսով, ինքնաքննութեամբ անդրադառնանք մեր ընթացքին ու գործերին, սրբազրենք թերացումներն ու սայթաքումները, թող



չտանք, որ ազգային կեանքում սերմանուի ատելութիւն ու պառակտում, արմատաւորուի կործանարար շարմարուողականութիւնն ու անտարբերութիւնը:

Ապրենք հաւատքով զարդարուն կեանքով, միմեանց հանդէպ աստուածապատուէր սիրով, որպէսզի զգանք Աստուծոյ շնորհաբեր ներկայութիւնը մեզանում:

«Մեր անձերը կառուցենք հաւատի սրբութեամբ, աղօթենք Սուրբ Հոգով, պահենք մենք մեզ Աստուծոյ սիրով», - ինչպէս յորդորում է առաքեալը (Յուդա 20-21):

Միասնական լինենք Հայաստանում ու սփիւռքում եւ մեր համախումբ ջանքերը ծառայեցնենք յանուն համազգային շահերի պաշտպանութեան, հայրենեաց ու ազգի կեանքի նոր արշալոյսի կերտման:

Գիտակցենք, որ հայրենիքը այն միակ սրբազան վայրն է, որտեղ ամբարուած են բոլոր ժամանակների հայ սերունդների աղօթքներն ու երազները, որտեղ շարունակ պիտի կերտուի հայոց ինքնութիւնը, եւ որի սրբազան հողից է յաւէտ ուժ առնելու հայ ժողովուրդը: Հոգածու սիրով շրջապատենք Արցախից բռնի տեղահանուած մեր քոյրերին ու եղբայրներին, նրանց մէջ առատացնենք յոյսը, որ երբեք չմարի հայրենի Արցախ վերադարձի տեսիլքը, եւ գորեղ մնայ հաւատն առ Աստուած: Աջակից լինենք կարիքաւորներին ու նեղեալներին եւ Բարձրեալի օգնականութիւնը հայցենք անյայտ կորած եւ գերեալ մեր զաւակներին ու նրանց ընտանիքներին:

Սուրբգրական պատգամի համաձայն՝ չմոռանանք բարեգործութիւնը եւ մեր ունեցած բարիքներին միմեանց մասնակից դարձնելը, քանզի այդպիսի պատարագներն են հաճելի Աստուծոյ (Հմմտ. Եբր. 13.16), եւ այս է ճանապարհը մեր ժողովրդի բարեպաշտ ու ապահով կեանքի, այս է ճանապարհը դարաւոր ու նուիրական արժէքներով մեր ազգի եւ պետութեան լինելիութեան ու յարատեւութեան:

Սրտագինս աղօթենք, որ Երկնաւոր Տէրը խաղաղութեան մէջ պահի հայոց աշխարհը եւ ողջ մարդկութեանը, իր գորակցութեամբ յոյսի ու սիրոյ շնորհները եւ յաղթութեան պարգեւը սփռի վտանգների միջով անցնող մեր հայրենիքի ու համայն հայութեան կեանքին այսօր եւ միշտ եւ յաւիտեան. ամէն»:

ԱՄՆ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Յովնան Արք. Տէտերեանի Պատգամը Ծնունդը՝ Առաւօտը Մեր Նոր Կեանքին

Վերստին կը լուսաւորուի քրիստոնեայ աշխարհին կեանքը մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Քրիստոսի հրաշալի ծնունդովը, որուն մէջ մենք կը տեսնենք Աստուածորդու խոնարհումը երկինքէն երկիր եւ Անոր գալուստով՝ մեր առջեւ բացուող առաւօտը նոր կեանքին:

Արդարեւ, Յիսուսի ծնունդը պէտք է տեսնել եւ թարգմանել որպէս Աստուածորդու սիրոյ ճառագայթումը մարդկութեան կեանքին մէջ: Անոր ծնունդը՝ երկինքն ու երկիր իրար կապող կամուրջն է: Գիտակից ենք այս ճշմարտութեան, ինչպէս եւ կը վկայէ մեզի Աւետարանը՝ «Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտեանական կեանք ունենայ» (ՅՀ 3.16):

Նոր տարին երբեւէ չպիտի ունենար հոգեւոր տարողութիւն հաղորդող նոր կեանքի հրաւէր ու պատգամ եթէ Յիսուսի ծնունդով վերածննդեան ու անմահութեան դուռ առաջնորդող ճանապարհը չբացուէր մարդկութեան առջեւ: Նոր Տարին իր հոգեւոր պսակումը կ'առնէ Յիսուսի ծնունդով, մանաւանդ երբ մենք մեզի խոստում կը կատարենք Նոր Տարիով վերսկսող կեանքը ապրելու Քրիստոսի նմանակցութեամբ:

Մարդկութիւնը ճշմարտապէս եւ մշտապէս ինքզինք նորոգած է աստուածային սիրոյ ու իմաստութեան լոյսին հետ հաղորդակցութեամբ: Եւ Քրիստոսի ծնունդով կը կատարելագործուի հրաշքին առկայութիւնը մարդուն կեանքին մէջ, որուն այնքան պէտք ունինք ամէն օր ու ամէն ժամ, ինչպէս անցեալ ժամանակներուն, այնպէս ալ այս նորագոյն ժամանակներու ընթացքին:

Յիսուսի ծնունդը կարելի է ըմբռնել միայն ու միայն հաւատքի պրիսմայի ընդմէջէն դիտուած: Այն ատեն կ'ընկալենք այն բացարձակ ճշմարտութիւնը, որ «Խորհուրդ խորին» է Յիսուսի ծնունդը, որուն ներգործութիւնը բուժիչ բալասան է մարդկութեան հոգիներուն մէջ բացուած վէրքին:



ԱՄՆ Արեւելեան Թեմի Առաջնորդ Տ. Մեսրոպ Եպիսկոպոս Պարսամեանի Ա. Ծննդեան Պատգամը Խաղաղութեան Իշխան

Վասնզի մեզի մանուկ մը ծնաւ, մեզի որդի մը տրուեցաւ, եւ իշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ: Ան պիտի կոչուի Սքանչելի Խորհրդակից, Գօր Աստուած, Յաւիտեանականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան: (ԵՍԱՅ Թ. 6)

Խաղաղութիւնը կարեւոր թեմաներէն մին է Ս. Ծննդեան տօնին: Գեղեցիկ զարգացումը որ կը հոսի Քրիստոսի Ծննդեան պատմութեան ընդմէջէն, կը ջերմացնէ մեր սրտերը տարուան այս շրջանին:

Պատգամը հրեշտակներէն էր, որ յայտարարուեցաւ Բեթղեհէ մի դաշտերէն դուրս, աւելի քան երկու հազար տարիներ առաջ. «Փառք Աստուծոյն՝ բարձունքներու մէջ, եւ խաղաղութիւն երկրի վրայ մարդոց մէջ զոր ան սիրեց» (Ղուկ. Բ: 14):

Խաղաղութիւնը անշուշտ, բան մըն է, որուն բոլորս կը ձգտինք: Մենք կ'աղօթենք ազգերու միջեւ խաղաղութեան համար եւ ատելութեանց ու հակամարտութեանց կասեցման եւ պատերազմներու մարդկային կորուստներուն: Նոյնպէս մենք կ'աղօթենք մարդոց ներքին խաղաղութեան համար եւ հոգիներու հանդարտութեան, որոնք պիտի առաջնորդեն մեզ դիմադրելու կեանքի փորձութիւններուն խաղաղօրէն եւ շնորհալիօրէն:

Բայց սիրելի բարեկամներս, Աւետարանի Խաղաղութիւնը՝ Քրիստոսի Ծննդեան Խաղաղութիւնը, աւելի խորունկ է քան այս: Այդ, նախ եւ առաջ, խաղաղութիւն ունենալ է Աստուծոյ հետ: Այդ կը նշանակէ, որ քու հոգիդ կը նուիրես Տիրոջ, սիրելով զինքը քու բոլոր սրտովդ: Այդ կը նշանակէ վստահութիւն ունենալ Աստուծոյ ծրագրին, որ պատրաստած է քեզ համար, նոյնիսկ երբ դուն չես կրնար հասկնալ այդ բոլորը: Այդ կը նշանակէ հնազանդիլ Աստուծոյ հրաւէրին եւ ամբողջ անկեղծութեամբ ըսել. «Քու կամքդ թող ըլլայ, ով Տէր»:

Հրեշտակները երգեցին եւ Աստուած հրճուեցաւ հաստատուող այդ խոր եւ սքանչելի Խաղաղութեան, մեր Փրկչի ծնունդի միջոցաւ, Աստուծոյ Որդիին՝ Յիսուս Քրիստոսի:



ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՅԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ Սուրբ Ծնունդը

«Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ ձեր Փրկիչը ծնաւ, որ Օծեալ Տէրն է» (Ղուկ. 2.11)

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Ծնունդը «մեծ եւ սքանչելի խորհուրդ» մըն է: Մեծ եւ սքանչելի խորհուրդ ... որովհետեւ ան անմահ յայտնութիւնն է Աստուծոյ մարդեղութեան: Այլ խօսքով, Քրիստոսի մէջ Աստուած կը մարմնանար եւ կը մարդանար փրկելու համար մեղաւոր մարդկութիւնը: Բեթլեհէմի մէջ ծնող Յիսուս Մանկիկին մէջ տիեզերքի Յաւիտենական Աստուածը կը խանձարուրուէր անհիւրընկալ քարայրի մը անշուք մտուրի մը մէջ, որպէս զի ձերբազատէր մարդ արարածը մեղքի վաղնջական գերութենէն:



Ամէնէն համեստ պայմաններու մէջ ծնող այս Մանուկը պիտի մեծնար եւ պիտի դառնար մարդկութեան ամէնէն տիրական Անձնաւորութիւնը, եզակի դէմք մը, որ երբեք չընդհանրուած է մեր այս մոլորակին: Արդարեւ, կրօնական շատ առաջնորդներ եկած եւ անցած են, բայց անոնցմէ ոչ մէկը ունեցած է այն հզօր ազդեցութիւնը մարդոց կեանքերուն վրայ որչափ Յիսուս Քրիստոս, որովհետեւ ան մարդացած Աստուածն էր, էմանուէլը («ընդ Մեզ է Աստուած»), համայն տիեզերքի մեծագոյն նուէրը Արարիչէն՝ առարարած:

Նորածին Արքային ծննդեան օրը, երկնային զօրքերու բազմութիւնը, հրեշտակները, առաջին անգամ կ'երգէին հոգեգմայլ օրհներգ մը շարողութեամբ եւ յօրինուած երկինքի մէջ. «Փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. 2.14): Այս օրհներգով երկինք եւ երկիր կը միանային՝ փառաբանելու զԱստուած իր Մեծագոյն Պարգեւին՝ Տէր Յիսուսի համար: Փառաբանութեան այդ օրհներգը երկու հազար տարիներէ ի վեր կ'արձագանգէ ու կը մնայ միլիոնաւոր մարդոց սրտին ու հոգիին մխիթարանքի եւ օրհնութեան իբրեւ մեծագոյն աւետիսը:

Չուարթնոց խումբի պատկանող Տիրոջ հրեշտակներէն մէկը՝ Բեթլեհէմի հովիւներուն կը յայտարարէր. «Մի՛ վախնաք, ձեզի աւետիս մը պիտի տամ, որ ամբողջ ժողովուրդին մեծ ուրախութեան պատճառ է: Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ ձեր Փրկիչը ծնաւ, որ Օծեալ Տէրն է» (Ղուկ. 2.10):

Դաւիթի քաղաքին, Բեթլեհէմի մէջ ծնող Մանկիկը, Աստուծոյ Օծեալն է, երկար դարերէ ի վեր սպասուած Մեսիան, Փրկիչ-Թագաւորը, որուն գալուստը աւետած էին Հին Ուխտի մարգարէներէն շատեր, եւ այդ օրհնեալ օրը, Աստուծոյ հրեշտակը կ'աւետէր Անոր ժամանումը:

Այս Փրկիչ Մեսիան, սակայն, միայն մէկ ազգի Փրկիչը չէր, այլ «ամբողջ ժողովուրդին», համայն մարդկութեան: Անոր տիեզերական Փրկիչ ըլլալը կը հաստատէր Յովհաննէս Առաքեալ հետեւեալ խօսքով. «Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդին տուաւ, որպէս զի Անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ» (Յովհ. 3.16):

Այսօր, քսան դարեր յետոյ, ամբողջ աշխարհի Փրկիչ ըլլալու կոչուած Քրիստոս տակաւին ամէնուն Փրկիչը չէ: Շատեր դեռ չեն լսած Անոր սիրոյ եւ փրկութեան Աւետարանին բարի լուրը: Այդ աւետիսը «ամբողջ ժողովուրդին» աւետելու առանձնաշնորհումը եւ բարոյական պարտաւորութիւնը քրիստոնեայ հաւատացեալներու ունեւորուն վրայ կ'իյնայ: Քրիստոսի ճշմարիտ հետեւորդները իր կենդանի վկաներն են: Միթէ Քրիստոս այս պատուէրը չտուա՞ւ երբ ըսաւ. «Դուք իմ վկաներս պիտի ըլլաք՝ Երուսաղէմի, ամբողջ Հրէաստանի եւ Սամարիայի մէջ, եւ մինչեւ աշխարհի ծայրամասերը» (Գործք Առաք. 1.8): Վկայի մը պարտականութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ իր տեսածն ու գիտցածը պատմել:

Յատկանշական է նկատել, որ Բեթլեհէմի հովիւները երբ գտան նորածին Յիսուս Մանուկը, իրենց յարգանքի եւ սիրոյ տուրքը ընծայելէն ետք, վերադարձան իրենց տեղերը եւ սկսան պատմել այն բոլոր բաները, որոնք տեսան եւ լսեցին: Այլ խօսքով, անոնք ետ դարձան եւ Յիսուսի Ծննդեան աւետիսը ուրիշներու հետ բաժնելը իրենց կեանքի առաջնահերթ պարտականութիւնը դարձուցին:

Արդ, Ս. Ծնունդը թէ՛ աստուածային յայտնութիւն մըն է եւ թէ՛ մարդկային մարտահրաշք մը: Քրիստոսով՝ Աստուած մեզ կ'այցելէ եւ ապա մեր վրայ յատուկ յանձնառութիւն մը կը դնէ՝ իր վկաները ըլլալու, տարածելու սիրոյ եւ փրկութեան աւետարանը եւ քաջախելու մարդիկ որ ընդունին Աստուծոյ շնորհած նոր կեանքը Տէր Յիսուս Քրիստոսով:

Քրիստոսի Ս. Ծնունդը նոր իմաստ եւ նշանակութիւն կ'ունենայ մեզի համար երբ մեր հիւրընկալ սրտերը բանանք Նորածին Արքային եւ մեր կեանքերը նուիրենք Անոր, ինչպէս նաեւ Անոր Փրկութեան աւետարանը տանինք, ուր որ ան տակաւին չէ հասած: Երբ ասոնք իրականութիւն դառնան մեր կեանքերուն մէջ, այն ատեն արդարօրէն կրնանք յայտարարել,

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, Ձեզի, մեզի մեծ աւետիս»:

Յովնան Արք. Տոտերեան

Մարդկութիւնը այսօր աւելի քան անցեալի բոլոր ժամանակները պէտք ունի իր մէջ վերապրեցնելու տեսիլքն ու ոգին նոր կեանքին, որը պայմանաւորուած է Աստուծորդուոյն Քրիստոսի ծնունդով: Ուրեմն, Անոր Ծնունդին մէջ պիտի տեսնենք Աստուծոյ խոնարհումն ու յայտնութիւնը մարդկութեան կեանքին մէջ, Աստուածորդուոյն կեանքը դարձնելով հայելին մեր կեանքին, որպէսզի յստակութեամբ ներթափանցենք ու տեսնենք մեր ներքին աշխարհը՝ իր առաւելութիւններով ու թերութիւններով: Եւ երբ Քրիստոս է հայելին մեր ներաշխարհին, ապա ինքնաճանաչումը կը դառնայ առաւել կատարելագործուած: Յիսուսի հրաշալի ծնունդը կը տօնախմբենք ազգովին: Մեր բոլորի աղօթքը պիտի դառնայ իրական ու արդիւնաւոր, երբ խոստումը կը կատարենք Յիսուսի ծնունդով ապրելու վերածնունդը նոր կեանքին: Այս օրերուն մասնաւոր, ինչքան աշխարհը, այնքան եւս մեր ազգի զաւակունք պէտք ունին յաղթելու կեանքի մէջ առկա փորձութիւնները՝ Քրիստոսի ծննդեան խորհուրդով պայմանաւորուած: Նիւթական արժէքները երբեք չեն կրնար հաղորդել մեզ նորին խորհուրդը: Նորին խորհուրդը, նոր կեանքին աղբիւրը պիտի տեսնենք Յիսուս Մանուկի կեանքին մէջ: Այս պատկերին մանրակերտն է նաեւ իւրաքանչիւր մանուկի մը ծնունդը ընտանիքին մէջ: Եւ որպէս ծնողներ անտարակոյս կ'ըմբռնենք այս ճշմարտութիւնը, որուն անսահմանելի տարողութիւնը ամփոփուած է Յիսուս Մանուկի հրաշալի ծնունդին մէջ:

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ,
Օրհնեալ է Յայտնութիւնը Քրիստոսի
Տօնախմբենք Յիսուսի աստուածային եւ հրաշագործ ներկայութիւնը մեր անհատական թէ՛ հաւաքական կեանքին մէջ: Տօնախմբենք խոր համոզումով, որ Յիսուսի ծնունդը մեր հոգիներու խորքին մշտապէս արթուն պիտի պահէ կոչումը քրիստոնէական, կարօտը հայրենական, տեսիլքը՝ մեր նախնեաց արեամբ նուիրագործուած հողին, ազատատենչ ոգին Արցախի, հաւատքը հայ ընտանեկան սրբութեան նկատմամբ, մեր խոնարհումը մեր ազգային ու եկեղեցական անկորնչելի արժէքներուն նկատմամբ, զոհաբերածումը նորահաս հայ պատանիին ու երիտասարդին հանդէպ, գիտութեան մէջ զարգանալու ձգտումը, ծառայութեան տենչը եւ վերջապէս Սբ. էջմիածնի յաւիտենական խորհուրդին հաւատարմութեան ուխտը:

Միբլի հայ քրիստոնեայ,
Նորածնունդ դարձիր Յիսուսի ծնունդին ընդառաջ, քո հոգու մէջ կրէ մանուկ Յիսուսը, քայլէ Յիսուսի հետ, որպէսզի զօրացած Անոր աստուածային զօրութեամբ ու իմաստութեամբ՝ քո մէջ չեզոքացնես տկարութիւնը եւ կեանքը իմաստաւորես անընդհատ նուաճումներով, ստեղծագործ կեանքով, եւ ի մասնաւորի այն գիտակցութեամբ, որ մեր կեանքը կը պատկանի Աստուծոյ եւ կ'իմաստաւորուի մէկզմիւսով:
Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ,
Օրհնեալ է Յայտնութիւնը Քրիստոսի
Թող մանուկ Յիսուսի ծնունդին մէջ իր կեանքի նոր առաւօտը ապրի Մայր Հայաստանը, մեր Սուրբ Եկեղեցին ու ազգը. Ամէն:
Օրհնութեամբ՝
ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՏԷՐԵԱՆ
Առաջնորդ՝ ԱՄՆ Արեւմտեան Թեմի
6 Յունուար 2024

S. Մեսրոպ Եպիսկոպոս Պարսամեան

Եւ ի՞նչ ըսել տարբեր տեսակի խաղաղութեանց մասին: Ի՞նչ ըսել ազգամիջեան խաղաղութեանց մասին: Հոգիի ներքին խաղաղութեան մասին: Անոնք եւս գանձեր են, որոնք մեր Երկնաւոր հայրը ճշմարտապէս կ'ուզէ որ մենք ունենանք: Բայց մենք չենք կրնար ունենալ անոնք, առանց նախ խաղաղութեան մէջ մտնելու Աստուծոյ հետ:
Այդ ընելու համար, մենք պէտք է ընդունինք, որ որպէս մարդկային տկար արարածներ, պէտք ունինք իր փրկութեան: Եւ մենք պէտք է գիտակցինք եւ ցնծանք, որ Աստուծոյ սէրը մեր հանդէպ այնքան շատ է, որ Ան իր վրայ առաւ մեր մարդկային սահմանափակումները, մեր ցաւն ու վիշտը եւ ինքը ենթարկուեցաւ Մահուան, որպէսզի մեզի աեւ յօտենայ եւ շնորհէ Յաւիտենական կեանք:

Աստուծոյ մարդեղութիւնը որպէս Յիսուս Քրիստոս՝ իր այդ ծնունդը որպէս խոնարհ մանուկը
Բեթլեհէմի մէջ, մեր միակ եւ յատուկ ճանապարհն է այդ մեծ նուէրին: Քրիստոս այս աշխարհը եկաւ, որպէսզի խաղաղութիւն հաստատէ: Բայց մենք չենք կրնար խաղաղութիւն ունենալ, եթէ նախ չ'ողջագուրուինք իր հետ, որպէս մեր Տէրն ու Փրկիչը:

Ահա այս մտածումներով սիրելի բարեկամներս, կ'աղաչեմ ձեզ, այս Ծնունդը առիթ մը թող ըլլայ, Յիսուս Քրիստոսի հետ ձեր յարաբերութեան վերանորոգման: Յիսուսի ողջ ժամանակաշրջանին կարգացէ՛ք Սուրբ Գրական ընթերցումներ, խորհրդածեցէ՛ք աղօթքով, միացէ՛ք եկեղեցւոյ սուրբ ծոմապահութեան եւ պաշտամունքի սովորութեանց: Այս Ծննդեան տօնին ձեր թանկագին ժամանակը անցուցէ՛ք ձեր սիրելիներուն հետ եւ մի՛ մոռնաք անոնց, որոնք ձեր օգնութեան կարիքը ունին:

Ծննդեան այն մեծ օրը, երբ մեր եկեղեցին անգուզականօրէն Յունուարի 6-ին կը տօնէ, միացէ՛ք Ս. Պատարագին, ձեր հաւատակիցներուն հետ յայտարարելու՝ Աւետիսը Քրիստոսի Ծննդեան եւ Աստուածայայտնութեան ու ստանալու Սուրբ Հաղորդութիւն: Շատերուն համար այս անկայուն օրերուն, եկէ՛ք բանանք մեր սրտերը Խաղաղութեան իշխանին:

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ:
Օրհնեալ է Յայտնութիւնը Քրիստոսի:
Աղօթիւք եւ օրհնութեամբ՝
ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ
Յունուար 2024

Սպիտակ Ու Սրտուած Էջեր Եւ Մեծ Պատկերը ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

«Մասիս» շաբաթաթերթին համար մեր գրած առաջին յօդուածը լոյս տեսաւ 19 Հոկտեմբեր 1991-ի թիւին մէջ, «Որպէսզի չհրկնուին անցեալի սխալները» խորագրով: Մինչ այդ, երկու տարիէ ի վեր հաստատուած էինք ԱՄՆ եւ մօտէն կը հետեւէինք տեղւոյս հայկական մամուլի անդրադարձներուն՝ Սովետական Միութեան փլուզման, Հայաստանի անկախութեան եւ համաշխարհային այլ գարգացումներու մասին: Այդ յօդուածին մէջ կը գրէինք. «Թէ ի՞նչ վիճակով պիտի դուրս գանք այս թոհոբոհէն, ապագայ պատմութիւնը պիտի վկայէ այդ մասին: Մէկ բան պէտք է յստակ ըլլայ բոլորին, որ որպէսզի կարենանք դէպքերու ընթացքը լաւագոյնս ծառայեցնել մեր նպատակներուն, պէտք է ազգովին գիտակցինք պահի լրջութեանը, ըլլանք իրապաշտ ու իրատես, եւ ըստ այնմ գործենք, հեռու ամէն տեսակ նեղմիտ ու հատուածական մտածողութիւնէ»: Անմիջապէս կը շարունակէինք. «Դժբախտաբար, թերթատելով մեր մամուլը, յուսախաբ կ'ըլլանք ի տես գրապարտութիւններու, ակնյայտ սուտերու, խեղաթիւրումներու, ամբոխավարական եւ այլ տեսակի գրութիւններու...»: Մեր յօդուածը կ'աւարտէինք հետեւեալ խօսքերով. «Այսպէս չի՛ ստացուիր պարոնայք: Այս ընթացքով նորանոր դժբախտութիւններու դուռ կը բացուի: Ի սէր մեր բազմաշարժար ազգին, վերջ տուէք այս ազգակործան ընթացքին, որպէսզի չհրկնուին անցեալի սխալները»:

Անցած աւելի քան 30 տարիներու ընթացքին, մեր հրատարակած աւելի քան 300 յօդուածներու ընդմէջէն, շեշտեցինք սկզբունքային եւ անաչառ մտածելակերպ դրսեւորելու կարեւորութիւնը, մեր դիմագրաւած խնդիրները անշահախնդիր վերլուծման ենթարկելու անհրաժեշտութիւնը, հատուածական մտածողութեան վնասաբերութիւնը, ազգային արեւելում ունենալու էականութիւնը, օտարին գործիք չդառնալու գիտակցութեան ընկալումը, մեծ պատկերը տեսնելու եւ ըստ այնմ մեր ազգային շահը անոր համընկեցնելու դիւանագիտութեան ըմբռնումը, եւ նմանօրինակ մօտեցումներով առաջնորդուելու հիմնականութիւնը:

26 Մարտ 1994-ին լոյս տեսած մեր «Սփիւռքի մրտուած էջերը» յօդուածին մէջ կը գրէինք. «Ինչպէս Խորհրդային Հայաստանը ունի իր «սպիտակ էջերը», որոնք կարօտ են լուսաբանութեան, այնպէս ալ Սփիւռքը ունի իր «մրտուած էջերը», որոնք կարօտ են յստակացման: Ու այնքան ատեն, որ «սպիտակ ու մրտուած էջերը» կը մնան լուսաբանութեան եւ յստակացման կարօտ, այդքան ժամանակ ազգովին պիտի շարունակենք տառապիլ անոնց ստեղծած ժխտական երեւոյթներէն ու պատճառած վնասներէն: Որովհետեւ կարելի չէ ապագայի վառ յոյսեր տածել, երբ անցեալի կեղծիքն ու խաբեբայութիւնը կը յամենան քարշ տալ իրենց գոյութիւնը եւ ազդել մեր առօրեային վրայ... Որքան շուտ հարթուին անցեալի վէճերը՝ այնքան շուտ կը վերանան վերապահութիւնները, տեղի տալով համերաշխական միջոցառումի մը գոյառման, որ պիտի խթանէ լուռ մեծամասնութիւնը, դուրս գալու իր կրաւորական վիճակէն եւ աշխոյժ ու գործօն մասնակցութիւն բերելու մեր նորանկախ պետականութեան հզօրացման ու բարգաւաճման աշխատանքին»:

23 Սեպտեմբեր 1995-ին, Հայաստանի անկախութեան 4րդ տարեդարձին առթիւ լոյս տեսած մեր «Ազգային արեւելում» յօդուածին մէջ կը գրէինք. «Մեր ժողովուրդը ունի՛ ներուժը ազատ ու անկախ հայրենիք պահելու: Պէտք է ինքնավստահ ըլլանք այս գծով: Ո՛չ մէկ շեղում այս նպատակէն, որքան ալ գրաւիչ ըլլան օտարներու կողմէ եկած խաջները: Վկայ՝ մեր պատմութիւնը, որմէ պէտք է գիտնանք վերջնէլ պէտք եղած դասերը: Արդարեւ, մեր վերջին 300 տարուայ պատմութեան մէջ բազմիցս փորձեցինք օտարի միջոցաւ տիրանալ մեր անկախութեան: Թակեցինք եւրոպական եւ այլ տերութեանց դռները: Արդիւնքը եղաւ այն, որ ամէն անգամ, որ անոնք պատասխանեցին մեզի, այդ ըրին բացառապէս մեկնած իրենց շահերէն, եւ ոչ թէ մեզի օգնելու նպատակաւ: Աւելին, օգտագործեցին մեզ, իրենց շահերը առաջ քշելու համար ու ամէն անգամուն մենք արիւնաքամ դուրս եկանք այդ փորձերէն»: Մեր անկախութիւնը ամբողջով գծով մեր առաջարկներու շարքին կը նշէինք. «Գործնականօրէն ցոյց տանք, որ լիուրի կ'ըմբռնենք ու կը հետեւինք Խորհեանի ու Չարենցի պատգամներուն եւ ոչ թէ ներքին պառակտումներով օտարի միջամտութիւնը հրաւիրենք մեր տունէն ներս: Չտարուինք սին ու երազային խոստումներէ ու յոյսերէ, ուրկէ որ ալ գան ատոնք: Ո՛չ արդարութիւն հայցենք աջէն ու ձախէն եւ ո՛չ ալ յետոյ, յուսախաբ ու վիրաւոր՝ թքնենք այդ արդարութեան երեսին: Այլ գիտակցինք՝ որ այդ արդարութիւնը ըստուած ուղղակիօրէն կ'ապուած է մեր ուժին: Կ'ամբարե՞նք այդ ուժը՝ կը պահանջենք ու կը տիրանանք մեր իրաւունքներուն: Չե՞նք ամբարե՛ր՝ մեր պահանջը կը դառնայ

ծիծաղելի, կը խեղճանանք ու կ'արհամարհուինք աջէն ու ձախէն: Խիզարի եւ անաչառ քննադատութիւններով ստեղծենք այնպիսի միջոցառում, որ ոչ ներքին եւ ոչ ալ արտաքին պատեհապաշտներ յաջողին նորանոր փորձանքներ բերել մեր ազգի գլխուն: Ողջմիտ ղեկավարութիւնն ու հասարակութիւնը լաւագոյն գրաւականներն են ամէն տեսակի չարաշահութեանց, սպիթաքումներու եւ շեղումներու դէմ»: Մեր յօդուածը կ'աւարտէինք հետեւեալ խօսքերով. «Մեր սերունդին վիճակուած է պատմական այն հազուադէպ պահը՝ սրբագրելու անցեալի սխալները եւ նոր դարաշրջան մը բանալու մեր պատմութեան մէջ: Գործենք այդ գիտակցութեան ամբողջական պատասխանատուութեամբ»:



«Թող չփորձեն ժողովրդին մոլորեցնել, ասելով թէ փոխզիջումն այլընտրանք ունի: Փոխզիջման այլընտրանքը պատերազմն է: Փոխզիջման մերժումը եւ մաքսիմալիզմը (առաւելագոյնը եւ ոչ թէ հնարաւորը ձեռք բերելու ձգտումը) Ղարաբաղի իսպառ կործանման եւ Հայաստանի վիճակի վատթարացման ամենակարծ ճանապարհն է: Խօսքը չի վերաբերում Ղարաբաղը տալուն կամ չտալուն: Խօսքը վերաբերում է Ղարաբաղը հայկական պահելուն: 3000 տարի այն բնակեցուած է եղել հայերով եւ 3000 տարի յետոյ էլ պէտք է բնակեցուած լինի հայերով: Իմ ընտրած ուղին ապահովելու է այդ հեռանկարը եւ հնարաւորութիւնները, պահպանելու, հասնելու մեր բաղձալի նպատակին: Արկածախնդիրների ուղին տանելու է դէպի անխուսափելի պարտութիւն»:

ԼԵՈՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Բազմաթիւ են մեր յօդուածները, ուր բերելով օրինակներ Մաշտոցի, Խորենացիի, Ռաֆֆիի, Թումանեանի, Կոմիտասի, Քաջազնունիի եւ այլոց մտքի գոհարներէն, մենք ջանացած ենք ցոյց տալ թէ ինչպիսի՞ դասեր պէտք է քաղենք անոնց փորձառութիւնէն, յօգուտ ամբողջի, այսինքն ազգի բարեկաման, ամուր պետականութեան կայացման, ինքնաճանաչման զարգացման, եւ այլն: Դասեր նաեւ, թէ ինչպիսի աղէտներու կրնան յանգեցնել անձնասիրութիւնն ու հատուածամոլութիւնը, ինքնախաբէութիւնը, անիրատեսութիւնը կամ ցանկութիւններու տրուելը, գոռոզութիւնն ու մեծամտութիւնը, եւ այլն: Մեր պատմութիւնը հարուստ է դասերով, որոնք եթէ ընկալած ըլլայինք, շատ աւելի բազմամարդ, բարգաւաճ ու մեծ պետութիւն մը կ'ունենայինք այսօր: Խորենացիի նշանաւոր «Ողբ»-ը ինքնին լաւագոյն, այսպէս ըսած, ճանապարհային քարտեան է առողջ հասարակութիւն եւ ամուր պետականութիւն կերտելու: Անկէ շատ ետ չմնար «Սասնայ Մռեր» դիւցազնավէպը իր դասերով: Ինչո՞ւ համար չենք յաջողած այդ դասերը ընդհանրացնել մեր ժողովուրդի մտածելակերպին մէջ: Արդեօ՞ք հայ անհատին մէջի գերակշռող անձնասիրութիւնն է պատճառը, որ յօգուտ իր շահին կը պղտորէ Չուրը, կը մրտէ իրականութիւնը եւ արգելք կ'ըլլայ մեծ պատկերը տեսնելու եւ համազգային շահը հետապնդելու անհրաժեշտութեան: Ինչո՞ւ համար ձախողեցանք անսալ մեր Ա. Հանրապետութեան անկման պատճառներուն մասին Քաջազնունիի կատարած քննական վերլուծումներուն, որպէսզի խուսափէինք կրկնելէ նոյն սխալները: Չանսացինք նոյնիսկ Քաջազնունիին «տարիքը առած մի մարդ» բնութագրութեամբ այսպանող վրացեանին, որ գրեց. «Մաքսիմալիզմը, որի առանձնապէս անգիշող ներկայացուցիչներն էին գաղութներուց եկած ընկերները, գլխաւոր պատճառը եղաւ Հայաստանի գլխուն եկած յետագայ աղէտները»: Բայց հեռուն չ'երթանք: Մէջբերենք փոքր

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ.

ՃՈՐՃ ԵՒ ԺՈՒԼԻԱ ՕԳՆԱՆՅԱՆ

Սպիտակ Ու Մրոտուած Էջեր Եւ Մեծ Պատկերը

Հատուած մը մեր ժամանակակից, նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի «Պատերազմ, թէ՛ խաղաղութիւն. լրջանալու պահը» յօդուածէն, հրատարակուած Նոյեմբեր 2, 1997-ին: «Թող չփորձեն ժողովրդին մոլորեցնել, ասելով թէ փոխզիջումն այլընտրանք ունի: Փոխզիջման այլընտրանքը պատերազմն է: Փոխզիջման մերժումը եւ մաքսիմալիզմը (առաւելագոյնը եւ ոչ թէ հնարաւորը ձեռք բերելու ձգտումը) Ղարաբաղի իսպառ կործանման եւ Հայաստանի վիճակի վատթարացման ամենակարճ ճանապարհն է: Խօսքը չի վերաբերում Ղարաբաղը տալուն կամ չտալուն: Խօսքը վերաբերում է Ղարաբաղը հայկական պահելուն: 3000 տարի այն բնակեցուած է եղել հայերով եւ 3000 տարի յետոյ էլ պէտք է բնակեցուած լինի հայերով: Իմ ընտրած ուղին ապահովելու է այդ հեռանկարը եւ հնարաւորութիւնները, պահպանելու, հասնելու մեր բաղձալի նպատակին: Արկածախնդիրները ուղին տանելու է դէպի անխուսափելի պարտութիւն: Մենք մի անգամ արդէն, Ստամպուլը արեան ծով դարձնելով, կորցրել ենք Արեւմտահայաստանը, իսկ մի այլ անգամ՝ պահանջելով Սեւրի դաշնագրով գծուած տարածքները, կորցրել ենք Արեւելահայաստանի կէտը»:

Ոչ անսացինք նախագահի դիտարկումներուն եւ ոչ ալ շինիչ քննարկումներու ենթարկեցինք իր մօտեցումները, այլ անմակարդակ ու փողոցային վանկարկումներու արժանացուցինք: Նոյնիսկ այսօր, երբ իր դիտարկումները արդարացուած են, մարդիկ կը խուսափին առերեսուելու այդ իրականութեան հետ, որովհետեւ այդպէս վարուելով պիտի բացայայտուի իրենց սխալն ու թերութիւնը: Հետեւաբար, կը շարունակեն պղտորել ջուրերը եւ աղաւաղել պատմութիւնը, իրենց հատուածական շահը գերադասելով ազգային շահէն: Այս մեր ցաւն է, որմէ չենք կրցած ձերբազատուիլ: Այս մասին ալ արտայայտուած ենք 29 Մարտ 2003-ին հրատարակուած մեր մէկ յօդուածով, որ կը կրէր «Մեր ցաւը. Խաբկանքն ու կեղծիքը հայրենիք չեն կերտեր» խորագիրը: Այդ յօդուածը կը սկսէինք հետեւեալ պարբերութեամբ. «Ազգասիրութեան պակասն է մեր ցաւը: Եսասիրութիւնը եւ կոյր հատուածամոլութիւնն է մեր ցաւը: Երկու չափ երկու կշիռի սխալ քաղաքականութիւնն է մեր ցաւը: Արտասանուող խօսքի եւ կիրարկուող գործի հակասութիւնն է մեր ցաւը: Անկեղծութեան եւ ազնուութեան պակասն է մեր ցաւը: Պատեհապաշտութիւնն է մեր ցաւը: Արդար եւ անաչառ սկզբունքային մօտեցումներու պակասն է մեր ցաւը... Յաւեր, որոնք պատճառ կը հանդիսանան մեր ժողովուրդի պառակտման ու բեւեռացման եւ հուսկ՝ մեր ազգային յառաջխաղացքի ձախողման»:

Աւելի քան հարիւրամեակ մը անցած է Թումանեանի խօսքերէն եւ տակաւին կը շարունակենք ընթանալ նոյն ճանապարհով: Ինչո՞ւ: Որովհետեւ մեղաւորները պատասխանատուութեան չեն կանչուիր: Ու կը շարունակուի էջերու մրոտումը, մոռացութեան ենթարկելով նոյնիսկ հատ ու կենտ խոստովանութիւններ, ինչպիսին էր Ջաւադեանի խօսքը Ակնունիին՝ «Իթիհատը խաբեց Դաշնակցութեան»:

Ուրիշ օրինակ մըն ալ է Շահնուրի եւ Շաւարշ Նարդունիի միջեւ եղած մտերմիկ գրոյց մը 1968-ի Մայիսին, ուր երկրորդը կ'ըսէ առաջինին, որ գաղափարապէս մօտեցած է անոր տեսակէտներուն: Սակայն ամիս մը չանցած, հրապարակաւ կը յայտարարէ ճիշտ հակառակը: Երբ Շահնուր կը դիմագրաւէ գինք, պատասխանը կ'ըլլայ. «Անիկա ժողովուրդին համար էր»: Շահնուրի մեկնաբանութիւնը այս մասին՝ «Ա՛յս է դժբախտութիւնը: Կը քարոզեն բան մը, որուն իրենք ալ չեն հաւատար»:

Վերնախաւ եւ ժողովուրդ յարաբերութեանց մասին ալ զանազան առիթներով անդրադարձած ենք մեր յօդուածներուն մէջ: 7 Յունուար 2006-ին հրատարակուած մեր ««Խելացի» վերնախաւ եւ «ապուշ» ժողովուրդ» յօդուածը կը սկսէինք հետեւեալ պարբերութեամբ. «Ինչպիսի՞ ազգ ենք մենք եւ ինչպիսի՞ պետութիւն կ'ուզենք կառուցել: Մեր դարաւոր պատմութեան ընթացքին օտարին կողմէ հարստահարուած, բռնազաղթուած եւ կոտորակուած ըլլալու փաստը մեզ պէտք է մօտեցնէ իրարու ու մէկս միւսին գորավիզ դարձնէ: Անկախ պետականութիւն ունենալու մեր դարաւոր երազը մեզ պէտք է մղէ հոգածու դառնալու եւ ամէն գնով սատարելու մեր նորանկախ պետութեան ամրակայման ու հզօրացման: Օտարին կողմէ յաճախ խաբուած ու չարաշահուած ըլլալու փաստը մեզ պէտք է մղէ գէթ իրար հանդէպ անկեղծ ու անաղարտ յարաբերութեանց որդեգրումով եւ ներքին համերաշխութեան ամրապնդումով դէմ դնելու դուրսի խայծերուն ու դաւադրութեանց: Այո՛: Այո՛: Այո՛»:

Ապա կը թուէինք օրինակներ, որոնք հակառակն էին մեր այս նշած անհրաժեշտութեանց: Յօդուածի կէսերուն կը գրէինք. «Մեր մեծագոյն մտահոգութիւնը այն խրամատն է, որ տակաւ կը լայննայ ժողովուրդի եւ վերնախաւի միջեւ, ու այն վիճակն է, որուն կը մատնուի ժողովուրդը: Ժողովուրդը երկրի մը ապագայի երաշխիքն է...Մեզ մտահոգողը ղեկավար դիրքերու հասած այդ վերնախաւի վերաբերմունքն է ժողովուրդի նկատմամբ: Անոնք որոնք ինքզինքնին խելացի համարելով կը հարստահարեն ժողովուրդը, զայն ապուշի տեղ դնելով: Անոնք, որոնք ինքզինքնուն առանձնաշնորհումներ կու տան ու կ'արհամարհեն ժողովուրդը ու անոր իրաւունքները: Անոնք, որոնք դրամը արժեքափ կը դարձնեն մարդկային յարաբերութեանց, այսպիսով սպաննելով էականը՝ մարդկային արժանապատուութիւնը: Մեզ մտահոգողը անվստահութեան այն մթնոլորտն է, որ յառաջացած է ժողովուրդի եւ վերնախաւի միջեւ: Այս անվստահութեան արդիւնք է ժողովուրդի կրակորականութիւնը: Իսկ երկիր մը, որուն ժողովուրդը կրակորական է, մասնակից չէ իր ապագայի կերտման գործընթացին, այդ երկիրը կործանման ճամբուն վրայ կ'ըլլայ»:


Մեր յօդուածը կ'աւարտէինք հետեւեալ խօսքերով. «Ժամանակը մեր դէմ կ'աշխատի: Տնտեսական շահերով առաջնորդուող մեծ տէրութեանց համար Ազգայնականը աւելի ու աւելի գրաւիչ կը դառնայ եւ մենք որպէս ազգ, անգամի մը համար եւս պիտի ծախուինք միջազգային շուկային վրայ: Եւ մեր գինը՝ իր ժողովուրդի հաշտոյն հարստացած վերնախաւի մը ապահոված շահը պիտի ըլլայ: Վերնախաւ մը, որուն համար ժամանակը կը սահմանափակուի աշխարհի վրայ իր կեանքի տեղողութեան տարիներով եւ ոչ թէ ազգի կեանքով ու ճակատագրով: Շահ մը, որ արդէն մեր շահը չէ, քանի որ օտարին կը ծառայէ: Տայ Աստուած, որ մենք սխալած ըլլանք մեր դատողութեանց մէջ, որպէսզի անգամի մը համար եւս չանհոնք մեր բախտը եւ չողբանք մեր կորուստները»:

Դժբախտաբար, ժամանակը ցոյց տուաւ, որ սխալած չէինք մեր դատողութեանց մէջ: Այս բոլորի լոյսին տակ, կարիքը կա՞յ անգամի մը համար եւս շեշտելու, որ մեր դժբախտութեանց հիմքը մեր եսապաշտութիւնն է. մեր անձնական ու հատուածական շահերու գերադասումը՝ ի հեճուկա հաւաքական ու ազգային շահի:

Արդեօ՞ք մեր այս վերջին ահաւոր աղէտը՝ Ղարաբաղի հայաթափումը ի վերջոյ զգաստութեան պիտի բերէ մեր ազգի հատուածները, որ անսան Չարենցեան պատգամին, թէ՛ պիտի շարունակուի մեր գահավէժ ընթացքը:

Արդեօ՞ք մեր այս վերջին ահաւոր աղէտին՝ Ղարաբաղի հայաթափման մեղաւորները պիտի կանչուին պատասխանատուութեան:

Արդեօ՞ք վերջապէս պիտի կարենանք լուսաբանել եւ յստակացնել մեր «սպիտակ» ու «մրոտուած» էջերը, որպէսզի պարզուի մեծ պատկերը եւ ըստ այնմ համերաշխօրէն լծուինք մեր ազգային շահերու հետապնդման:



«Մենք թէ դրսից, թէ ներսից քանդեցինք մեր երկիրը: Գլխաւորապէս մենք: Մենք ենք ասում, եւ սրա մէջն է ճշմարտութիւնը: Մի մասը խանգարող սրիկաներ, մի մասը գողեր ու աւազակներ, մի մասը ապիկար թշուառականներ... էսքան աղէտների ու պարտութիւնների մէջ ոչ մի մեղաւոր չեք եւաց, ոչ ոք պատասխանատուութեան կանչուեց, ոչ ոք պատասխան տուեց: Եւ շարունակուում է, այժմ էլ նոյն նոյն ճանապարհներով»

Յովհաննէս Թումանեան

Մեզի համար վրդովելին այն է, որ գիտակցելով հանդերձ մեր ցաւերուն, ազգովին լծուած չենք անոնց բուժման եւ վերացման: Կը շարունակենք տուայտիլ ու նահանջել, երբ մեր աչքին առջեւ են ախտաճանաչուած ու դարմանը, Խորենացիէն մինչեւ Թումանեան եւ այսօր, մանաւանդ մեր գլխին անցած աղէտներու հետօրեակին: Նշեցինք Խորենացիի «Ողբ»ը, որ յաջորդեց Արշակունեաց թագաւորութեան անկման: Նշենք նաեւ Թումանեանի մէկ խօսքը, որ յաջորդեց Եղեռնին եւ Ա. Հանրապետութեան անկման. «Մենք թէ դրսից, թէ ներսից քանդեցինք մեր երկիրը: Գլխաւորապէս մենք: Մենք ենք ասում, եւ սրա մէջն է ճշմարտութիւնը: Մի մասը խանգարող սրիկաներ, մի մասը գողեր ու աւազակներ, մի մասը ապիկար թշուառականներ... էսքան աղէտների ու պարտութիւնների մէջ ոչ մի մեղաւոր չեք եւաց, ոչ ոք պատասխանատուութեան կանչուեց, ոչ ոք պատասխան տուեց: Եւ շարունակուում է, այժմ էլ նոյն նոյն ճանապարհներով»:

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.

ԺԻՐԱՅՐ ԵՒ ՍԻՄԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Ժողովրդավարութիւնը Արեւելեան Երկիրներու Մէջ ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Սովետ Միութեան փլուզումէն առաջ Արեւմուտքը, Ամերիկայի առաջնորդութեամբ, համայնավարութեան վտանգը կանխելու համար իր արտաքին քաղաքականութիւնը նենգաբար հիմնած էր ժողովուրդներու ազատութեան իրաւունքները պաշտպանելու եւ ամրապնդելու սկզբունքին վրայ: Սակայն Ամերիկայի պաշտպանած բռնատիրութիւնները Լատին Ամերիկայի մէջ՝ Չիլիէն մինչեւ Արժանթին, Պրագիլ ու Պոլիվիա, հակառակը փաստեցին:

Եւ հիմա որ համայնավար վարչակարգերը այլեւս վտանգ չեն ներկայացներ, Արեւմուտքը անգամ մը եւս նենգաբար իր արտաքին քաղաքականութիւնը հիմնած է ժողովրդավարութիւն տարածելու սկզբունքին վրայ:

Ժողովրդավարութեան տենչով տոգորուած Միջին Արեւելքի արաբ ժողովուրդները 2010-էն առկին, Արեւմուտքի աչքին եւ քիթին տակ, իրենց «Արաբական գարուն»-ներով այրած աւերակներու վրայ նստան:

Հայաստանն ալ, 20 տարուան բռնատիրութենէ ետք, ժողովրդավարութիւն ընտրելով 2018 թուականին՝ նայեցաւ ժողովրդավարութիւն առաջադրող Արեւմուտքին, ու այդ ընելով հրահրեց զայրոյթը բռնատէր Ռուսիոյ, որու արդիւնք որպէս՝ շատ սուղ վճարեց, առանց Արեւմուտքէն յուսացուող որեւէ շօշափելի օժանդակութեան:

Ուրեմն ժողովրդավարութիւնը, որ լաւագոյն ձեւով կը կիրարկուի Արեւմուտքի մէջ, երբ արտածուի բռնատէր երկիրներ կամ անոնց շուրջ գտնուող երկիրներ, վնասաբեր կը դառնայ: Արաբիստանը քայքայուած է, Ուքրանիան աւերուած է, Վրաստանը մասնատուած է, եւ Հայաստանն ալ խաչուած ու ընկճուած է:

Շատեր իրաւամբ կ'ուզեն հարց տալ, թէ ի՞նչ արժէք ունի ժողովրդավարութիւնը, եթէ անոր համար արաբին «գարունը» աղէտալի պիտի դառնար, Ուքրանիոյ ազատութիւնը պատերազմի դուռ պիտի բանար, Վրաստան պիտի մասնատուէր, եւ հայուն ալ արժանապատուութիւնը, պատերազմի պարտութեամբ եւ Արցախի կորուստով, պիտի ոտնակոխուէր:

Արեւելեան աշխարհի քաղաքական անցեալի էջերը լեցուն են Արեւմուտքին սադրանքներով, եւ ամէն ինչ, որ Արեւմուտքէն կը ստացուի քաղաքականութիւն կոչուող ծրագրի կամ յայտագրի բնաբանով (theme), պէտք է կասկածելի թուի՝ մինչեւ հակառակը փաստուի:

Արեւմտեան աշխարհի բարքերը չեն համընկնիր արեւելեան աշխարհի բարքերուն:

Ժողովրդավարութիւնը կը պահանջէ հաւաքական ղեկավարութիւն, որ կ'ընտրուի արդար ու անկողմնակալ ընտրութիւններով: Արեւելքի մէջ մարդիկ կը նախընտրեն հետեւիլ ազդեցիկ ղեկավարի մը, որ իշխանութեան տիրանալով բռնատէր կը դառնայ:

Ամերիկայի Տանըլտ Թրամփը, հակառակ Ամերիկայի ժողովրդավար վարչակարգին, բռնատէր դառնալու հակումներ ունեցաւ եւ տակաւին ունի՝ վերընտրուելու տենչով: Ամերիկայի մէջ տակաւին իմաստութեան տէր մարդիկ կը փորձեն ձախողեցնել անոր բռնատիրական ձգտումները՝ ապակինելով իրենց օրինակելի օրէնքներուն, որոնց նմանը քիչ թէ

մարդ գտնէ ուրիշ երկիրներու մէջ:

Ժողովրդավարութիւնը իսկապէս լաւագոյն ձեւով կը կիրարկուի Ամերիկայի մէջ եւ «բոլորը օրէնքին առջեւ հաւասար» նշանաբանին տակ նախագահ կը դառնեն:

Հոս ալ սակայն մարդու հաւասարութիւնը կը սկսի ու կը վերջանայ քուէատուփերու կեդրոններուն մէջ: Երկրի նախագահն ու հասարակ քաղաքացին այդ կեդրոնին մէջ կը հաւասարին՝ երկուքն ալ մէկ ձայնի քուէարկութեամբ: Ժողովրդավարութիւնը ասկէ աւելի լաւ միջոց չունի մարդս մարդուն հետ հաւասար իրաւունքներով օժտելու: Ընտրութիւններէ առաջ եւ վերջ պարագան ուրիշ կը դառնայ:

Նիւթական ներդրումները եւ կամ զօրաւորին թաթը ընդհանրապէս, եթէ ոչ միշտ, մեծապէս կ'որոշեն ընտրութիւններուն արդիւնքը: Ընդհանրապէս կ'ըսուի, թէ փոքր գողերը կախաղան կը հանուին, իսկ մեծ գողերն ալ պետական պաշտօններու վրայ կը դրուին կամ կ'ընտրուին:

Այս պարագան բացառութիւն ճանչցաւ Հայաստանի մէջ, ուր, հակառակ ընդդիմադիր կողմին նիւթական առատ ներդրումին եւ զօրաւոր Ռուսիոյ գաղտնի աջակցութեան, իշխանականները արդար ու անխաղաղ ընտրութիւններով, երեք անգամ՝ հինգ տարուան ընթացքին, ստացան ժողովրդային լայն մեծամասնութեան վստահութիւնը: Բացառութիւնը հետեւանքն էր անհանդուրժելի թուող ընդդիմադիր ուժերու ժողովուրդը վերստին ստրկացնելու եւ կեղեքելու ձգտող քայլին, որոնք մեղրածորան խոստումներով, պարապ ու սին տուեալներով եւ կեղծ հայրենասիրութեան պիտակով հրապարակ իջած էին:

Վերը յիշեցի, թէ ժողովրդավարութիւնը վնասաբեր եւ աղէտալի կը դառնայ, երբ կը կիրարկուի բռնատէրի քիթին եւ շունչին տակ:

Ժողովրդավար իշխանութիւնը Հայաստանի մէջ արդէն իր ժողովրդավարութեան կիրարկումին որպէս արդիւնք երկու անգամ պատժուեցաւ բռնատէր Ռուսիոյ կողմէ՝ թէ՛ 44-օրեայ պատերազմով եւ թէ՛ ալ Արցախի կորուստով:

Փաստուած իրողութիւն է, որ ժողովրդավարութիւնը արեւելեան երկիրներուն մէջ կը խարխափի. հաւաքական իշխանապետութիւնը տեղ կու տայ անհատի իշխանութեան:

Քանի-քանի երկիրներ, Արեւմուտքին բացայայտ դրդումով ու օգնութեամբ, Արեւելքի մէջ ժողովրդավար ըլլալու վիճակ ստացան եւ յետոյ անոր խամաճիկ երկիր դարձան:

Յուսանք, որ այս դառն իրականութիւնը գետին չի գտներ Հայաստանի մէջ, ուր իսկապէս ժողովուրդի պէտքերուն հոգատար կը թուի ըլլալ Փաշինեանի իշխանութիւնը:

Ինչ կը վերաբերի հայրենի իշխանութեան ընդդիմադիրներուն, կը բաւականանամ հոս մէջբերելու 1952 թուականին Ամերիկայի արտաքին գործերու նախարար Ատլայ Սթիվընսընի խօսքը, որ կ'ըսէ. «Ընդդիմադիրներու հետ կը սակարկեմ հետեւեալը. եթէ անոնք դադրին սուտեր խօսելէ մեր մասին, ես ալ կը դադրիմ ճշմարտութիւնը արտայայտելէ իրենց մասին»:

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

Aslanian Medical Clinic
ՏՕՔԹ. ՉԱԻԷՆ ԱՍԼԱՆԵԱՆ

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.
ԳԱԼՈՒՍ ԵՒ ԼԵՆԱ ՏԷՐՏԷՐԵԱՆ

Աւետեաց Երկիր Սփիւռքը ԴՈԿՏ. ԱՔԷԼ ՔՅՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ժրնեւի գլխաւոր կայարանին մօտակայքը՝ Rue de Fribourg թաղին մէջ կը գտնուի նպարեղէնի խանութ մը, ուր սովորութիւն ըրած էմ ատենը մէջ մը այցելել, յատկապէս երբ տանս խոհանոցին մէջ կը պակսին արեւելեան մեր կերակրատեսակներու պատրաստութեան համար անհրաժեշտ մթերքը եւ անոնց համ ու հոտ տուող համեմները: Նպարավաճառը՝ Ֆարուք, փաքիստանցի միջին տարիքի տէր գուարճախօս եւ յաճախ գարմանալիօրէն սրամիտ անձ մըն է, որ յաջողած է իր այդ փոքր խանութի տարածքին մէջ ճարտարօրէն հսկայ լեռան մը չափ արեւելեան բազմատեսակ ուտեստեղէն ամբարեւ: Թերեւս հիանալին ոչ այնքան այդ փոքր տարածքը աշխարհի բոլոր անկիւններէն ներածուած մթերքով դիզելն է, այլ ստույգ իմանալը, թէ աննթամթերքի այդ անհամար փաթեթներուն, տուփեղէններուն, պահածոներուն, ապակեղէններուն եւ խոշոր պարկերուն մէջ ո՛ւր կը գտնուի ամենագնձոտ համեմէն մինչեւ ամէնօրեայ պահանջարկ ունեցող ուտելիքը:

Այդ օր եկած էի բրինձ, լիբանանեան հաց եւ կարմիր պղպեղ գնելու: Լիբանանեան հացին տեղը գիտէի, բայց նկատեցի, որ խանութին մուտքէն դէպի վճարման դրամարկղը տանող նեղլիկ միջանքին մէջ ճիշդ իմ ուզած հացի իրար վրայ շարուած տասնեակէ մը աւելի տուփեր կային: Դիմեցի Ֆարուքին՝ հարցնելով.

Արդեօք երբուրէն էն հացերը: Անցեալ տարուրէն, պատասխանեց Ֆարուք՝ իրեն յատուկ գուարճախօսութեան արուեստով: Չե՞ս զգար ջերմութիւնը, միթէ չե՞ս առներ բոլոր, տակաւին նոր ստացած էմ, կարծես անտեղի հարցումէս դժգոհելով ըսաւ ան:

Շատ բարի, ըսի եւ տուփերէն հացի քանի մը ստպրակ առանձնացնելով՝ ապահով դրի վճարման դրամարկղին մօտ՝ սեղանին վրայ:

Բրինձ ունի՞ս, Ֆարուք, կրկին դիմեցի, հաճիս ինձի լաւագոյն բրինձը տուր:

Լաւագոյն բրինձ գոյութիւն չունի, պարոն, պատասխանեց Ֆարուք՝ շարածճի ժպիտ մը ուրուագծելով դէմքին վրայ:

Ինչպէ՞ս թէ, հակաճառեցի ես, գորօրինակ՝ պարսկական «պասմաթին», որ աշխարհի լաւագոյն որակ ունեցող բրինձներէն կը համարուի:

Լաւագոյն բրինձ գոյութիւն չունի ըսի ձեզի, պարոն, որովհետեւ բրինձին լաւագոյն որակը եփողէն կախում ունի եւ ոչ թէ բրինձէն:

Խնդուքս չէի կրնար զսպել փաքիստանցի այս պարզ մարդուն սրամտութենէն: Արդարեւ, իրաւունք ունէր ան: Փաստօրէն ի՞նչ կապ ունի աննդամթերքին որակը, երբ եփողը ձախորդ է, ու կրնայ լաւագոյն բրինձը անհամ ու անհրապույր, չըսելու համար անճաշակելի շիլփիլաւի վերածել:

Արդեօք կարմիր պղպեղ ալ ունի՞ս, դիմեցի իրեն, կծուն պիտի խնդրէի, եթէ կարելի է:

Ի հարկէ ունիմ, պատասխանեց ան ու ցուցամատը ուղղեց քայլ մը անդին գտնուող բարձրահասակ պահարանի մը մէջտեղի դարակներէն մէկուն մէջ իրարու վրայ շարուած փլասթիքէ փաթեթներուն:

Ո՞ւրկէ կու գան, հարցուցի իրեն: Խանութէն, կտրուկ պատասխանեց ան՝ դէմքին տալով նոյն կատակաժպիտ տեսքը:


Շա՛տ բարի, կատակը մէկդի, ըսել կ'ուզեմ ո՞ր երկրէն՝ Լիբանանէ՞ն, Սուրիայէ՞ն, թէ՞ Թուրքիայէն:

Ո՛չ Լիբանանէն եւ ո՛չ ալ Սուրիայէն: Գիտեմ, որ դուն թրքական ապրանք չես գներ: Բարեբախտաբար նաղկափաքիստանեան պղպեղ է եւ արտակարգ կծու:

Գիտե՞ս, Ֆարուք, ատենին տարին մէկերկու Լիբանան կ'երթայինք եւ արեւելեան մեր քիմքին սովոր Հալէպի կամ Այնճարի լաւագոյն պղպեղը կը բերէինք: Հիմա այդ բոլորէն զրկուեցանք: Երկրին մէջ տիրող քաղաքական եւ տնտեսական անկայունութեան պատճառով այսուհետեւ ո՛չ երթալու եւ ո՛չ ալ այդտեղէն ուտեստ բերելու տրամադրութիւն կայ:

Յանցաւորը դո՛ւք էք, պարսաւալից ըսաւ Ֆարուք: Երբ ձեր երկիրը, հողը ու տունը կը ձգէք եւ կը հեռանաք՝ յօժարակամ օտարանալու եւրոպայի այս ամերուն, ուրիշը կը տիրանայ անոր, իսկ դուք ձեր հողին ու ջուրին բարիքը կը խնդրէք անկէ, որ երբեմն ձե՛րն էր, բայց հիմա ուրիշը տիրացած է անոր:

Յաճախորդներ, որոնք արդէն խանութն էին, իսկ ուրիշներ յաջորդաբար դռնէն ներս կը մտնէին, այնուհետեւ անկարելի դարձուցին շարունակելու այս գրոյցը, որ գուցէ կրնար աւելի հետաքրքրական դառնալ՝ իմանալով բուն շարժառիթը Ֆարուքի կարօտաբաղձ յայտարարութեան: Արդեօ՞ք դժգոհ էր ան ժրնեւի նման գեղեցիկ քաղաք



մը հաստատուած ըլլալուն համար: Դժուարութիւնները ունէր իր ընտանեկան կեանքին կամ գործին մէջ, թէ՛ իր յաճախորդներուն մեծ մասը, որոնք Մերձաւոր Արեւելքի երկիրներէն արտագաղթած ապաստանեալներ էին, մերթ ընդ մերթ իրենց հոգիին տուայտանքն ու ներքին խռովքը կը վստահէին անոր:

Համեմատելով այլ երկիրներու հետ՝ անշուշտ Զուիցերիա լաւ երկիր մըն էր, սակայն դրախտ մը չէր: Յատկապէս այն մարդոց համար, որոնք արմատախիլ դարձած էին իրենց հայրենի հողէն, կտրուած էին իրենց ինքնութենէն, պատմութենէն, սեփական մշակոյթէն եւ ազգային սովորութիւններէն, սկիզբէն նոր կեանք մը սկսելու դժուարին եւ բազմատեսակ մարտահրաւէներու առջեւ կը գտնուէին: Փաստօրէն իրենց կեանքը վերջացած էր այն երկիրին մէջ, ուրկէ պատերազմներու բերումով, քաղաքական թէ տնտեսական պատճառներով ստիպողաբար հեռացած էին, իսկ հոս հիմա սկսած էր նորը՝ բոլորովին անորոշ հեռանկարով: Կ'երեւի մարդկային գոյութեան համար ծանրագոյն երեւոյթներն մէկն ալ անորոշութիւնն է:

Բայց ինչո՞ւ այդ պարսաւանքը ինձի ուղղեց Ֆարուք: Դժուար թէ ան տեղեակ ըլլար հայկական ինքնութեանս: Գիտէի այդչափ, որ Լիբանանէն եկած էմ եւ թերեւս ալ լիբանանցի արաբ մը կը կարծէր զիս: Սակայն եթէ իմանար իսկ, ի՞նչ տարբերութիւն պիտի ընէր, երբ, փաստօրէն, ես ալ հեռացած կրնամ սեպուել իմ հայրենի բնօրրանէն, թէպէտ ոչ յօժարակամ, միանշանակ՝ ակամայ, ըլլալով ժառանգորդը ժողովուրդի մը, որ ցեղասպանուած է, դարձած է հայրենագուրկ եւ վտարանդի իր պապենական հինաւուրց հողերէն:

Ուրկէ՞ Ֆարուք դոյզն պատկերացում մը պիտի ունենար հայ սփիւռքի մասին, որ տակաւին սկիզբ առած էր վաղ միջնադարուն եւ աւելի լայն ծաւալ ստացած Բարձր միջնադարուն, նամանաւանդ Բագրատունեաց քաղաքամայր Անիի կործանումէն, ապա աւելի ուշ Կիլիկիոյ հայկական թագաւորութեան անկումէն ետք, երբ բազմաթիւ հայեր պանդուխտի ցուպը առնելով իրենց ձեռքին՝ առագաստ բացած են դէպի պալքանեան երկիրներ, Ղրիմ եւ մինչեւ Լեհաստանի գանազան քաղաքներ, ուր ձեւաւորած են գաղթավայրեր, ծաղկեցուցած առեւտրական կեդրոններ, կառուցած ապարանքներ, բազմաթիւ եկեղեցիներ եւ վանքեր: Մայր երկիրը լքած՝ օտար երկիրքի տակ իր հանգիստը փնտռած է հայ ժողովուրդի զգալի հատուածը, պատմութեան հոլովոյթին մէջ շարունակ ստեղծելով նոր գաղթավայրեր աշխարհի չորս ծագերուն: Ի դէպ, պէտք է խոստովանիլ, որ հայոց մօտ այս երեւոյթը ոչ անպայման արտագաղթելու յօժարակամ տրամադրութիւն մը եղած է, այլ առաւել եւս պայմանաւորուած է Հայաստանի մէջ օտար տիրակալութիւններու հետեւանքով հայկական թագաւորութեանց բարձումով, պետականութեան կորուստով, ասպատակումներով, գերեզարումներով եւ նախճիրեղեռններով: Ապահով կեանք եւ խաղաղ երդիք մը գտնելու հեռանկարով հայը հեռացած է իր հողէն՝ զայն գիշելով Միջին Ասիոյ խորքերէն իր հազարամեակներու



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
CUSTOM CARE

Աւետեաց Երկիր Սփիւռքը

տարածքը ներխուժած թրքական քոչուոր ցեղերուն:

Ծնած եւ հասակ առած ըլլալով հայրենի բնաշխարհէն դուրս՝ սփիւռքի անծայր երկիրքին տակ, ի վերջոյ ինծի համար հական տարբերութիւն մը պիտի չընէր, եթէ ապրէի իմ ծննդավայր Լիբանանի, Մերձաւոր Արեւելքի երկիրներէն որեւէ մէկուն, Աւստրալիոյ, Հիւսիսային թէ Հարաւային Ամերիկաներու, Ափրիկէի թէ Եւրոպայի մէջ, երբ ասոնցմէ ոչ մէկը իմ բուն հայրենիքը կրնար համարուիլ, այն երկիրը, ուր իմ հայրերը կ'ապրէին եւ զայն իբրեւ սրբազան աւանդ ձգած էին իրենց հայկազուն սերունդին:

Արդեօք սփիւռքը սփիւռքահայուն տեսակ մը հայրենիքը դարձած է. դժուար է ըսել: Սփիւռքահայ բառակապակցութիւնը կապ մը ունի իրողութիւն մը դրսեւորող այս ըմբռնումին հետ: Հարկ է զայն խորքային վերլուծումներու ենթարկել իր բովանդակ եւ կնճռոտ երեսակներով: Վերջը ի՞նչ պիտի տայ վերլուծումներու արդիւնքը, երբ փաստը կը մնայ փաստ, որ հայ եւ ծագումով, բայց կ'ապրիս հայրենի բնօրրանէն դուրս՝ օտար երկիրներու տակ, այլացեղ ժողովուրդներու, մշակոյթներու, կրօններու եւ դաւանանքներու միջավայրին մէջ: Թէպէտ այսօր որոշ երկիրներու մէջ հայրենիք հասկացութիւնն ալ տարբեր կը մեկնաբանուի, քանի ընկերային կեանքը հոն նոր ընթացք մը առած է՝ կազմելով բազմազգ եւ բազմամշակութային հասարակութիւն մը: Այսուհանդերձ կարելի՞ է ըսել, թէ հարիւր տոկոսով սփիւռքահայ մըն եմ: Այսինքն ինքնութեամբ հայ, միաժամանակ հարիւր տոկոսով լիբանանցի, սուրիացի, ամերիկացի կամ ֆրանսացի, ինչպէս ատենին դիպուկ ձեւակերպած էր մեր աշխարհահռչակ երգիչը՝ Շարլ Ազնաւուր: Այս պարագային կարելի՞ է նաեւ հաշտարար լուծում մը առաջարկել՝ ըսելով, թէ վերոգրեալ երկիրներէն որեւէ մէկը, ուր ծնած եմ ու կ'ապրիմ հիմա, այլապէս այդ երկիրներէն մէկուն կամ միւսին քաղաքացիութիւնն ալ կը կրեմ, հարիւր տոկոսով կրնայ նոյնքան իմ հայրենիքը նկատուիլ, ինչպէս հարիւր տոկոսով միաժամանակ Հայաստանն է իմ հայրենիքը:

Իրականութեան բաժին մը ըլլալու է ըսուածին մէջ: Բայց հարցը միեւնոյն է եւ կը մնայ առեղծուածային: Ինչո՞ւ չենք ապրիր մեր հայրենի բնօրրանին մէջ, մեր պապենական հողերուն վրայ, ուր մեր ցեղին արմատներն են եղած, մեր պապ ու պապերն են ապրած եւ ստեղծագործած: Այդ հայրենիքը, որ հազարամեակներով մե՛րն էր եղած, աւաղ, բռնագաւթուած է Միջին Ասիոյ խորքերէն եկած Օղուզ ցեղախումբի եւ Օսմանի բարբարոս ժառանգորդներուն կողմէ: Անոնք մեզ դարձուցին հայրենագուրդ, բնիկը՝ քոչուոր, մահու աքսորներու, արիւնալի անվերջ կոտորածներու եւ ցեղասպանական բազմաթիւ բռնարարքներու իրագործումով: Մեր ներաշխարհը մեզի կը թելադրէ, թէ մե՛րն է այդ հայրենիքը՝ Արեւմտահայաստանը, որ հայն է անոր միակ ու ճշմարիտ իրաւատէրը: Միւս կողմէ մեր գիտակցութիւնը իրատեսութեան դառն հրաւէր կը կարգաւ մեզի՝ պարզելով, որ այսօր այդ հողերուն վրայ իրենց թուային քանակով մեզ գերաշուոյ միլիոնաւոր թուրք ու քիւրտ այլազգիներ կ'ապրին, որոնք նոյնքան ամուր կապերով մեր դրախտավայր երկիրը իրենց պապերէն ժառանգ ստացուած հայրենիքը կը համարեն: Արդեօք ո՞ր քիւրտ գիւղացին արիւն պիտի չթափէ այն արտին համար, որ այսօր ինք կը հերկէ ու անոր բարիքը կը վայելէ՝ եթէ պնդես, թէ այդ եղած է պապիս սեփականութիւնը եւ փորձես զայն խլել իրմէ: Նմանապէս ո՞ր թուրքը ո՞ճիր պիտի չգործէ, միեւնոյն է՝ որքան ալ քաղաքակիրթ թուի ան կամ պատկանի յառաջդիմական, ընկերվարական կոչուող այս կամ այն կուսակցութեան, երբ ըսես՝ նստած տունդ պատմականօրէն իմս է, վե՛ր կաց, ե՛ս պիտի ապրիմ հոն: Արդեօք գորշ գայլերու արիւնկզակ բնագոյր իսկոյն պիտի չզգարթնի իր մէջ: Գաղափարախօսական կամ կուսակցական ինչ հոսանք է ալ իշխանութեան գլուխ եկած ըլլայ թրքական պետութեան օրուան առաջնորդը, այս կամ այն նախագահը, նախարարը, թէկուզ պետական համեստ պաշտօնեան, հայուն երբեք պիտի չըսէ՝ նոյն գաղափարները կրողն ենք, հետեւաբար ճանչնալով պապերուս հայոց դէմ իրագործած ցեղասպանութիւնը՝ քեզի կը վերադարձնեմ պատմական հայրենիքդ, եկո՛ւր եւ վերցո՛ւր զայն՝ Արեւմտեան Հայաստանն ու Կիլիկիան, քաղաքամայրդ՝ Անի, եւ ազգային գոյութեանդ մեծագոյն խորհրդանիշ Արարատը վեհափառ: Ան ոչ իսկ պիտի առաջարկէ՝ ըսելով, եկո՛ւր, հայրենակից, վերստին միասին ապրինք այս հողին վրայ, որ երբեմն բացառապէս ձերն էր, բայց հիմա նաեւ մե՛րն է ան: Եկէ՛ք եւ եղբայրական խաղաղ համակցութեամբ միասին ստեղծագործենք ու միասնաբար շահինք մեր կեանքը: «Արեւելեան Անատոլու» ի վրայէն հանենք թուրքիան եւ փոխարինելով վերանուանենք Արեւմտեան Հայաստան: Անուրջներ են լոկ եւ շատ զեղեցիկ գաղափարներ՝ իրական ըլլալու համար: Կայ հինէն աւանդուած կարգախօս մը, թէ «հողը միայն արիւնով

կ'առնեն», զայն կը վերաբնակեցնեն ու սիրելով կը պահեն:

Հաշտուիլ այս կացութեան հետ, ընդունիլ մաղձոտ իրականութիւնը եւ դադրիլ պահանջատէր ըլլալէ՝ անկարելի է: Հրաժարիլ այս ամէնէն, անձնատուր ըլլալու, անցեալէդ պարպուելու, ինքնութենէդ սնանկանալու եւ արժանապատուութիւնդ բռնաբարած ըլլալու գիտակցութեանդ վրայ այրող զգացում կ'առնէ: Ստոյգ կը դադրիս մարդ արժէք ըլլալէ, կը փոքրանաս, կը նուաստանաս նախ անձիդ առջեւ, ապա, ձեւով մը, շրջապատիդ մէջ: Այսպէս, սփիւռքահայուն այս երկրնորանքին մատնուած ենք, սակայն առանց ընտրել կարենալու ո՛չ մին եւ ո՛չ միւսը: Ահա ա՛յս է մեր ճակատագիրը:

Առաջին անգամ չէ, որ այսքան խռոված էր միտքս եւ յուզած հոգիս: Փաքիստանցի նպարավաճառին դիտողութիւնը, որքան ալ ըլլար տեղի թէ անտեղի, պարզապէս վերստին կայծ մը տուաւ հսկայ հրդեհին, որ արդէն միշտ մէջս եղած է եւ այսպէս ալ կը մնայ այնքան ատեն, որ գոյութիւն ունի իր աւետեաց երկիր սփիւռքին դատապարտուած սփիւռքահայը: Սփիւռքահայու գոյութեան եւ ինքնութեան մէկ անբաժան մասը կը կազմէ այդ: Ծնած ըլլալ օտար երկիրներու տակ՝ կը նշանակէ հաշտուիլ իրավիճակին հետ, ունենալ սփիւռքեան ծննդավայր մը, ապրիլ եւ ստեղծագործել այլ արտերկրի մը մէջ՝ պատկանելով միաժամանակ պատմութեան մը, որ իր գործը արմատներով քեզ հողհայրենիքիդ կը կապէ, գիտակցութիւնդ եւ հոլթիւնդ համակ անոր հետ կը նոյնացնէ ու արեանդ ամէն մի ծինը հազարամեակներու խորքէն եկող անոր կանչը կը լսէ:

Սփիւռքահայուն ձեռք բերած բարիքը, որ սփիւռքին ճրիպբար բաշխած նուէրը չէ, բնաւ չէ շլացուցած զինք, այլ ան կարօտաբարձ հայեացքը միշտ սեւեռած է դէպի իր իսկական հայրենիքը, մինչդեռ այն երկիրը, ուր ան աչքերը լոյսին բացած է, համարած է ընդամէնը իր ծննդավայրը կամ առաւելագոյնը՝ իր երկրորդ հայրենիքը, առաջնահերթութիւնը վերապահելով ընդմիշտ Մայր Հայաստանին՝ համայն հայութեան իրական եւ հոգեւոր հայրենիքին: Արդարեւ ի զուր չէ, որ անոր «մայր» պատուանունը տրուած է, որովհետեւ ան հայուն համար սոսկ հող ու սահմաններ չէ, այլ մօր մը պէս համակ սէր եւ սրբութիւն է միաժամանակ:

Ինծի երբեմն այնպէս կը թուի, որ ընդհանրապէս հայ ծնիլը եւ նամանաւանդ սփիւռքահայ՝ դիւրին չէ: Հայրենագուրդ ըլլալը մեզի դարձած է ճակատագիր, գերդ մեր ճակտին գրուած անէ՛ք մը: Իսկ մեր ամբողջ գոյապայքարը կը կայանայ զայն փոխարկելու կենսաուրիթ օրհնութեան մը մէջ: Ամերիկաներու եւ Եւրոպաներու մետաքսեայ հանգստաւէտ բարձերը մեզ չեն հետաքրքրեր: Ամէն ինչ շահուած է չարաչար աշխատանքով, արդար քրտինքով ու վաստակով, Եղեռնի կարմիր անապատներէն եկած մեր հէգ պապերու, Տէր Զորի բիրտ արեւէն խանձած տատերու եւ ծնողաց ստանձնած մեծամեծ գոհողութիւններով: Մենք տեսած ենք սով ու զրկանք, պառկած ենք գետնախշտի վրանաչէն անհիւրընկալ քաղաքներու տաղաւարներու մուկին տակ: Բայց չենք վհատած, այլ աներկբայ ապաւինած ենք մեր վերապրելու կամքին, քարէն հաց հանելու աշխատասէր ոգիին եւ հաւատացած սեւ ամպերու ետին շառագունող ապագայի վառ արշալոյսներու յաղթանակին:

Ինքնագիտակցութիւնը թելադրած է մեզի հպարտ ըլլալ մեր հայեցի լինելութեամբ ու անքակտելիօրէն կապուիլ մեր եզակի ինքնութեան, մշակոյթին, ազգային հաւաքական պատկանելիութեան, հայերէնին եւ հայրենիքին: Հայրենակորուստ շատ մը ազգեր՝ ասորիներ, քիւրտեր եւ ասոնց նման շատեր, - եթէ երբեմն ունեցած են հայրենիք մը կամ պիտի ուզէին վերստին տէր դառնալ անոր, - ըղձագին երանի պիտի տային մեզի, որ հակառակ պատմութեան մէջ կրած մեր արհաւիրքներուն, հողային տարածքներու ծանր կորուստին, տակաւին ունինք Հայաստան ձայն գործվագութիւն եւ ցանկալի անունով երկիր մը, կտոր մը հայրենիք եւ պետութիւն: Օտար ազգերու եւ արնախում ցեղերու դարաւոր տիրակալութենէ կտք, կրցած ենք վեր բարձրացնել մեր ազգային անկախութեան խորհրդանիշ եռագոյն դրօշը, որուն շուշան հովանիին տակ ներշնչուելու, ստեղծագործելու եւ, ի վերջոյ ամենայնի, վերատիրանալու ապահով ու մարդավայել կեանք մը ապրելու իրաւունքին:

Ազգային իւրաքանչիւր սխրանք, ամէն մի նուաճում եւ յաջողութիւն, □ հոս ի՞նչ նշանակութիւն ունի մեծը կամ փոքրը, □ անասելի երջանկութեամբ կը համակէ մեզ եւ ուրախութեան աւինքնող զգացումով կը պարուրէ մեր հոգին: Սակայն անոր անկումները, ունեցած ձախողութիւններն ու կրած ծանր կորուստները կը խոցեն մեր սիրտը ու կոտորացող նոր վէրքեր կը



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.

ԽԱԶԻԿ ԵՒ ԺԵՆԻԱ ՔԷՇԻՇԵԱՆ

Աւետեաց Երկիր Սփիւռքը

բանան անոր վրայ:

Ի դէպ, ի՞նչ կարելի է ըսել հայ ժողովուրդի նորագոյն կորուստներուն՝ Արցախի եւ անոր պաշտպանութեան սիրոյն իրենց գարուն կեանքերը գոհած լոյս մարտիկներու մասին: Ի հարկէ շատ բան եւ ոչինչ: Արդարեւ բառերն անգոր են արտայայտելու իւրաքանչիւր հայու ներաշխարհին անվերջ ցաւն ու մորմոքը, որուն իրականացման պատասխանատուութիւնը, անտարակոյս, ամէնքս կը կրենք: Լացն ու ողբը, մեր գլխուն վրայ մոխիր ցանելն ու յետողորմեայի գալը ոչինչ կ'օգտէ. զգաստանա՛լ է պէտք: Ազգովին ձախողեցանք՝ պետութեամբ, իշխանութեամբ, քաղաքական կուսակցութիւններով, եկեղեցիներով ու կղերով, հայրենիքով եւ սփիւռքով, մեծով ու փոքրով, իսկ հիմա զգաստանա՛լ է պէտք:

Չնայապատրաստեցանք դիմագրաւելու համար աշխարհաքաղաքական պայթիւնավտանգ վերիվայրումներու յրած մարտահրաւէրները, որոնց ոտանձայնը անշուշտ կը լսէինք: Չարութեան անիւր կը պտտէր եւ իր մահասփիւռ սուր խոփով մեզմէ ոչհեռու երկրագունդի երեսը կը պատռէր՝ հետզհետէ ուղղելով իր կործանարար ընթացքը նաեւ մեզի դէմ: Վտանգը չկրցանք կանխարգիլել, երբ գիտէինք, որ մեր հարեւան թշնամին երկտասնամեակէ մը աւելի մինչեւ իր ատամները կը սպառազինուէր, իրեն համախոհ դաշնակիցներ կը շահէր, մամոնային ուժով լրատուական միջազգային հարթակներ կը ներթափանցէր եւ մեր յառաջիկայ տալիք բերաւոր գոհերուն եղբերգը կը հիւսէր: Արդեօ՞ք քիչ էին Հայաստանի նախկին եւ ներկայ իշխանութիւններու երեսին անոր նետած լկտի սպառնալիքները, որոնք յստակ յարացոյցներ էին անոր գաւթիչ ու ծաւալապաշտ նկրտումներուն: Ան անհամբեր կը սպասէր նախապէս մշակած իր ռազմական գործողութիւնները կենսագործելու պատեհառիթ ազգանշանի մը, որ ժամանակը իրեն պիտի մատուցէր ոսկեայ սկուտեղի մը վրայ: Իսկ այդ մէկը շատ չուշացաւ՝ ազգերու եռուզեռը անդամալուծող պսակաձէւ ժահրին համավարակով, Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահական ընտրութիւններուն ժխտով եւ Ուքրաինայի դէմ Ռուսիոյ սանձազերծած պատերազմին աղէտով: Գերհզօր երկիրներու դեկալարներ տեղի կամ անտեղի պատասխանատու ելոյթներ կ'ունենային՝ ըսելով, թէ ազգերու միջեւ հողային տարածքներ ու սահմաններ պիտի փոխուին, որոնք սովորաբար կ'իրագործուին բիրտ ուժի կիրառումով: Աշխարհաքաղաքական արագընթաց զարգացումներ նմանապէս կ'ահագանգէին կենսագործուելիք մութ ծրարներու մասին: Մեր հարեւան թշնամին երկարաժամկէտ նախագիծներ մշակելով նախապատրաստուէր էր ասոր, մինչդեռ մենք չըրինք եւ չկրցանք ընել, չուզեցինք եւ ոչինչ եղաւ: Նայեցանք եւ տեսնել չուզեցինք, իսկ երբ տեսանք, թշնամին ոչ թէ ի դուռնա էր, այլ խուժած էր մեր հայրենիքի պարիսպներէն ներս՝ սփռելու մահ ու աւեր եւ խլելու այն, որ ոչ թէ աւար, այլ դարերէ ի վեր իր սեփականը կը սեպէր: Այսօր Արեւմուտքը բարձրագոյն կը խօսի հակասեմականութեան (անթիսեմիթիզմ) մասին. արդեօք մեզմէ բացի «արմենոֆոպիա» ի մասին ուրիշ խօսողներ ալ կա՞ն:

Ունենալ պատմամշակութային հարուստ աւանդ մը, անտարակոյս, իւրաքանչիւր ժողովուրդի գերազանց ձեռքբերումներէն մին պէտք է նկատել, նաեւ իր ստեղծագործած բարձր քաղաքակրթութեան վկայագիրը, որով ան ատակ կը դառնայ իր պայծառ ինքնութեամբ հպարտօրէն ներկայանալու ազգերու ընտանիքին: Սակայն նոյն այդ անձնագիրը, այլապէս իր պատմամշակութային հարուստ ժառանգութիւնը թշնամիին աւարառու հարուածներէն պաշտպանելը նմանապէս այդ ազգի գերունակ արժանիքներէն եւ սեպուհ պարտականութիւններէն պէտք է համարել: Ստեղծագործած մարդկութեան ընդհանուր բարիքին ընծայելը առաքինութիւն է: Բայց թոյլ տալ, որ գայն վայրենաբարոյ ջոխիւրը կողոպուտի եւ փճացումի առարկայ դարձնէ, ոչ միայն հաւաքական անտարբերութեան, անպատասխանատուութեան եւ անձեռնհասութեան ապացոյց է, այլեւ յանցագործութիւն մըն է սեփական ժողովուրդին հանդէպ: Միշտ ալ ըսուած է՝ պաշտպանութեան լաւագոյն միջոցը նախադարձակ ըլլալն է: Գոյութեան սպառնացող վտանգը տակաւին իր սաղմին մէջ խեղդելն է: Պատմահայր խորենացին տակաւին Ե. դարուն որքան դիպուկ եւ միանգամայն ճիշդ բնորոշած է նաեւ մեր ու գալիք ժամանակներուն համար ըսուած կարգախօսը՝ «Սահմանք քաջաց՝ գէնն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի» (քաջերու սահմանը իրենց գէնքն է, որքան կը կտրէ, այնքան կը տիրէ): Արդարեւ ուժը կ'որոշէ ամէն ինչ, նաեւ իրաւունքը: Եթէ երբեք ազգովին իւրացնէինք այս իրապաշտութիւնը եւ կարենայինք իրագործել գայն, մեր կեղերոնախոյս ձգտումները եւ աքիլիէսեան խոցելի վարչապարը հանդիսացող անմիաբանութիւնը թօթափէինք մեր ազգային ծիներէն, թերեւս մեզի խնայուած պիտի

ըլլար այս նորագոյն չարիքը՝ հողային տարածքներու, պատմամշակութային անգնահատելի ժառանգութեան եւ լոյս սերունդի մը անդառնալի կորուստը:


Սակայն ժամանակի տեղողութեան մէջ ի՞նչն է անփոփոխ, մնայուն եւ յաւիտեան: Ամէն ինչ կու գայ եւ կ'անցնի, լաւ ու ձախորդ օրերը միաժամանակ: Ազգեր կու գան, գերտէրութիւններ կը բարձրանան ու կ'իջնան: Պատմութիւնը վկայ: Խնդիրը ժամանակի քայքայումին եւ բնութեան տարալուծող ուժերուն դէմ դիմանալն է՝ պահպանելով ազգին հայեցի ինքնութիւնը, չկտրուելով պատմական յիշողութենէն՝ արդիւնաւորել ներկան, եւ մշակել ապագային հանդէպ հեռահար ծրագրերու նպատակային արեւելում մը:

Այն, ինչ որ ըրիր, արդէն եղած է, այն, ինչ որ գնաց, արդէն գացած է: Կեանքի լաւագոյն դասերէն մէկը սորվիլն է, թէ ինչպէ՞ս չմատնուիլ անշարժութեան, այլ ընդհակառակը շարունակել յառաջ ընթանալ: Լաւ է յետադարձ հայեացք նետել անցեալի յիշողութիւններուն վրայ, բայց երբեք թոյլ չտալ, որ անոնք արգելք հանդիսանան մեր ազգային յառաջընթացին: Հետեւաբար, ծանր հարուածներէն պէտք է ընկճուիլ, ընդհակառակը՝ առաւել եւս զօրանալ: Սայթաքումներէն պէտք է վճատիլ, այլ սորվիլ: Գոյութեանը սպառնացող վտանգին առջեւ պէտք է չհանձնուիլ, այլ գայն քաջաբար դիմագրաւել: Որքան ալ բիրտ ըլլան ժամանակին եւ պարագաներուն բերած վերիվայրումները, պէտք է հաւատալ հայ ցեղի վերապրելու ուժին եւ հայ ժողովուրդի դարձ ի դար մղած գոյապայքարներու յաղթանակին՝ կեանքին հանդէպ անոր սրբազան պաշտամունքին:

Յաւարտ բանիս՝ պիտի չուզէի սխալ մեկնաբանուիլ: Իւրաքանչիւր սփիւռքահայ մարդու իրաւունքն է որոշել, թէ իր կեանքի պայմանները արդեօ՞ք կը թոյլատրեն հայրենադարձութեամբ մնայուն բնակութիւն հաստատելու Հայաստանի մէջ: Ներկայ իրավիճակը ցոյց կու տայ, սակայն, որ սփիւռքահայութեան ճնշող մեծամասնութիւնը դժուար թէ լուրջ քայլերու ձեռնարկէ հայրենադարձութեան ուղղութեամբ: Սա պահուն այնպէս կը թուի, որ հայրենի իշխանութիւններուն համար հոն եղածը պահելը արդէն իսկ քաղաքական եւ տնտեսական ահագին մարտահրաւէր մըն է: Թէպէտ պէտք է խոստովանիլ, որ «Հայաստան» հիմնադրամի գանձանակին մէջ քանի մը լուծայ նետելով կամ զբօսաշրջիկի մը տրամադրութեամբ տարին մէկերկու անգամ Հայաստան այցելելով ո՛չ ճշմարիտ հայրենասիրութիւն եւ ո՛չ ալ ազգասիրութիւն կ'ըլլայ: Ասով հանդերձ, ինքզինքիս երբեք իրաւունք չեմ կրնար վերապահել որեւէ մէկուն հրաւէր կարգալու, թէ պէտք է մնայուն կերպով Հայաստան երթալ կամ ոչ: Առկան յաւակնութիւն ալ չունի սփիւռքահայ մարդու ներաշխարհին ազնիւ, անկեղծ, ջերմ եւ հայաշունչ սպրումները, այլապէս ասոնց գուրգահեռ մակերեսային հակասութիւնները փորձարկելու: Այստեղ «ինչու»ներուն եւ «ինչպէս»ներուն պատասխաններ գտնելը ամենեւին էական չէ, այլ պարզապէս որոշակի փաստեր նշելով՝ ցոյց տալ ընդհանրապէս մեր հայ կեանքին հետ ուղղակիօրէն առնչուող իրավիճակ մը, զոր դատել միանգամայն իմ իրաւասութիւնը չէ:

Պատմութեան մէջ շատ մը ժողովուրդներ, մեծ թէ փոքրաթիւ ազգեր ծանր պարտութիւններ կրած են, ընդհուպ մինչեւ իրենց շէն քաղաքները ենթարկուած են հիմնադատակ կործանումի: Բայց անոնք հաւաքական կամք դրսեւորելով եւ նորը արարելու վճռակամ աշխատանքով վերստին յառնած՝ կրցած են նոյնիսկ կառուցել աւելի գեղեցիկը եւ կերտել իրենց յառաջագնաց երկիրները: Փոքր ազգեր յաջողած են ամենայն հիացմունքի արժանի յաղթապանձ դիմադրութիւն ցոյցաբերել իրենցմէ գերհզօր տիրակալութիւններու եւ անոնց զօրաբանակներուն դէմ: Արդարեւ, հայոց պատմութեան մէջ պակաս չեն եղած հերոսական բազմաթիւ համանման օրինակներ եւ սխրագործութեանց եզակի իրադարձութիւններու ժամանակագրութիւններ:

Աներկբայ հաւատալ է պէտք, որ մեր հայրենիքը նորէն կը դառնայ հզօր եւ բարգաւաճ երկիր մը: Հաւատալ է պէտք, որ մեր հնարաւորութիւնները տակաւին սպառած չեն: Մեր առջեւ կը գտնուի ներկան, առաւել եւս՝ ապագան: Իւրաքանչիւր հայու ստանձնած անձնական եւ յատկապէս հայ ժողովուրդի հաւաքական յանձնառութենէն կախուած է հայրենիքին քաղաքական, տնտեսական, ռազմական եւ հասարակական կեանքին բարգաւաճումը: Մայր Հայաստանը վերստին ոտքի կը կանգնի եւ մայրական գորովագութ եւ խանթակաթ սիրով իր ծոցը կը հրաւիրէ սփիւռքի օտարաշունչ հողմերուն յանձնուած իր սիրասուն գաւակները:



Հարցազրույց Տեր եւ Տիկին Սարգիս (Վահագն) եւ Հայկուհի (Աճեմեան) Փաթափութեաննորու Հետ

-Սկսիմք ներկայէն, երթալու համար դէպի անցեալ ու ապա ցատկելու դէպի ապագան: Չեր երեք զաւակներն ալ գրական ընտանիքի մէջ ծնունդ առին, բայց իրենց տարերքը գտան գիտութեան մէջ: Ինչպէ՞ս կը բացատրէք այս մէկը, մանաւանդ Արտեմի Նոպելեան մրցանակակիր դառնալու մեծագոյն յաջողութիւնը:

Ս.Վ. Շատ պարզ: Տիկինս գիտութեան ասպարէզին մէջ էր: Ան Պէյքրութի Ամերիկեան Համալսարանէն վկայուած էր Կենսաբանութեան մէջ Պատկաւոր Գիտութեան վկայականով (Bachelor in Biology) եւ տարի մըն ալ հետեւած Մագիստրոսի (Masters) դասընթացներուն, որ պարագաներու բերմամբ կիսաւարտ մնացած է: Ան միշտ առաջադեմ եղած է գիտութեան եւ ուսողութեան (Mathematics) մէջ: Ուրեմն ինքն է, որ աւելի զբաղած է մեր գաւակներուն դաստիարակութեամբ: Ես միայն «պրէզիլէ» զասարանը աւարտած եմ: Այնպէս որ տիկնոջ ազդեցութիւնը մեծ եղած է այս գծով եւ անոնք ժառանգած են իր այդ ծննդական (genetic) յատկութիւնը: Գիտական մտքի կողքին, բարեբախտաբար մեծ եղած է գրականութեան հանդէպ իր սէրն ալ եւ ասոր լաւագոյն ապացոյցը զիս ընտրելն էր որպէս ամուսին: Մեր ամուսնութիւնը հիմնուած է գրականութեան վրայ: Իրեն հանդէպ տածած համակրանքս բերանացի չեմ յայտնած, այլ՝ պատմուածքով մը, որուն հերոսուհին ակնյայտօրէն ինքն էր: Այդ մէկը միայն ինք եւ ես կրնայինք գիտնալ: Բարեբախտաբար իր պատասխանը դրական եղաւ: Մեր կապը գրական աշխարհի միջոցաւ եղաւ, բայց մեր գաւակները գիտութեան ուղղութեամբ գացին եւ մինչեւ այսօր ալ կը մնան նոյն գծի վրայ: Մեծ տղաս՝ Արան, համակարգիչի հազուագիւտ գիտնականներէն է ԱՄՆ-ի մէջ եւ աւելի քան հարիւր արտօնագիրներու (patent) տէր է: Գալով Արտեմին, ես իր մէջ գիտականէն աւելի գրական ճաշակը տեսած էի, դատելով պատանի տարիքին իր գրած շարադրութիւններէն ու ոտանաւորներէն եւ արուեստի հանդէպ ունեցած սէրէն: Դաշնամուրի դասընթացներու հետեւած է Տիկին Ահարոնեանի հակողութեամբ եւ երկու տարուան դասընթացը մէկ տարիէն աւարտած է: Մարզականի մէջ ալ լաւ էր, բայց հոն ալ չչարտեսեց: Երբ ԱՄՆ հաստատուեցանք, ինք ուզեց իր ուսումը շարունակել UCLA-ի համալսարանին մէջ, բայց մենք նիւթապէս չէինք կրնար հոգալ այդ ծախսերը: Բարեբախտաբար, Արայի պարագային, ան կարողացաւ Հարիւրի անուան կրթաթոշակ ապահովել եւ շարունակել իր ուսումը գիտութեան մէջ: Ես կը խորհիմ, որ Արան մեծ ազդեցութիւն ունեցած է Արտեմի նախընտրանքին վրայ, որովհետեւ իրեն համար մեծ եղբայրը կուռք մըն էր: Ուստի տարի մը «Նոր Կեանք» շաբաթաթերթի անգլերէն բաժինը վարեց չնչին ամսականով մը, որ մէկ տարուան կեցութիւնէ ետք կարենայ դիւրացնել իր մուտքը UCLA: Հոն ալ փայլուն աշակերտ մըն էր եւ կը մտադրէր հետեւիլ բժշկութեան: Սակայն անսալով գիտահետազոտական դասի իր ուսուցչուհի խորհուրդին եւ քաջալերանքին, ընդգրկեց այդ ասպարէզը: UCLA-էն ետք ընդունուեցաւ Caltech համալսարանը, ուրկէ վկայուեցաւ դոկտորականով: Գալով Հոլիւդին, ան ճարտարագիտութեան վկայականին տիրացաւ Հայաստանի համալսարանէն: Բայց նոյն ատեն, իր մէջ մէծ էր արուեստներու հանդէպ իր ունեցած սէրը, ինչպէս նաեւ գրական ճաշակը:

Հ.Փ. Մեր իրար ծանօթանալու կապակցութեամբ կ'ուզեմ աւելցնել, որ տակաւին Սարգիսին չճանչցած, երբ կարդացի իր «Կօշկակարները» պատմուածքը, շատ սիրեցի ու տպաւորուեցայ, որ այս ինչ աղուոր գրող է: Թերթին պատասխանատու Մատոյեանէն հետաքրքրուեցայ թէ ո՞վ է այս գրողը: Ան ալ պատասխանեց, որ երիտասարդ տղայ մըն է, որուն այդքան ծանօթ չէ: Ըսել կ'ուզեմ, որ Սարգիսին չճանչցած, իր գրութիւնէն շատ լաւ տպաւորուած էի իրմով:

Ս.Վ. Ես ալ աւելցնեմ, որ ինչպէս ես եւ Հայկուհին գիրար կ'ամբողջացնենք, նոյնն է պարագան Հոլիւդի եւ Տօքթ. Եղիկ Ճէրէճեանի հետ: Անոնք ալ աշխարհին կը նային պայծառ աչքերով, հայրենասէր են ոչ միայն զգացականօրէն այլ նաեւ գործնականօրէն եւ իրապաշտօրէն:

-Ի՞նչ յոյզեր յառաջացուց համաշխարհային մակարդակի վրայ Արտեմի յաջողութիւնը ձեր մէջ:

Ս.Վ. Նոպելեան մրցանակը ստանալէ երկու տարի առաջ, Արտեմը արժանացած էր Նորվեգիոյ «Քավլի» մրցանակին, որ գրեթէ համահասարակարկ ու հեղինակութիւն կը վայելէ: Այն ատեն ես իրեն ըսի, որ յաջորդը «Նոպել» պիտի ըլլայ: Խնդաց: Երկու տարի ետք, առաւօտեան ժամը երկուքի մօտ, տանս մէջ կ'աշխատէի համակարգիչի վրայ, երբ յանկարծ հեռաձայնը հնչեց: Սրտնեղած վերցուցի, պատրաստ այգանելու, որ ինչո՞ւ այդ ժամուն կը հեռաձայնէ: Սակայն աղմուկ կար զանգողին



կողմը, որ կը նշանակէ մէկ հոգի չէր, ու Սթոքհոլմ բառը ականջիս հասաւ: Ի՞նչ է, ըսի, Սթոքհոլմէն կը հեռաձայնէք: Այո, այո ըսին: Արտեմ Փաթափութեանը կը փնտռենք: Դուք ո՞վ էք: Հայրն եմ, ըսի: Ըսին, իրեն կը հեռաձայնէք բայց չպատասխանէր: Ըսի, ինչի՞ համար կը հեռաձայնէք: Արդեօ՞ք Նոպելեան մրցանակը չահեցաւ: Այո, ըսին, քանի մը վայրկեանէն պիտի յայտարարենք: Անմիջապէս Արտեմին հեռաձայնեցի: Ինք իր հեռաձայնը այնպէս կը լարէ, որ ընտանիքի անդամներուն զանգը կ'ընդունի ու ժամերուն, բայց ուրիշներունը՝ ոչ: Ի՞նչ կայ, ըսաւ, նորէն արթնցուցի ինծի: Ըսի, հեռաձայնը բաց, Նոպելեան մրցանակի յանձնախումբէն պիտի հեռաձայնեն քեզի: Անմիջապէս գիծը գոցեցի, որ ազատ ըլլայ: Այն ալ ըսեմ, որ Սթոքհոլմէն խօսողը երբ ինձմէ Արտեմին հեռաձայնի թիւը ուզեց ճշդել, իրեն ըսի, որ մէկ պայման ունիմ՝ պէտք է նշէք, որ ան հայկական ծագում ունի: Այո, այո ըսաւ: Քիչ ետք «Նիւ Եորք Թայմզ»-էն հեռաձայնեցին: Անոնք Արտեմին հեռաձայնի թիւը ուզեցին: Անոնց ալ նոյն պայմանը դրի: Երկուքն ալ յարգեցին իրենց խոստումը: «Քավլի»-ն առնելէն ետք, ես հոգեպէս պատրաստուած էի, բայց Արտեմը՝ ոչ:

-Իսկ ձեր պարագային, Տիկին Փաթափութեան:
Հ.Փ. Շիտակը, ես պատրաստուած չէի: Գիտէի, որ երկու տղաքս ալ շատ լաւ գործ կ'ընէին, բայց մտքէս չէի անցընէր, որ այդ աստիճանի է կատարած գործերնին: Այնպէս որ, ես շատ զգացուեցայ եւ յուզուեցայ:

Ս.Վ. Ես մօտէն կը հետեւէի Նոպելեան գրական մրցանակը շահողներուն եւ այդ մասին կ'անդրադառնայի «Շիրակ» գրական ամսագրի էջերէն: Կը յիշեմ, որ անդրադառնած էի ժամ ֆոլ Սարթրին մրցանակը մերժելուն, որ ըսած էր թէ ինք վաճառականական (commercial) ապրանք չէր: Մեր սիրելի Սարոյեանն ալ «Pulitzer» մրցանակը մերժեց: Մօտէն հետաքրքրուած ըլլալով այս մրցանակներով, երբ Արտեմը Նորվեգեանը ստացաւ, իրեն ըսի, որ Շուեդականն ալ պիտի գայ: Նախազգացումս կար, բայց երբոր յաջողութիւնն ալ եղաւ, հպարտութեան զգացումներով լեցուեցայ: Հայաստանի Հանրապետութեան նախագահը, Լիբանանի Հանրապետութեան նախագահը, երկուքն ալ ուզեցին զինք հրաւիրել: Լիբանանի չգնաց, բայց Հայաստանի մէջ իրեն արքայական ընդունելութեան արժանացուցին, թէ՛ ժողովուրդը եւ թէ՛ կառավարական մարմինները:

-Մարդուս նկարագիրը իր հե՞տ կը ծնի, թէ կը կազմաւորուի իր կեանքի ընթացքին: Ի՞նչ կը խորհիք այս մասին, որպէս Պէյքրութի Տեմիրճեան վարժարանի տնօրէնուհի, որ հարիւրաւոր պատանիներու աճին ակամատես եղած է: Ի՞նչ ազդեցութիւն թողած է այդ փորձառութիւնը ձեր վրայ:

Հ.Փ. Երբ Պէյքրութի Ամերիկեան Համալսարանին մէջ ծագումնաբանութեան (genetics) դասընթացի մը հետեւեցայ, ասիկա մեծ հարցական մըն էր: Ռուսերը աւելի կը հաւատային ժառանգական ազդակին, մինչ Արեւմուտքին համար միջավայրն էր ազդեցիկը: Կը յիշեմ, որ նոյնիսկ մեր ամավերջի քննութեան այս հարցումը կար, որ ի՞նչ է ձեր կարծիքը այս մասին: Այդ ժամանակ ես պատասխանեցի, ու մինչեւ հիմա ալ կը մնամ նոյն կարծիքին, որ կէս-առ-կէս է: Երկու ազդակներն ալ անխուսափելիօրէն իրենց ազդեցութիւնը ունին: Այն ալ

» » »

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ.

ՍԱԳՕ ԵՒ ՀՈՒՐԻԿ ՄՈՒԹԱՅԵԱՆ

Հարցազրույց Տեր Եւ Տիկին Սարգիս (Վահագն) Եւ Հայկուհի (Աճեմեան) Փաթափութեաննորու Հետ

Ըսեմ, որ թէ՛ հօրեղբայրս եւ թէ՛ զարմիկս գիտնականներ եղած են: Ուրեմն ժառանգական ազդակը յատկօրէն կայ: Նոյն ատեն, միջավայրն ալ կար: Մենք բաւական մեծ գրադարան մը ունէինք եւ գիրքն ու ընթերցանութիւնը մեր ընտանեկան առօրեային մաս կը կազմէին: Բնականաբար մեր խօսակցութիւններն ալ իրենց դերը կ'ունենային: Տղաքը փոքր տարիքին խաղամօլ էին եւ երբ չէին ուզէր դաս սորվիլ, ես կը նստէի հետերնին եւ ժամերով կը սերտէինք միասին: Այնպէս որ կանուխէն այդ հիմը դրի: Մինչեւ հիմա անոնք կ'ընդունին այդ մէկը: Անգամ մը որ այդ հիմը կը դրուի, ապա աւելի հեշտ ձեւով կը շարունակուի: Պէտք է նաեւ ըսեմ, որ բաւական շատ ճամբորդութիւններ կատարած ենք, քանի որ Սարգիսը Middle East ճամբորդական ընկերութեան մէջ կ'աշխատէր եւ ձրի տոմսի իրաւունքը ունէր: Այս ճամբորդութիւններն ալ բնականօրէն իրենց մտահորիզոնը կը լայնցնեն: Ուրեմն, ինչպէս կը տեսնես, երկու ազդակներն ալ իրենց դերը կը խաղան:

-Ձեր հիմքը Պէյրուսի մէջ դրուեցաւ: ԱՄՆ հաստատուիլը ի՞նչ դրական կամ բացասական ազդեցութիւն ունեցաւ այդ հիմքին վրայ: Կարելի է՞ ԱՄՆի մէջ ալ այդ հիմքը կազմել, որ ձեր նմանները մէջտեղ գան, թէ՞ նոր ժամանակները նոր պայմաններ կը թելադրեն:

Հ.Փ. Նախ ես ըսեմ, որ ազդեցութիւնը մեծապէս դրական էր: Կասկած չկայ ասոր: Եթէ Արտեմը Պէյրուսի ըլլար, այս դիւրութիւնները պիտի չունենար: Ես իրեն ըսի, որ ինչ որ դուն այստեղ կ'ընես, չէ՞ս կրնար օգնել, որ Հայաստանի մէջ ալ ընեն: Մամա, ըսաւ, մենք այնպիսի սարգաւորումներ կը գործածենք, որ իրենք չունին եւ միայն շատ հարուստ երկրի մը պայմանները կ'ընծեւեն այսպիսի աշխատանք: Պարզ է, որ միայն այստեղ ինք կրնար այդ յաջողութեան հասնիլ:

Ս.Վ. Մեր տղոց վրայ ունեցած դրական ազդեցութեան նման, իմ պարագայիս ալ նոյնը եղաւ: Պէյրուսի մէջ այդ ժամանակ, ձեւով մը մենք մեզի էինք, զոց հասարակութիւն մըն էինք, չգործածելու համար «կեթթօ» բառը: Երջագայելով այս երկրի ընդարձակ տարածութեան մէջ ու ծանօթանալով իրենց ապրելակերպին, մտածելակեպին եւ գործելակերպին, իմ առջեւ լայն հորիզոններ բացուեցան: Ոչ միայն իմ մտայնութեան զարգացման պարագային, այլ նաեւ նիւթերու առատութեան եւ հասանելիութեան պարագային: Եթէ ես Պէյրուսի մնացած ըլլայի, ինծի համար դժուար պիտի ըլլար գրել վէպերս՝ Աշոտ Որորմած, Արշիլ Կորքի, Հաճըր Սիրուն եւ Ինքս ինձ հետ: Այս վերջինի պարագային, հաւանաբար այդ համարձակութիւնը պիտի չունենայի այդպէս ազատօրէն արտայայտուելու:

-Որպէս ծնողք, ունիք ձեր նախասիրութիւնները ձեր զաւակներուն կերտելիք ապագային նկատմամբ: Կանուխ տարիքէն զանոնք կը մղէ՞ք ձեր նախասիրութեան գծով, թէ՞ ազատ կը թողուք կատարելու իրենց ընտրութիւնները: Բարեկեցիկ ապրելակերպ մը ապահովելու հեռանկարը ի՞նչ դեր կը խաղայ այստեղ:

Հ.Փ. Բացարձակապէս ոչ: Երկուքս ալ որեւէ բան չենք պարտադրած: Նկատի առած մեր երեք զաւակներուն ալ ուշիմութիւնը իրենց դասերուն մէջ, գիտէինք որ համալսարանական կրթութեան հետամուտ պիտի ըլլային եւ ուրեմն պիտի կարենային բարեկեցութիւն ապահովել:

Ս.Վ. Այո, երկուքս ալ այդ ազատութիւնը տուած ենք իրենց, ընտրելու իրենց նախասիրութիւնը: Այդ մասին երբէք չենք մտածած:

-Օրինակ, ըսել կ'ուզեմ, որ եթէ Լիբանան մնացած ըլլայիք, թերեւս ընդհանուր կարծիքին հետեւելով ըսէիք անոնց, որ եթէ գիտութեան կամ արուեստի ասպարէզին մէջ նետուէին, պիտի կարենայի՞նք այսպէս ըսած՝ «փորձերն ինչպէս կ'ընեն»:

Ս.Վ. Եթէ Լիբանան մնացած ըլլայինք, Արան երկտրական ճարտարագէտ մը պիտի ըլլար, քանի այդ ուսման կը հետեւէր, եւ շատ հաւանաբար շինարարի մը քով պիտի աշխատէր շէնքերու կառուցման մէջ: Մեր զաւակները երբէք առեւտրական հակումներ չունէին: Այստեղ ասպարէզը շատ աւելի ընդարձակ էր եւ օրինակ, Արտեմին, բազմամիլիոն տարողութեամբ Scripps ընկերութիւնը գինք համալսարանէն խլեց եւ իրեն յանձնեց հսկայ տարրալուծարան մը 25-30 գիտաշխատողներով, որոնցմէ շատեր դոկտորականի տէր էին: Տարրալուծարանի այդ ծրագրի անունն ալ իր անունով՝ Փաթափութեան անուանեցին:

-Ընդհանրապէս զաւակներ կը հետեւին իրենց ծնողաց ասպարէզին, բայց ձեր պարագային բոլորովին տարբեր եղաւ:

Ս.Վ. Մենք այդ տեսակ ծնողք չէինք: Միշտ իրենց ազատութիւնը եւ կարծիքները նկատի կ'առնէինք ու մտիկ կ'ընէինք: Բնականաբար, ի յարկին որոշ ճշտումներ կ'ընէինք, բայց երբ հարցը կու գար գիտական խնդիրներու, ապա հոն մասնաւոր խորհուրդներ չէինք կրնար տալ: Օրինակ, Արտեմին



պարագային, ինք պիտի որոշէր, որ բժշկութեան պիտի հետեւի, թէ՛ գիտահետազոտութեան:

Հ.Փ. Պէտք է ըսել, որ Արան, պատանի հասակէն մեծ հասունութիւն ցոյց տուած է եւ գիտէինք, որ ճիշտ ուղղիով պիտի ընթանայ: Երբ ինք երկտրական ճարտարագիտութեան դասը կ'առնէր, այնքան խանդավառուած էր այդ նիւթով, որ գիտէինք թէ այդ ուղղութիւնը պիտի բռնէ: Հուրիի պարագային, ճիշտ է, որ վկայուեցաւ որպէս ճարտարագէտ, բայց իր մէջ մարդասիրութիւնը եւ ծառայելու մարմաջը, զինք մղեց ուսուցչութեան եւ տարիներով շատ սիրուած ուսուցչուհի մըն էր: Այդ գծով, մեր նկարագիրները շատ մօտ էին իրարու:

-Որպէս վիպագիր, խմբագիր, մտաւորական, ի՞նչ են ձեր նախատեսութիւնները ձեր ասպարէզի ապագայի նկատմամբ, ԱՄՆ-ի կամ սփիւռքի որեւէ հայ համայնքի պարագային:

Ս.Վ. ԱՄՆ-ի մէջ մենք վերջին մոնիթինգներն ենք: ԱՄՆ-ի մէջ հայ գրող ալ չգար: Նախ, դպրոցներուն մէջ այդ մակարդակը չկայ: Կրնայ ըլլալ, որ ամերիկահայ գրող ունենանք, բայց՝ անգլերէնով ստեղծագործող: Այդ մէկը չեմ բացառէր, բայց հայերէն լեզուով չեմ կարծէր որ այդ ըլլայ: Մեր սերունդը վերջինն է եւ ձերն ալ նախավերջինը կը նկատեմ, որոնց սկզբնական կազմաւորումը Պէյրուսէն էր: Եթէ Հայաստանէն գան, անոնք գրականութեան տարբեր կը մօտենան: Մի քանիներ անգլերէնով հրատարակութիւններ ըրին ու ինքզինքնին շեփոթեցին, կարծելով որ Սարոյեաններ պիտի ըլլան, բայց արդիւնաւէտ չեղաւ: Արդարեւ, այդ տեսակետով հաշտուած ենք այդ իրականութեան հետ:

-Սփիւռքի այլ համայնքներու պարագային ալ նոյն կարծիքի եք:

Ս.Վ. Նայիր Պէյրուսին, որ լաւագոյն փաստն է: Ծաղկուն Պէյրուսի մէջ ալ մարդ չմնար: Արա Արծրունին զնաց, Արամ Սեփեթեանը զնաց...

-Ձեր երկուքին հարուստ վաստակին ընդմէջէն ի՞նչ պատգամ կ'ուզէք փոխանցել աշխարհասփիւռ հայութեան:

Հ.Փ. Հայաստանի կողքին ըլլալ եւ օգնել կարելի եղածին չափ: Կուսակցութիւնները հայրենիքին պիտի ծառայեն: Անկէ վեր չեն կրնար դատուիլ:

Ս.Վ. Կը հաւատանք, որ Հայաստանը մեր վերջին կուռանն է: Անկից դուրս բան մը չունինք: Առանց Հայաստանի դժբախտաբար «փոշա» ժողովուրդ մը պիտի ըլլանք ու կորսուինք: Ես մեծապէս կը գնահատեմ Հնչակեաններուն կեցուածքը, որ եղած է, իմ հօրմէս սկսելով մինչեւ այսօր, առանց այլեւայլի, Հայաստանի կողքին: Ասիկա հաճոյախօսութիւն թող չթուի, որովհետեւ համոզումս այդպէս է: Ուրեմն ի՞նչ պատգամ կ'ուզես տամ, բացի անբասիր հայրենասիրութեան կոչէն: Հայաստանը մեր առաջնահերթութիւնը պէտք է ըլլայ: Ով կ'ուզէ թող ըլլայ իշխանութեան վրայ: Կ'ուզենք, որ մեր ուզած դեմոկրատական ու ժողովրդավար, անբասիր կառավարութիւնը ըլլայ: Բայց եթէ չըլլայ իսկ, անկարելի է, որ մենք Հայաստանի դէմ դիրքորոշուիլ մտածենք կամ աշխատինք: Մեր պատգամը այս է՝ սիրեցէք ափ մը մեր հայրենիքը. անկէ վեհ ուրիշ բան չունինք: Կուսակցութիւնները հայրենիքի համար ըլլան, եւ ոչ թէ հայրենիքը կուսակցական աթոռներու համար:

Ծանօթ. Հարցումները պատրաստեցին Անի Եփրեմեան եւ Յարութ Տեր Դաւիթեան: Հարցազրույցը վարեց Յարութ Տեր Դաւիթեան, 10 Յոկտ. 2023-ին Լոս Անջելէսի «Արարատ» տան մէջ:

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿ.
ՎԱՐԴԱՆ ԵՒ ԿԱՐԻՆԷ ՏԵՓՈՅԵԱՆ**



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԲԱՐԵԲԱՍՏԻԿ
ԱՌԻԹՈՎ ԿԸ ՄԱՂԹԵՆՔ ԽԱՂԱՂ,
ԲԱՐԵԲԵՐ ԵՒ ԵՐՁԱՆԻԿ ՕՐԵՐ

ՏՈՔԹ. ԵՒ ՏԻԿ. ՄՀԵՐ ՊԱՊԵԱՆ



Հայաստան 2023 Տարուան Գլխաւոր Իրադածութիւնները

Հայաստան՝ Ձրօսաշրջութեան Լաւագոյն Ուղղութիւններէն Սէլը



Տարուան ընթացքին բազմաթիւ պարբերականներ եւ մասնագիտական հրատարակութիւններ Հայաստանը ճանչցան ճամբորդութիւններու համար հետաքրքրական ուղղութիւններէն մին:

Հեղինակաւոր «Forbes» ամսագիրը զբօսաշրջութեան լաւագոյն ուղղութիւններու շարքին դասեց Հայաստանը, չափոնելով որ, գեղեցիկ երկիր է՝ հարուստ պատմութեամբ եւ մշակութով: Այն հիանալի բնապատկերներու տուն է: «Կովկասեան լեռները եւ Սեւանայ լիճը, ինչպէս նաեւ բազմաթիւ հնագոյն ճարտարապետական հրաշքներ, ինչպիսիք են Գառնիի տաճարը եւ Հաղպատի վանքը», կը գրէր ամսագիրը, չիշելով նաեւ հայկական համեղ խոհանոցը: Յօդուածագիրը համեղ սնուիլ սիրողներուն խորհուրդ կու տայ անպայման փորձել հայկական խաշը, տոլման, մանթին եւ, ի հարկէ, տնական թթու վարունգը:

Նման հրապարակումները կարեւոր դեր ունեցան Հայաստանի մէջ զբօսաշրջութեան զարգացման մէջ: Տարուան առաջին 11 ամիսներուն Հայաստան ընդունեց մրցանիշային թիւով՝ 2.2 միլիոն այցելուներ:

Հայաստանի Համար Հնդկաստան Դարձաւ Զինատեսակներու Մատակարարման Գլխաւոր Երկիր



2023 տարին Հայաստան սկսաւ լայն ծաւալի աշխատանք տանիլ Զինուած Ուժերը արդիական գէնքերով օժտելու նպատակով: Հնդկաստան դարձաւ առաջինը այն երկիրներու շարքին, որոնք պատրաստակամութիւն յայտնեցին Հայաստանի գէնք վաճառելու: Տարուան ընթացքին հնդկական մամուլին մէջ լոյս տեսան տարբեր հրապարակումներ՝ Հայաստանի վաճառուող զինատեսակներու մասին:

Համացանցի վրայ երեւցան տեսարաններ, թէ ինչպէս «Tanaka» հրթիռային կայանները Պարսկաստանի վրայով կը հասնին Հայաստան:

Փոխադարձ այցելութիւններ եղան երկու երկիրներու պաշտպանութեան նախարարութիւններու ներկայացուցիչներուն կողմէ:

Նոյեմբերին, հրետանային համակարգերու արտադրութեամբ զբաղող հնդկական «Bharat Forge» ընկերութիւնը հաստատեց, որ վերջերս ցուցադրուած «MAR 155» ինքնագնաց հաուպիցները նախատեսուած են Հայաստանի համար: «MAR 155»-ը արդիական հրետանային համակարգ է, որուն մէջ միաւորուած են հզորութիւնը, ճշգրտութիւնը եւ շարժունակութիւնը: 155 միլիմետր/39 տրամաչափի թնդանօթով, քարշակող 4 անիւներով համակարգը բացառիկ մանեւրականութիւն կ'ապահովէ որեւէ տեղանքի մէջ: Մինչեւ 30 աստիճան անկիւնները յաղթահարելու, «կրակել եւ փախչելու» կարողութիւնները գայն կը դարձնեն ընդհանրական եւ անեղ գէնք մարտական ժամանակակից բեմագրութիւններուն մէջ:

Զօրամասի Կացարանին Սէջ Բռնկած Հրդեհին Պատճառաւ Զոհուեցան 15 Զինուորներ

ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան «N» զօրամասի կացարանին մէջ Յունուար 19-ին բռնկած հրդեհի հետեւանքով զոհուեցան է 15 զինուորներ: Գեղարքունիքի մարզի Ազատ գիւղի տարածքին մէջ գտնուող զօրամասի վառարաններու օգտագործման օրէնքներու խախտումներուն պատճառաւ: Պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանի հրամանով իրենց պաշտօններէն ազատուեցան բազմաթիւ հրամանատարներ:

Հայաստանը ՀԱՊԿ Յարաբերութիւններու Խզում

Ռուսաստանի գլխաւորած Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւնները շարունակեցին զահալիժիլ: 2022-ի Սեպտեմբերին, երբ Ազերի բանակը դարձեալ ներխուժեց Հայաստանի հողերէն ներս՝ գրաւելով զգալի տարածքներ, Երեւան պաշտօնապէս դիմեց ՀԱՊԿ-ին՝ խնդրելով օգնութեան հասնելու իրենց դաշնակիցին: ՀԱՊԿ ոչ միայն չընդառաջեց օգնութեան խնդրանքին, նոյնիսկ դատապարտումի խօսք չըսաւ Ատրպէյճանի թշնամական քայլերուն մասին: Այս իրողութեան ի տես, Հայաստանի կառավարութիւնը ընդունեց Եւրոպական դիտորդական առաքելութիւն ընդունելու առաջարկը, որ քննադատուեցաւ Մոսկուայի կողմէ:

Տարուան ընթացքին Հայաստան մերժեց ներկայացուցիչներ ուղարկել ԵԱՀԿ-ի բոլոր մակարդակներու ժողովներու:

Նոյեմբերին, վարչապետ Նիկոլ Փաշինեան ներկայ չեղաւ ՀԱՊԿ-ի գագաթի ժողովին, որ կը կայանար Պելաուսիոյ մայրաքաղաք Մինսքի մէջ: Մինչ այդ Հայաստանի մէջ սկսան ձայներ բարձրանալ ՀԱՊԿ-էն դուրս գալու կապակցութեամբ: Սակայն իշխանութիւնները, տարբեր նկատառումներով, տակաւին պատրաստ չեն այդ քայլին դիմելու:

Հայաստանը Թուրքիա Յարաբերութիւններուն Սէջ Խորհրդանշական Քայլեր



Փետրուարի վերջերուն, Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի գլխաւորած պատուիրակութիւնը այցելած է Թուրքիոյ Ատրշաման քաղաքը, ուր հայ փրկարարները աշխատանքներ կ'իրականացնէին՝ երկրաշարժէն տուժածներուն օգնութեան հասնելու նպատակով:

▶▶▶

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.

ՅՈՎՍԷՓ ԵՒ ՄԱՐԻ ՄԵԼԳՈՆԵԱՆ

Հայաստան 2023 Տարուան Գլխաւոր Իրադածութիւնները

Այս այցի ընթացքին Նախարար Միրզոյեան Անգարայի մէջ հանդիպում ունեցաւ Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Մելլուժ Զաւուշօղլուն հետ՝ երկու երկիրներու միջեւ ցամաքային սահմաններու բացման համար:

Յունիսին, առաջին անգամ ըլլալով Հայաստանն ղեկավարի մակարդակով մասնակցեցաւ Թուրքիոյ Թուրքիոյ նախագահի երդմնակալութեան Այդ արարողութեան հրաւիրուած էին տասնեակ երկիրներու ղեկավարներ ու բարձրաստիճան պաշտօնեաներ, անոնց շարքին՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Թուրքիոյ նախագահական համալիրին մէջ վարչապետ Փաշինեանը դիմաւորուեցաւ Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Մելլուժ Զաւուշօղլուն:

Հայաստանի Մէջ Իր Աշխատանքը Սկսաւ ԵՄ Քաղաքացիական Առաքելութիւնը



Փետրուարի 20-ին, Հայաստանի մէջ սկսաւ գործել Եւրոպական Միութեան քաղաքացիական առաքելութիւնը՝ կազմուած շուրջ 100 անդամէ: Հայաստան-Ատրպէյճան սահմանի հայկական կողմը տեղակայուելով ԵՄ դիտորդները նպատակ ունին նպաստել Հայաստանի սահմանամերձ շրջաններուն մէջ կայունութեան եւ հակամարտութենէն տուժած շրջաններուն մէջ կառուցել վստահութեան եւ անվտանգութեան մթնոլորտ:

Տարուան ընթացքին դիտորդներուն թիւը մի քանի անգամ բարձրանալով հասաւ 209-ի:

Անցակէտի Զետեղում Լաչինի Սիջանցքի Սկզբնաւորութեան



Մարտի սկիզբներուն ատրպէյճանական կողմը ստուգման յատուկ սարքեր գետեղեց ամիսներէ ի վեր շրջափակման տակ գտնուող Արցախահայտնութեան վիճակը դարձնելով աւելի խորթին: «Նոյեմբեր 9-ի յայտարարութեամբ Լաչինի միջանցքին անցակէտեր ստեղծելու հարց նախատեսուած չէ», յայտարարեց Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով, սակայն Մոսկուան յաւելեալ ջանք չըրաւ իր

խաղաղապահներուն վստահուած ճանապարհը բանալու համար:

Համատարած կոչերը, դատապարտումի խօսքերը եւ նոյնիսկի ՄԱԿ-ի Միջազգային Դատարանի որոշումը՝ միջանցքի արգելափակելու կապակցութեամբ, անտեսուեցան Պաքուի կողմէ, փոխարէնը Ատրպէյճան փորձեց հարցը ներկայացնել որպէս իր ներքին խնդիրը:

Այս ընթացքին Արցախի ու Ատրպէյճանի ներկայացուցիչներուն միջեւ, Ռուս խաղաղապահներու միջնորդութեամբ տեղի ունեցած մի քանի հանդիպումները որեւէ արդիւնքի չհասան, երբ ատրպէյճանական կողմէ ուզեց օրակարգի վրայ դնել Արցախը Ատրպէյճանի կազմին մէջ մտնելու հարցը:

Փաշինեան Յայտարարեց, Որ Կան Ատրպէյճանի Հետ Ռազմական Հաւասարակշռութիւնը վերականգնելու Լուրջ Ժրագիրներ

Ապրիլ 18-ին, Ազգային Ժողովի նիստին վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց որ, կան Ատրպէյճանի հետ ռազմական հաւասարակշռութեան ճեղքուածքը վերականգնելու լուրջ ծրագիրներ, որ, սակայն, հրապարակային պէտք չէ քննարկել: Փաշինեան պատրաստակամութիւն յայտնեց որոշ հարցեր նաեւ խորհրդարանական ընդդիմութեան հետ քննարկելու:

«Բանակի փոփոխութիւնն էլ առաջին հերթին մարդու մտքի փոփոխութիւնից է պէտք սկսել. բացի ֆիզիքական փոփոխութիւնից, շատ կարեւոր է բովանդակային փոփոխութիւնը», ըսաւ վարչապետը:

Աշխարհի Տարբեր Վայրերուն Մէջ Ոգեկոչուեցաւ Հայոց Յեղասպանութեան 108-րդ Տարելիցը



Ապրիլ 24-ին, Հայութիւնը նշեց Հայոց Յեղասպանութեան 108-ամեակը անգամ մը եւս յիշեցնելով իր պահանջատիրութեան մասին: Աշխարհի տարբեր մայրաքաղաքներուն մէջ նախագահներ, վարչապետներ, խորհրդարաններու անդամներ եւ այլ բարձրաստիճան պաշտօնեաներ հանդէս եկան յայտարարութիւններով՝ դատապարտելով Հայ Ժողովուրդի դէմ կատարուած անարդարութիւնը:

Երեւանի մէջ բազմահազար մարդիկ այցելեցի Ծիծեռնակաբերդի յուշահամալիր՝ յարգանքի տուրք մատուցելու Թուրքիոյ կողմէ գործադրուած, 20-րդ դարու առաջին Յեղասպանութեան զոհ՝ աւելի քան մէկուկէս միլիոն հայերու յիշատակին: Առաւօտեան, Հայաստանի ղեկավարութիւնը Ծիծեռնակաբերդի Յուշահամալիրէն ներս յարգանքի տուրք մատուցեց Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակին:

Աւելի ուշ Յուշահամալիր այցելեց նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. եկեղեցական դասի ընկերակցութեամբ:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Ճօ Պայտըն ուղերձ յղած էր Հայոց Յեղասպանութեան 108-րդ տարելիցին առնչութեամբ: «Այսօր մենք դադար կը վերցնենք՝ յիշելու Մեծ Եղեռնի՝ Հայոց

▶▶▶

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**GLENDALÉ WEST PHARMACY
GLENDALÉ**

Հայաստան 2023 Տարուան Գլխաւոր Իրադաճութիւնները

Ցեղասպանութեան զոհերը եւ կը թարմացնենք մեր խոստումը՝ երբեք չմոռնալ: 1915 թուականի Ապրիլ 24-ին Օսմանեան իշխանութիւնները ձերբակալեցին Կոստանդնուպոլսոյ հայ մտաւորականները եւ համայնքի ղեկավարները, որով սկիզբ դրուեցաւ հայ համայնքի դէմ բռնութեան համակարգուած արշաւին: Անոր յաջորդող տարիներուն մէկուկէս միլիոն հայեր տեղահանեցին, կոտորեցին կամ երթի տարին դէպի մահ՝ ողբերգութիւն, որ ընդմիշտ ազդեց հայ ընտանիքներու սերունդներուն վրայ: Այս ցաւալի պատմութիւնը յիշելով միանալով աշխարհի տարբեր երկիրներուն՝ մենք նաեւ կ'անդրադառնանք հայ ժողովուրդի տոկունութեան եւ վճռակալութեան: Ողջ մնացածներէն շատերը ստիպուած եղան նոր կեանք սկսիլ նոր երկիրներու, այդ շարքին՝ Միացեալ Նահանգներու մէջ», իր խօսքին մէջ ըսաւ Ամերիկայի նախագահը:

Ստեփանակերտը, անխուսափելիօրէն պիտի ուժեղանար ճնշումը Լեւոնային Ղարաբաղի Մարտունու վրայ եւ որ ամենակարեւորն է՝ մեր շուրջ 25 հազար զինուոր կը յայտնուէր շրջափակման մէջ ընկնելու վտանգի տակ», լսումներու ընթացքին ըսաւ Փաշինեան: Վարչապետը շեշտեց, որ Նոյեմբեր 9-ի յայտարարութիւնը պատերազմը դադարեցնելու 5-րդ փորձն էր, Հոկտեմբեր 7-ին, 9-ին, 13-ին 19-ին հրադադար հաստատելու բանակցութիւնները արդիւնք չեն տուած, քանի որ Ալիեւը պարբերաբար նորանոր պահանջներ ներկայացուցած էր հայկական կողմին: Ընդ որում, ըստ Հայաստանի ղեկավարին, արդէն Հոկտեմբեր 19-ին Պաքուն կը պահանջէր վերադարձնել ոչ միայն 7 շրջանները, այլեւ Շուշի պէտք է վերադառնային ատրպէյճանցիները, կառուցուէր Շուշի տանող նոր ճանապարհ եւ այլն: «Այսինքն՝ ըստ Ատրպէյճանի այդ պահի առաջարկի, Շուշիում պէտք է լինէր առնուազն 95 տոկոս ատրպէյճանական բնակչութիւն, նրանք պիտի Շուշին Ատրպէյճանին կապող առանձին ճանապարհ ունենային, որը պէտք է դուրս լինէր Լաչինի միջանցքից եւ լինէր իրենց վերահսկողութեան ներքոյ: Սա նշանակում է, որ այնտեղ կարող են լինել նաեւ ատրպէյճանական զինուած ստորաբաժանումներ, սա էլ իր հերթին նշանակում է, որ խօսքն առանց չափազանցութեան Շուշին Ատրպէյճանին յանձնելու մասին էր», յայտարարեց Վարչապետը:

Պրիւքէլեան Հանդիպումները Մնացին Ապարդիւն

Մայիսի կէսերուն, Պրիւքէլի մէջ տեղի ունեցաւ Եւրոպայի Խորհուրդի նախագահ Շարլ Միշելի հրաւիրած հերթական հանդիպումը՝ Հայաստանի վարչապետի եւ Ատրպէյճանի նախագահի մասնակցութեամբ: Միշելի նախաձեռնած նախորդ նման հանդիպումին կը մասնակցէր նաեւ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնը, սակայն Պաքուն մերժեց Ֆրանսայի նախագահի մասնակցութիւնը՝ մեղադրելով անոր Հայաստանի ի նպաստ կողմնակալութեան մէջ: Հայաստան պնդեց Ֆրանսայի ներկայութեան վրայ ու այդպիսով պրիւքէլեան հանդիպումները ժամանակ մը առկախուեցան:

Սիրոյեան Այրարատի Հանդիպումներ Ուաշինգթոնի Մէջ



Տարուան ընթացքին արտաքին գործոց նախարարներու մակարդակով մի քանի հանդիպումներ կայացան Միացեալ Նահանգներու մայրաքաղաք Ուաշինգթոնի Մէջ: Յունիս 27-29-ին Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը եւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարար Ճէյհուն Պայրամովը Վիրճինիա նահանգի Արլինկթըն քաղաքի ձորճ Շուլցի արտաքին գործերու ազգային ուսումնական կեդրոնին մէջ ունեցան երկկողմ բանակցութիւններ: Ուաշինկթընի մէջ արտաքին գործերու նախարարները հանդիպեցան ԱՄՆ պետական քարտուղար Էնթոնի Պրինքընի եւ ԱՄՆ նախագահի՝ ազգային անվտանգութեան հարցերով խորհրդական Ճէյք Սալիվանի հետ:

Յունիս 1-ին՝ Քիշնէի մէջ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը՝ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի, Գերմանիոյ վարչապետ Օլաֆ Շոլցի եւ Եւրոպական Խորհուրդի նախագահ Շարլ Միշելի հետ բանակցութիւններ կատարեցին: Էլիզէի պալատը յայտարարութիւն տարածեց, որուն մէջ ըսուած էր. «ՀՀ վարչապետը եւ Ատրպէյճանի նախագահը վերահաստատած են 2022 թուականի Հոկտեմբեր 6-ին Փրակի մէջ ձեւակերպուած իրենց պարտաւորութիւնները՝ Ալմա Աթայի հռչակագրով որոշուած սահմաններու պահպանման վերաբերեալ: Անոնք վերահաստատած են Հայաստանի ու Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան փոխադարձ յարգանքը: «Եւրոպական առաջնորդները Հայաստանին ու Ատրպէյճանին կողք ըրած են պահպանելու իրենց բոլոր պարտաւորութիւնները, մասնաւորապէս՝ ռազմագերիներու շուտափոյթ ազատ արձակման վերաբերեալ: «Եւրոպական առաջնորդները նաեւ ընդգծած են ԼՂ հայերու իրաւունքներու եւ անվտանգութեան երաշխիքներու ներդրման կարեւորութիւնը:

Վարչապետ Փաշինեան Մասնակցեցաւ 44-օրեայ Պատերազմի Հանգամանքները Ուսումնասիրող Խորհրդարանական Քննիչ Յանձնաժողովի Լուծումներուն



Յունիս 20-ին, ելոյթ ունենալով 44-օրեայ պատերազմին հանգամանքները ուսումնասիրող խորհրդարանական Քննիչ Յանձնաժողովին առջեւ Փաշինեան պարզաբանեց, որ 2020-ի Նոյեմբեր 9-ի յայտարարութիւնը ստորագրելու համար շրջադարձային էր Շուշիի անկումը: «Շուշիի կորստից յետոյ, ըստ էութեան, հարուածի տակ էր յայտնուելու

ԱՄՆ պետական քարտուղար Էնթոնի Պրինքըն յայտնեց որ, Հայաստանն ու Ատրպէյճանը ձեռք բերած են խաղաղութեան համաձայնագրի «հետագայ յառաջընթաց»՝ չնայած ծանր աշխատանքին: «Որքան կը մօտենաք համաձայնագրի ձեռք բերման, այնքան աւելի դժուար կը դառնայ որոշ պարագաներու մէջ, քանի որ ամենադժուար հարցերը կը ձգուին յետոյի», ըսաւ Պրինքըն: Անոր խօսքով՝ բանակցութիւնները տեղի ունեցած են «անկեղծութեան, բացութեան եւ շիտակութեան» մթնոլորտի մէջ, քանի որ երկու կողմերն ալ ցուցաբերած են բանակցութիւնները լրջօրէն վարելու պատրաստակամութիւն՝ համաձայնագրի ձեռք բերման նպատակով: «Մենք անհամբեր կը սպասենք այս գործընթացին շարունակութիւնը նաեւ յառաջիկայ շաբաթներուն՝ օգտուելու այն խթանէն, որուն մենք օգնած ենք հասնիլ այս հանդիպումներուն շնորհիւ, տարբեր առանձին մասերու հետագայ համաձայնութեան միջոցով յառաջիկայ շաբաթներուն եւ ամիսներուն՝ կրկին ընդհանուր եւ վերջնական համաձայնագրի հասնելու նպատակով», բանակցութիւններուն արդիւնքները ամփոփելով ըսաւ Պրինքըն:




ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏՕՔԹ. ՄԻԼՎԱ ԳԱՐԱՅԵԱՆ

Հայաստան 2023 Տարուան Գլխաւոր Իրադածութիւնները

ՍԴՀԿ Ներկայացուցիչներու Հանդիպումները Հայաստանի Վարչապետին Ու Նախագահին Հետ



Յուլիս 7-ին Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչները՝ Կեղրոնական Վարչութեան ատենապետ Համբիկ Սարաֆեանի գլխաւորութեամբ: Վարչապետը կարեւորեց ՀՀ կառավարութեան եւ ՍԴՀԿ-ի միջեւ համագործակցութիւնը եւ ընդգծեց կուսակցութեան ներգրաւուածութիւնը՝ արտախորհրդարանական քաղաքական ուժերուն հետ համագործակցութեան խորհրդակցական ժողովին: Նիկոլ Փաշինեան շեշտեց ՍԴՀԿ-ի դերը Սփիւռքի համայնքներուն մէջ եւ այս առումով կարեւոր նկատեց նման հանդիպումներու միջոցով մեր հայրենակիցներուն անհրաժեշտ տեղեկատուութեան փոխանցումը:

Ընկ. Համբիկ Սարաֆեան ՍԴՀԿ-ի աջակցութիւնը յայտնեց կառավարութեան՝ երկրին առջեւ ծառայած մարտահրաւէրներու յաղթահարման գործին մէջ: Զրուցակիցները քննարկեցին առկայ խնդիրներու լուծման ու այդ ուղղութեամբ իրականացուող քայլերուն վերաբերող հարցեր:

ՍԴՀԿ պատուիրակութիւնը այցելեց նաեւ Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեանին:


Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Հայաստանի ներկայ մարտահրաւէրներուն եւ առաջնահերթութիւններուն: ՍԴՀԿ Կեղրոնական վարչութեան անդամները վերահաստատեցին իրենց պատրաստակամութիւնը՝ աշխոյժ ներգրաւուածութիւն ունենալու եւ աջակցութիւն ցուցաբերելու Հայաստանի առջեւ ծառայած խնդիրներու միասնական լուծումներ փնտելու եւ համահայկական հարցերու մէջ ջանքերը մէկտեղելու գործին մէջ:

ձեռնարկել բոլոր անհրաժեշտ եւ բաւարար միջոցները՝ ապահովելու «Լաչինի միջանցքով» Հայաստանի մէջ բժշկական օգնութիւն ստանալու կարիք ունեցող ծանր հիւանդ անձերու տեղաշարժը:

Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանը փաստացի վերահաստատեց գործող իրադրութեան պայմաններուն մէջ իր 2022 թուականի Դեկտեմբեր 21-ի որոշման կատարման անհրաժեշտութիւնը եւ այն պէտք է պարտադիր կատարուի Ատրպէյճանի կողմէ:

Պաքոն անտեսեց միջազգային դատարանի այս որոշումը եւս:

Ընդդիմութեան Իշխանափոխութեան Հասնելու Գործողութիւնները Չհասան Իրենց Նպատակին



Երկար դադարէ ետք, Սեպտեմբերին ընդդիմութիւնը դարձել իջու փողոց՝ իշխանափոխութիւն իրագործելու նպատակով: Երեւանի «Ազատութեան» հրապարակին վրայ տեղի ունեցած հանրահաւաքին ներկայ եղան Ռոբերտ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը: Ելոյթ ունեցողները խօսեցան Արցախի հարցի մասին՝ քննադատելով ներկայ իշխանութիւններուն վարած քաղաքականութիւնը՝ միաժամանակ պահանջելով վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականը: Իրագեկ Քաղաքացիներու Միաւորումի հաշուարկներուն համաձայն, հանրահաւաքին ներկայ եղած են շուրջ 10,500 հոգիներ:

Հանրահաւաքին պատրաստուելու նպատակով ընդդիմութիւնը փորձեց ճանապարհներ փակելով կաթուածահար ընել մայրաքաղաքը, սակայն հոն եւս չյաջողեցաւ ստանալ քաղաքացիներու աջակցութիւնը:

Ընդդիմութեան ղեկավարներէն Վազգէն Մանուկեան Սեպտեմբեր 30-ին տեղի ունեցած հանրահաւաքին՝ ի տես սակաւթիւ մասնակցութեան յայտարարեց, որ իրենք գերազանհատած են իրենց մարդկային եւ կազմակերպչական ուժը:

Ատրպէյճանի Նպատակը Լեռնային Ղարաբաղը Հայաթափելն Է Կանխատեսեց Փաշինեան

Սեպտեմբերի առաջին շաբաթը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան անդրադարձաւ Լեռնային Ղարաբաղի եւ տարածաշրջանային հարցերուն: «Հայաստանը կ'ակնկալէ, որ միջազգային հանրութիւնը ջանքեր կը գործադրէ՝ թոյլ չտալու Լեռնային Ղարաբաղի մէջ ցեղային զտումներու քաղաքականութեան իրականացումը», Արցախի անկախութեան հռչակագրի ընդունման օրուայ առիթով տարածած իր ուղերձին մէջ յայտարարեց Հայաստանի վարչապետը: Փաշինեան շեշտեց որ, Ղարաբաղի ժողովուրդը ցեղային զտման առջեւ կանգնած է Լաչինի միջանցքի շրջափակման, առաջին անհրաժեշտութեան սննդամթերքի, գազի եւ էլեկտրականութեան մատակարարումներու Դադարեցման պատճառով: «Յանկանում եմ եւս մէկ անգամ ընդգծել՝ հիմնադուրկ են Լեռնային Ղարաբաղի՝ որպէս տարածքային միաւոր գոյութիւն չունենալու եւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի յանգուցալուծուած լինելու մասին բոլոր յայտարարութիւնները, քանի դեռ անբեկանելիօրէն հասցէագրուած չեն ԼՂ հայութեան անվտանգութեան եւ իրաւունքներու»:



Եւրոպական Խորհրդարանի Յանձնաժողովը Կոչ Ըրաւ Թուրքիային՝ ճանչնալու Հայոց Ցեղասպանութիւնը

Եւրոխորհրդարանի՝ Միջազգային յարաբերութիւններու հարցերով կոմիտէն կոչ ւրաւ Անգարային՝ ճանչնալու Հայոց Ցեղասպանութիւնը եւ բանալու սահմանը՝ թուրք եւ հայ ժողովուրդներուն միջեւ իրական հաշտեցման ուղի հարթելու համար Փաստաթուղթը նաեւ Թուրքիոյ կոչ կ'ընէր ամբողջութեամբ կատարելու հայկական մշակութային ժառանգութիւնը պաշտպանելու իր պարտաւորութիւնները:

Զեկուցը ողջունեց մինչ այժմ ձեռք բերուած յառաջընթացը եւ գոհունակութեամբ կը նշէ Հայաստանի վարչապետին ներկայութիւնը Թուրքիոյ նախագահի երդմնակալութեան:

ՄԻԵԴ-ը Վերահաստատեց Նախկին Որոշումը՝ Ատրպէյճանին Պարտադրելով Բանալ Լաչինի Միջանցքը

Յուլիս 12-ին Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանը՝ ուսումնասիրելով Լաչինի միջանցքը ապաշրջափակելու առնչութեամբ Ատրպէյճանի նկատմամբ միջանկեալ միջոցներ կիրառելու ՀՀ կառավարութեան պահանջը, վերահաստատեց իր՝ 2022 թուականի Դեկտեմբեր 21-ին կայացուցած որոշումը, այն է՝ պարտաւորեցնել Ատրպէյճանին

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.
ԱՐԱ ԵՒ ՍՈՆԻԱ ՊԱՊԱՅԵԱՆ**

ՄԱՍԻՍ - 2024

Հայաստան 2023 Տարուան Գլխաւոր Իրադածութիւնները

պաշտպանութեան խնդիրները», յայտարարեց վարչապետը: Փաշինեանի խօսքով՝ Հայաստանը, Լեռնային Ղարաբաղը եւ միջազգային հանրութիւնը յստակ կ'արձանագրեն, որ հակամարտութեան համապարփակ ու երկարատեւ կարգաւորումը պէտք է տեղի ունենայ բացառապէս խաղաղ գործընթացի, այդ շարքին՝ միջազգային գործընթացի ներքեւ՝ Պաշտպանական երկխօսութեան միջոցով:

Ներքին Հակասութիւններ Արցախի Սեյ

2023 տարին բնորոշուեցաւ Արցախի մէջ ծագած ներքին հակասութիւններով: Նախագահ Արայիկ Յարութիւնեանին պարտադրուեցան բազմաթիւ որոշումներ, որոնք համահունչ չէին իր տեսլականի հետ:

Սեպտեմբերին Արայիկ Յարութիւնեան ստիպուած եղաւ հրաժարելու իր պաշտօնէն: Նորհրդարանը նոր նախագահ ընտրեց Սամուէլ Շահրամանեանը, որուն պաշտօնավարումը եղաւ կարճատեւ, երբ Ատրպէյճան անցաւ լայնածաւալ ռազմական գործողութիւններու:

Տեղի Ունեցան Հայ-Ամերիկեան Զորավարժութիւնները



Սեպտեմբերին, Հայաստանի մէջ մեկնարկեցին հայ-ամերիկեան զորավարժութիւնները: Վարժանքները ունէին խաղաղապահ բնոյթ. հայ եւ ամերիկացի զինուորականները կատարելագործեցին միջազգային խաղաղապահ առաքելութիւններուն մէջ հակամարտող կողմերուն միջեւ կայունացման գործողութիւնները:

Ամերիկեան կողմէն վարժանքներուն մէջ ընդգրկուած էր 85, իսկ Հայաստանը կը ներկայացնէր 175 զինուորական:

Թէեւ համատեղ զորավարժութիւնները՝ Հայաստանի եւ Միացեալ Նահանգներու մասնակցութեամբ, սկսած 20 տարի առաջ, Ռուսաստանի իշխանութիւնները ամենատարբեր մակարդակներով քննադատեցին այս զորավարժութիւնները: Ռուսաստանի արտաքին գործերու նախարար Սերկէյ Լաւրով յայտարարեց, թէ որեւէ լաւ բան չի տեսներ, որ ՆԱԹՕ-ի յարձակողական երկիրը կը փորձէ ներթափանցել կովկաս:

Սամուէլ Շահրամանեան Ընտրուեցաւ ԼՂ Նախագահ

Արցախի Ազգային Ժողովի արտահերթ նիստով, գաղտնի քուէարկութեամբ, Սամուէլ Շահրամանեանը ընտրուեցաւ Արցախի նախագահ: Շահրամանեանը իր ելոյթին մէջ յայտարարեց, որ «Հայաստանի Հանրապետութիւնը յետպատերազմեան իրողութիւններէ հաշուառմամբ վերանայելով իր անվտանգային հայեցակարգը, փաստացի ետ է կանգնել Արցախի անվտանգութեան երաշխաւորի իր բազմամեայ առաքելութիւնից եւ որդեգրել է խաղաղութեան օրակարգ անունով մի մօտեցում, որի առանցքն է կազմում Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան ճանաչելը, ներառեալ Արցախը,



պայմանով, որ ապահովուած լինեն արցախահայութեան հիմնական իրաւունքներն ու ազատութիւնները»: Ատրպէյճանն ալ, ըստ նախագահի թեկնածուին, օգտուելով նշուած, ինչպէս նաեւ միջազգային դերակատարներու առարկայական քայլեր չկատարելու փաստէն, աստիճանաբար կը խախտէ 2020 թիւականի Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան դրոյթները եւ կը մեծցնէ ճնշումը Արցախի վրայ:

Տիգրան Աւինեան Ընտրուեցաւ Երեւանի Քաղաքապետ

Սեպտեմբեր 17-ի տեղի ունեցան Երեւանի Աւագանիի ընտրութիւնները, որոնց ընթացքին մասնակից ուժերէն որեւէ մէկը չկարողացաւ ապահովել մեծամասնութիւն:

Ընդդիմադիր երեք կուսակցութիւններ՝ «Հանրային Զայն», «Ազգային Առաջընթաց» եւ «Մայր Հայաստան» միասնաբար ունէին բաւարար ձայներ՝ ստանձնելու համար մայրաքաղաքի իշխանութիւնը: Սակայն, ներքին տարակարծութիւններու պատճառ «Քաղաքացիական Պայմանագիր» եւ «Հանրապետութիւն» կուսակցութիւնները յաջողեցան Տիգրան Աւինեանը հասցնել քաղաքապետի աթոռին:

Լայնածաւալ Ռազմական Գործողութիւններ Լեռնային Ղարաբաղի Դեմ

Սեպտեմբեր 19-ին, Ատրպէյճանի զինուած ուժերը սկսան Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքի հրետակոծութիւնը: Ժողովուրդի ուղղուած ելոյթով հանդէս եկաւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարելով որ, Ատրպէյճանի թիրախը եւ նպատակը ՀՀ-ն ռազմական գործողութեան մէջ ներքաշելն է: «ՀՀ սահմանների երկայնքով իրադրութիւնն այս պահին կայուն է յարաբերականօրէն, բայց ընդգծում էմ՝ այս գործողութեան հիմնական թիրախը եւ նպատակը Հայաստանի Հանրապետութեանը ռազմական գործողութեան մէջ ներքաշելն է», նշեց Փաշինեան՝ ընդգծելով, որ ՀՀ-ն ռազմական գործողութիւններուն մէջ ներքաշուած չէ: Փաշինեան նշեց նաեւ, որ Հայաստանը Լեռնային Ղարաբաղի մէջ բանակ չունի: Հայաստանի վարչապետը ընդգծեց. «Տարօրինակ եւ տարակուսելի էր տեղեկութիւնը, որ Ատրպէյճանը այդ գործողութիւնների մեկնարկի մասին պաշտօնապէս տեղեկ է պահել Ռուսաստանի Դաշնութեանը: Ի հարկէ, սա Ատրպէյճանի վարկածն է, սակայն փաստն այն է, որ մենք գոնէ այդ գործողութեան մասին Ռուսաստանի մեր գործընկերներից որեւէ տեղեկատուութիւն չենք ստացել»:

Յարձակումէն 24 ժամ ետք, Ռուս խաղաղապահներու միջոցաւ Արցախի իշխանութիւններուն պարտադրուեցաւ ստորագրել զինադադարի որոշում, Պաշտպանութեան Բանակի լուծարում եւ գէնքերու յանձնում:

Մենք Այլեւս Չենք Կրնար Յոյս Դնել Ռուսաստանի Վրայ, Որպէսզի Մեզ Պաշտպանէ, Յայտարարեց Հայաստանի Վարչապետը

Ամերիկեան «Politico»-ին հետ հարցազրոյցի ընթացքին վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց որ, Ուքրանական հակամարտութիւնը ցոյց կու տայ, որ Հայաստանը այլեւս չի կրնար ապաւինիլ Մոսկուային՝ որպէս իր անվտանգութեան երաշխաւոր: «Ուքրանիայում տեղի ունեցող իրադարձութիւնների արդիւնքում փոխուել են Ռուսաստանի հնարաւորութիւնները», ըսաւ Փաշինեան՝ ընդունելով, որ Մոսկուան կը ձգտի խուսափելու Ատրպէյճանն ու անոր մերձակորդաշնակից Թուրքիան օտարելէ, որոնք երկուքն ալ Քրեմլինի համար մինչեւ ուքրանական պատերազմը ունեցած են ռազմավարական նշանակութիւն: «Մեր ռազմավարութիւնը պէտք է լինի այն, որ փորձենք այս իրավիճակում առաւելագոյնս նուազեցնել մեր կախուածութիւնը ուրիշներից: Մենք ուզում ենք ունենալ անկախ երկիր, ինքնիշխան երկիր, բայց պէտք է ճանապարհներ ունենանք, որպէսզի չյայտնուենք Արեւմուտքի ու Արեւելքի, Հիւսիսի եւ Հարաւի բախումների կեդրոնում» Զի կարող լինել դէպք, երբ Հայաստանը դառնայ «փրօքսի»: Սա անթոյլատրելի է: Մոտելը, որով մենք խնդիրներ ունենք մեր հարեւանների հետ, եւ պէտք է հրաւիրենք ուրիշներին պաշտպանելու մեզ, կարելոր չէ, թէ ովքեր են նրանք, շատ խոցելի մոտել է», վարչապետին խօսքը մէջբերած էր «POLITICO»-ն:



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԵՐ ԵՒ ՏԻԿ.
ՅԱՐՈՒԹ ԵՒ ԱՆԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ**

Հայաստան 2023 Տարուան Գլխաւոր Իրադածութիւնները

Հարիւրաւոր Ձոռեր՝ Ստեփանակերտի Սօտ Տեղի Ունեցած Ողբերգական Պայթումի Հետեւանցով

Սեպտեմբեր 25-ին, Ստեփանակերտ-Ասկերան ճանապարհի յարակից տարածքին՝ պենզինի պահեստին մէջ տեղի ունեցած ուժեղ պայթումին հետեւանքով զոհուեցան 218 անձիք, վիրաւորուեցան՝ 120 քաղաքացիներ, իսկ 21 հոգիներ նկատուեցան անհետ կորսուած:

Պայթումը տեղի ունեցաւ փակ տարածքի մէջ, ուր եղած է 42 հազար լիթր պենզին:

ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդէն Ներս Տեղի Ունեցաւ ԼՂ Հարցով Քննարկում

ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի Նիւ Եորքի կեդրոնատեղին մէջ տեղի ունեցաւ Լեռնային Ղարաբաղի հարցով քննարկում: Ելոյթներով հանդէս եկան Ֆրանսայի, Բրիտանիոյ, Չինաստանի, Պրագիլիոյ, Էքուատորի, Ալբանիոյ, Ռուսաստանի, Թուրքիոյ եւ շարք մը այլ երկիրներու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ Եւրոմիութեան բարձր ներկայացուցիչը:

Գրեթէ բոլոր բանախօսները դատապարտեցին Լեռնային Ղարաբաղի վրայ Ատրպէյճանի վերջին յարձակումը եւ կոչ ըրին բանալու Լաչինի միջանցքը: Անոնք ի գիտութիւն ընդունեցին զինադադարի մասին հաղորդագրութիւնը եւ ընդհանուր առմամբ ողջունեցին Եվլախի մէջ Ատրպէյճանի պաշտօնեաներուն եւ Լեռնային Ղարաբաղի հայութեան ներկայացուցիչներու առաջին հանդիպման փաստը: Բոլոր բանախօսները ընդգծեցին Ատրպէյճանի եւ Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը ճանչնալու եւ Լեռնային Ղարաբաղի բնակիչներուն իրաւունքները՝ ներառեալ իրենց հայրենիքին մէջ ապրելու իրաւունքը պաշտպանելու անհրաժեշտութիւնը: Ռուսաստանի ներկայացուցիչ, ՄԱԿ-ի մէջ փոխ-դեսպան Տմիթրի Փոլիանսքին պատմեց ռուս խաղաղապահներու ծառայութեան մասին, նշելով որ անոնց շարքերուն մէջ կան զոհեր:

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան իր ուղերձին մէջ նշեց, որ Ատրպէյճանի նպատակը Լեռնային Ղարաբաղի մէջ ցեղային գտում իրականացնելն է: Ան ներկայացուց Լեռնային Ղարաբաղի բնակիչներուն՝ կանանց եւ սղամարդոց, տարեցներու, կանանց եւ երեխաներու ծանրագոյն կացութիւնը: Անոր փոխանցմամբ, ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդը եւ միջազգային համայնքը ժամանակին միջոցներ չեն ձեռնարկած Լեռնային Ղարաբաղի հայութեան սպառնացող ողբերգութիւնը կանխելու համար, թէպէտ Հայաստանը բազմիցս ասպնազանգած է այդ մասին:

Արցախէն Տեղահանուած Աւելի Քան 100 Հազար Հայեր Ժամանեցին Հայաստան



Արցախէն տեղահանուած 100 հազար 520 Անձ ժամանած է Հայաստան: Կառավարութեան մէջ տեղի ունեցած խորհրդակցութեան ընթացքին քննարկուեցան բռնի տեղահանուած հայրենակիցներուն ցուցաբերուող մարդասիրական օգնութեան ծրագրերն ու հետագայ քայլերը: Քննարկումները ամփոփելով՝ վարչապետը նշեց. «Մենք

քննարկեցինք Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանուած մեր քոյրերին եւ եղբայրներին մարդասիրական աջակցութիւն ցուցաբերելու ընթացքը, կատարուած աշխատանքը եւ հետագայ անելիքները: Անդրադառնալով միջնաժամկէտ ընելիքներուն՝ Նիկոլ Փաշինեան ըսաւ, որ անոնցմէ ամենաառաջնային որոշումը կը վերաբերի բռնի տեղահանուած մեր քոյրերուն եւ եղբայրներուն առաջին անհրաժեշտ կարիքներու համար դրամական աջակցութիւն ցուցաբերելուն: «Տեղեակ էք, որ կայացուել է որոշում եւ յայտարարուել, որ Լեռնային Ղարաբաղից իւրաքանչիւր բռնի տեղահանուած, խօսքը վերաբերուած է ե՛ւ երեխաներին, եւ մեծահասակներին, ամէն անձի հաշուով կը տրուի 100.000 դրամ (250 տոլար) միանուագ դրամական աջակցութիւն: Մենք խնդիր ունենք այդ աջակցութիւնը հնարաւորինս արագ հասցնել մեր քոյրերին եւ եղբայրներին: Յաջորդ որոշումը, որ մենք կայացրել ենք, վերաբերում է կեցութեան, բնակարանային ծախսերին աջակցութեանը: Մենք որոշում ենք կայացրել, որ բռնի տեղահանուած իւրաքանչիւր անձի կը տրուի 40.000 դրամ (100 տոլար) որպէս բնակութեան ծախսերի հատուցում, գումարած 10.000 դրամ՝ ընդհանուր ծախսերի գծով աջակցութիւն»:

ՀՀ Ազգային Ժողովը Ընդունեց Հռոմի Կանոնադրութեան Վաւերացման Մասին Օրէնքը



Հոկտեմբեր 3-ին, Ազգային Ժողովը ձայներու 60 կողմ, 22 դէմ յարաբերակցութեամբ ընդունեց Հռոմի Կանոնադրութեան վաւերացման մասին օրէնքի նախագիծը՝ միանալով Միջազգային Արդարադատութեան Դատարանին:

Հայաստանի խորհրդարանին կողմէ Հռոմի Կանոնադրութեան վաւերացումը ոչ ճիշդ որոշում է, յայտնեց է Ռուսիոյ նախագահի մամուլի խօսնակ Տմիթրի Փեսքով: Ան նշեց, որ այժմ երկրի գործող ղեկավարութեան ուղղուած լրացուցիչ հարցեր ի յայտ եկած են: Քրեմլինը բացարձակապէս համաձայն չէ Փաշինեանի հետ, որ այդ քայլը հիմնաւորած է երկրի անվտանգութեան կարիքներով: «Քրեմլինը պիտի չփափաքէր, որ Փութինը երբեք ստիպուած ըլլայ չեղարկել այցը Հայաստան», ըսաւ ան:

Միջազգային Արդարադատութեան Դատարանը Ռուսաստանի նախագահին դէմ ձերբակալման որոշում կայացուցած է:

Սամուէլ Շահրամանեանի Հրամանով Արցախի Հանրապետութիւնը Կը Դադրի Գոյութիւն Ունենալ

Յունուար 1-էն սկսեալ գոյութիւն ունենալէ պիտի դադրի Արցախի Հանրապետութիւնը: Լուծարման մասին որոշում ստորագրեց նախագահ Սամուէլ Շահրամանեանը: Համաձայն հրամանագրին՝ «Ստեղծուած ռազմաքաղաքական ծանր իրավիճակի կապակցութեամբ, ելնելով Արցախի ժողովրդի ֆիզիքական անվտանգութեան եւ կենսական շահերի ապահովման առաջնահերթութիւնից, հաշուի առնելով ռուսական խաղաղապահ ուժերի հրամանատարութեան միջնորդութեամբ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնը, Ատրպէյճանի ներկայացուցիչների հետ պայմանաւորուելով, որ Լեռնային Ղարաբաղի բնակիչների, այդ թւում՝



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

OURFALIAN & OURFALIAN ATTORNEYS AT LAW GLENDALE

Հայաստան 2023 Տարուան Գլխաւոր Իրադածութիւնները

զէնքերը վայր դրած զինուորականների ազատ, կամաւոր եւ անխոչընդոտ երթեւեկին ապահովուում է Լաչինի միջանցքի երկայնքով, որոշուել է. 1. Մինչեւ 2024 թուականի Յունուարի 1-ը լուծարել գերատեսչական բոլոր պետական հիմնարկները եւ կազմակերպութիւնները»:

Այս հրամանագրի ստորագրումէն ետք, Սամուէլ Շահրամանեան ապահով հասաւ Երեւան: Սակայն Արցախի նախկին նախագահներ՝ Արկաղի Ղուկասեան, Բակօ Սահակեան եւ Արայիկ Յարութիւնեան խորհրդաւոր պայմաններու տակ յանձնուեցան Ատրպէյջանական կողմին եւ այժմ կը գտնուին գերութեան մէջ՝ Պաքուի բանտերը:

Այս կապակցութեամբ Ռուսաստան յայտարարեց որ, մտադիր չէ քայլեր ձեռնարկելու Արցախի նախկին նախագահները ազատ արձակելու Համար:

Եւրոպական Աջակցութիւն Հայաստանին

Արցախահայրութեան բռնի տեղահանութեան լոյսին տակ, Եւրոպական շարք մը երկիրներու եւ կառույցներուն համար Հայաստանին գործնական աջակցութիւն ցուցաբերելու հարցը դարձաւ առաջնահերթութիւն: Արեւմտեան երկիրները անդրադառնալով որ, Լեռնային Ղարաբաղի ու անոր ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան գործին մէջ իրենց թերացումը կրնայ տարածաշրջանը դնել նոր խնդիրներու առջեւ՝ նկատի առնելով որ, Ատրպէյջանի նկրտումները կ'երթան Լեռնային Ղարաբաղէն անդին ու այժմ վտանգի տակ է ժողովրդավար Հայաստանի ինքնիշխանութիւնը եւ հողային ամբողջականութիւնը:

Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Քաթրին Բոլոնան անմիջապէս ժամանելով Երեւան փոխանցեց նախագահ էմանուէլ Մաքրոնի կեցուածքը որ, Ֆրանսան շատ զգօն պիտի ըլլայ իր բարեկամ երկրի՝ Հայաստանի տարածքային ամբողջականութեան նկատմամբ: Իսկ ամենէն կարեւորը, որուն մասին մինչեւ հիմա հրապարակաւ չէր խօսուած, այն էր թէ, Ֆրանսան իր համաձայնութիւնը տուած է Հայաստանի հետ ապագայ պայմանագրի կնքման մասին, որ հնարաւորութիւն պիտի տայ ռազմասարքեր տրամադրել Հայաստանին, որպէսզի ան կարողանայ ապահովել իր պաշտպանութիւնը:

Ստորագրուեցաւ Ֆրանսայի Կողմէ Հայաստանին Վաճառուելիք Ձիմատեսակներու Համաձայնագիրը



Հոկտեմբեր 23-ին, Փարիզի մէջ ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան եւ Ֆրանսայի զինուած ուժերու նախարար Սեպասթիեն Լըքորնիւ ստորագրեցին երկկողմ համադրձակցութեան մասին փաստաթուղթեր: Ֆրանսան մտադիր է օգնելու Հայաստանին՝ բարելաւելու իր հակաօդային պաշտպանութիւնը՝ վաճառելով երեք ռատար եւ պայմանագիր կնքելով «Միսթրալ» զենիթահրթիռային համակարգերու ապագայ մատակարարման վերաբերեալ: «Երկիրնքը պաշտպանելը միանգամայն կարեւոր բան է», Փարիզի մէջ Հայաստանի պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանի հետ համատեղ ասուլիսի ժամանակ ըսաւ Լեքորնիւն: Նախարարները պայմանագիր ստորագ-

րեցին «Thales»-ի արտադրութեան երեք «GM 200» ռատարի վաճառքի մասին, որոնք Ֆրանսան տրամադրած է նաեւ Ուքրանիոյ, ինչպէս նաեւ՝ փոխըմբռնման յուշագիր ֆրանսական «Միսթրալ» փոքր հեռահարութեան հակաօդային պաշտպանութեան համակարգի ապագայ մատակարարման վերաբերեալ: Ֆրանսան նաեւ պիտի օգնէ Հայաստանին վերապատրաստելու ցամաքային պաշտպանութեան ուժերը եւ պիտի աջակցի երկրի ջանքերուն՝ բարեփոխելու եւ արդիականացնելու իր բանակը, յայտնեց Լեքորնիւն:

Կարճ ժամանակ ետք, Ֆրանսական զինատեսակներու առաջին խմբաքանակ՝ «Bastion» զրահամեքենաները Վրաստանի վրայով հասան Հայաստան:

Հայաստանի, Յունաստանի Եւ Կիպրոսի Յատուկ Նշանակութեան Ուժերը Համատեղ Զօրավարժութիւններ Կատարեցին



Նոյեմբեր 6-10-ին Հայաստանի, Յունաստանի եւ Կիպրոսի յատուկ նշանակութեան ուժերը եռակողմ համատեղ զօրավարժութիւններ ունեցան Յունաստանի մէջ: «Համատեղ վարժանքը, որ կը մտնէ Յունաստանի, Կիպրոսի եւ Հայաստանի միջեւ 2023 թուականի համատեղ գործողութիւններու ծրագրի մէջ, նպատած է մասնակիցներու միջեւ փոխըմբռնման եւ Հայաստանի, Յունաստանի եւ Կիպրոսի Յատուկ Նշանակութեան Ուժերը Համատեղ Զօրավարժութիւններ Կատարած են գիտելիքներու եւ փորձի փոխանակման մակարդակի բարձրացման, ինչպէս նաեւ անոնց գործառնական հնարաւորութիւններու ամրապնդման», ըսուած է գերատեսչութեան հաղորդագրութեան մէջ: Զօրավարժութիւններու ընթացքին իրականացուած են արագ արձագանգման ուղիղ կրակահերթեր, կիրառուած են դիպուկահար կրակոցներու, փակ տարածքներու մէջ մարտերու, փոքրածաւալ վարժանքներու ծրագրաւորում եւ անցկացման սարք եւ մարտավարութիւն:

ԱՄՆ Ծերակոյտը Միաձայն Հաստատեց Հայաստանի Անվտանգութեան Ապահովման Միտում Արձանագրութիւն

ԱՄՆ Ծերակոյտը միաձայն ընդունեց Հայաստանի անվտանգութեան ապահովման միտում «S.3000» արձանագրութիւնը: Այն երկու տարի ժամկետով կ'առաջարկէ ԱՄՆ նախագահին կասեցնել 1992 թուականին ընդունուած յայտնի՝ «Ազատութեան աջակցութեան արձանագրութեան» 907 ենթաբաժինը շրջանցելու իրաւունքի կիրառումը, որ, փաստօրէն, կը կատարուէր Ատրպէյջանին ամերիկեան ռազմական օգնութիւն տրամադրելու համար: Երկու կուսակցութիւններուն աջակցութիւնը ստացած այդ օրինագիծը ԱՄՆ Գոնկրէսի Ծերակոյտը հաստատման ներկայացուած էր դեմոկրատական ծերակուտական Կերի Փիթըրզի կողմէ՝ այս Սեպտեմբեր 29-ին: Օրինագիծը ուժի մէջ պիտի մտնէ Ներկայացուցիչներու Տան



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.

ՅԱՐՈՒԹ ԵՒ ԼՈՒՍԻՆ ՊՈՅԱՄԵԱՆ

Հայաստան 2023 Տարուան Գլխաւոր Իրադածութիւնները

Հաւանութիւնը ստանալէ եւ ԱՄՆ նախագահին կողմէ ստորագրուելէ յետոյ:

«Հայաստան» Հիմնադրամի Թելեթոնին Հանգանակուեցաւ 8.4 Միլիոն Տոլար



\$8.4 մլն

Նոյեմբեր 23-ին «Քեզ համար, Հայաստան» խորագրով տեղի ունեցած «Հայաստան» համահայկական հիմնադրամի 26-րդ հեռուստամարաթոնի ընթացքին հաւաքագրուեցաւ շուրջ 8,4 միլիոն տոլար: Հայաստանի մէջ հանգանակուած է 552 հազար 372 տոլար, Ֆրանսայի տեղական մարմինը՝ 3 միլիոն 250 հազար տոլար, ԱՄՆ տեղական մարմինը՝ 3 միլիոն 100 հազար տոլար, Թորոնթոյի (Գանատա) տեղական մարմինը՝ 500 հազար տոլար, Բրիտանիոյ տեղական մարմինը՝ 450 հազար տոլար, Արժանթինի տեղական մարմինը՝ 160 հազար 690 տոլար, Ինչպէս նաեւ նուիրատուութիւններ կատարուած են Հոլանտային՝ 100 հազար տոլար, Պրագային՝ 92 հազար տոլար, Գերմանիային՝ 66 հազար 400 տոլար, Զուիցերիային՝ 50 հազար տոլար, Աւստրալիային՝ 27 հազար տոլար, Աւստրիային՝ 25 հազար 900 տոլար, Ռուսիային՝ 4 հազար 360 տոլար:

«Քեզ համար, Հայաստան» խորագրով հեռուստամարաթոնի դրամական միջոցները պիտի ուղղուին Արցախէն բռնի տեղահանուած մեր հայրենակիցներու կենսապայմաններու բարելաւման, ինչպէս նաեւ սահմանալին համայնքներու զարգացման ուղղուած ծրագրերու ֆինանսավորման», ըսուած էր Հիմնադրամի հաղորդագրութեան մէջ:

Հայաստանի Եւ Սեւուական Արաբիոյ Միջեւ Հաստատուեցան Դիւանագիտական Յարաբերութիւններ




Նոյեմբեր 25-ին, Հայաստանի Հանրապետութեան եւ Սէուտական Արաբիոյ Թագաւորութեան միջեւ ստորագրուեցաւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին արձանագրութիւն: Հայաստանի Արտաքին Գործերու Նախարարութեան հաղորդագրութեան համաձայն, արձանագրութիւնը ստորագրուած է Ապու Տապիի մէջ՝ ԱՄԷ-ի մէջ ՀՀ

դեսպան Կարէն Գրիգորեանի եւ Սէուտական Արաբիոյ դեսպան Սուլթան Պրն Ապտալլա Ալ-Անքարի կողմէ: «Երկու երկրները հաստատել են դիւանագիտական յարաբերութիւններ՝ առաջնորդուելով երկկողմ յարաբերութիւններն ամրապնդելու եւ համագործակցութեան շրջանակն ընդլայնելու, միջազգային անվտանգութեան եւ խաղաղութեան ապահովմանն աջակցելու ձգտումով:

Մինչեւ օրս Սէուտական Արաբիան կը հրաժարէր Հայաստանի հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելէ զարաբաղեան հակամարտութեան պատճառով: Ռիատ յայտարարած էր՝ Հայաստանի հետ դիւանագիտական յարաբերութիւններ չի հաստատեր, քանի դեռ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը չէ վերականգնուած: Քարիւղով հարուստ թագաւորութեան քաղաքականութիւնը Երեւանի նկատմամբ փոխուեցաւ, երբ քանի մը տարի առաջ վատթարացան Ռիատի յարաբերութիւնները Անգարայի եւ անոր սերտ դաշնակից Պաքուի հետ: Քաղաքականութեան փոփոխութեան նախանշաններէն էր 2021 թուականի Հոկտեմբերին Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանի այցը Ռիատ:

Հայկական Արտադրութեան Առաջին Արբանեակը Տիեզերքի մէջ

Դեկտեմբեր 1-ին, «Հայասթ-1» արբանեակը ուղարկուեցաւ տիեզերք SpaceX ընկերութեան «Falcon-9» հրթիռով: Հայկական արտադրութեան առաջին այս արբանեակը շտապուած կապ հաստատել երկրի հետ:



«Հայասթ-1» առաջին հայրենական արբանեակի մշակման, ստեղծման եւ ծրագրավորման բոլոր աշխատանքները կատարուած են Հայաստանի մէջ: Նախագիծը մեկնարկած է 2022 թուականի Յունուարին: Արբանեակին հետ երկկողմանի կապը պիտի ապահովուի «Բազումքի» տարածքին մէջ գտնուող վերգետնեայ կայանքին կողմէ:

32 Հայ Գերիներ Վերադարձան Հայաստան

Դեկտեմբեր 13-ին, Հայ-ատրպէյճանական սահմանին վրայ տեղի ունեցաւ գերիներու փոխանակում: Ատրպէյճան Հայկական կողմին յանձնեց 32 Հայ գիւնուորներ, իսկ Հայաստան յանձնեց 2 ատրպէյճանցիներ: Վարչապետ Նիկոլ Փաշինեան տեղեկացուց, որ 32 գերիները կը գտնուին Հայկական հողի վրայ եւ այժմ կ'ենթարկուին բժշկական ստուգման, որմէ ետք անոնք պիտի միանան իրենց հարազատներուն: Ըստ հայաստանցի իրաւապաշտպաններուն, այժմ Պաքուի մէջ կը պահուին 23 հայեր, որոնց շարքին Արցախի նախկին ղեկավարները: Անցեալ շաբաթ կողմերը յայտնած էին գերիներու փոխանակման շուրջ համաձայնութեան մասին:

Փաշինեան Հանդիպում ունեցաւ շիրակցի գերիներու հարազատներուն հետ: Ան հաւաստիացուց, որ այս երեք տարիներու ընթացքին ամէն հնարաւոր բան կատարուած է գերիներու վերադարձին համար:

Ատրպէյճանի մէջ, ըստ հայաստանցի իրաւապաշտպաններու, հիմա 23 հայ կը պահուի, անոնց շարքին՝ Արցախի նախկին ղեկավարները:

Փաշինեան Սան Փեթրսպուրկի մէջ Մասնակցեցաւ ԵԱՏՄ Եւ ԱՊՀ Հանդիպումներուն

Վարչապետ Նիկոլ Փաշինեան երկօրեայ աշխատանքային այցով մեկնեցաւ Ռուսաստանի Դաշնութիւն՝ Սան Փեթրսպուրկի մէջ մասնակցելու Եւրասիական Տնտեսական Բարձրագոյն Խորհուրդի նիստին, իսկ Դեկտեմբեր 26-ին՝ ԱՊՀ ոչ-պաշտօնական զագաթաժողովին: Եւրասիական Բարձրագոյն Տնտեսական Խորհուրդը ԵԱՏՄ բարձրագոյն մարմինն է, որուն մէջ ընդգրկուած են Միութեան անդամ երկիրներու ղեկավարները: ԵԱՏՄ անդամներն են Հայաստանը, Պելաուսիան, Ղազախստանը, Ղրղզիստանը եւ Ռուսաստանը:

Յունուար 1-էն սկսեալ Հայաստանը Ռուսաստանէն կը ստանձնէ Եւրասիական Տնտեսական Միութեան (ԵԱՏՄ) մարմիններուն նախագահութիւնը: Փաշինեան այս առթիւ յայտարարեց որ, ԵԱՏՄ-ն տնտեսական միաւորում է, որ պէտք է ունենայ քաղաքական եւ, առաւել եւս՝ աշխարհաքաղաքական օրակարգ:

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.

ԹԱԹԻՈՍ ԵՒ ՆԱԺՈՒԱ ՔԷՕՐՈՂԼԵԱՆ

2023 Տարուան Միջազգային Քաղաքական Իրադարձութիւններ

Յուճուար

Հռոմի մէջ վախճանեցաւ Պենետիկտոս 16-րդ Պապը: Խրոնագրեան Եւրոպայի Միութեան անդամ դարձաւ: Իւզպէքիստանը լրիւ կերպով լատինական այբուբենը որդեգրեց:

Լիթվանեան եւս որդեգրեց Եւրո դրամանիշը: Ռուսական ներխուժումի շարունակութիւնը Ուքրանիոյ մէջ:

Արտակարգ տեղումներ եւ ողողումներ Գալիֆորնիոյ Մօնէրէյ շրջանին մէջ: Թուրքիա-Հայաստան օդային բեռնափոխադրումներու համաձայնութիւն:

Եգիպտոսի նախագահ Ապտուլ Ֆաթթահ Սիսիի այցը Հայաստան:

Փետրուար

7,8 սաստիկութեամբ երկրաշարժ մը ցնցեց Թուրքիան եւ Սուրիոյ արեւմտեան կողմը: Հայաստան փրկարարներու զոյգ խումբեր ղրկեց:

ԱՄՆ-ի նախագահ Ճօ Պայտըն կը յայտնէ իր թեկնածութիւնը 2024-ի ընտրապայքարին:

Արգիլուեցաւ ռուսական քարիւղային արտադրութեանց ներառումը: Նախագահական ընտրութիւններ Նիւ Երկիրոյ մէջ:

Քովիտի պարտադիր պատուաստումը վերացուեցաւ օդային ճամբորդներէն:

Գանատա նաեւ կը պատժէ հայազգի ռուսահայատակները:

Հայաստանի արտաքին գործոց նախարարը Թուրքիա եկաւ բանակցելու եւ զօրակցելու:

Փաշինեան եւ Ալիեւ բանակցութիւն Մինսկի մէջ:

Մարտ

Մեծ ցոյցեր Ֆրանսայի տարածքին, բողոքելու համար հանգստեան կոչուելու տարիքին բարձրացման դէմ:

Գ-20-ի արտաքին գործոց նախարարներու ժողովը Նիւ Տէյէրի մէջ: Եւրոմիութեան կողմէ Ատրպէյճանին, վերաբանալ Լաչինի միջանցքը:

Ապրիլ

Մեղադրանք ԱՄՆ-ի նախկին նախագահ Տանըլտ Թրամփի դէմ: ԱՄՆ-ի 35 քոնկրէսականներ պատժամիջոցներ կը պահանջեն Պաքուի դէմ: Հայաստանի սահմանամերձ Տեղ գիւղի դիրքապահ 4 զինուոր զոհուեցաւ: ԱՄՆ կը զօրակցի Հայաստան-Թուրքիա գործընթացին: Անցակէտ դրուեցաւ Արցախ-Հայաստան սահմանին վրայ:

Մայիս

Ռուսաստան դադարեցուց դէպի Հայաստան կազմի մատակարարումը: Անգարա իր օդային տարածքը փակեց հայկական օդանաւերուն դիմաց: Ուաշինկթըն կոչ ուղղեց որպէսզի Հայաստան եւ Ատրպէյճան իրենց ոյժերը ետ քաշեն: Դանիոյ արտգործ նախարարը Թուրքիան կը նկատէ ոճրագործ պետութիւն:

Փաշինեան հաստատեց որ պատրաստ է ճանչնալու Ատրպէյճանի հողային ամբողջականութիւնը:

Յունիս

Նիկոլ Փաշինեան Անգարայի մէջ մասնակցեցաւ Թուրքիոյ նախագահ Էրտողանի վերընտրութեան երդման արարողութեան:

Ատրպէյճանի խնդրանքով յետաձգուեցան Ուաշինթընի բանակցութիւնները: Փաշինեան Լաչինի միջանցքի մասին գանգատ ներկայացուց փութիւնին: Լաչինի հարցը՝ Եւրոխորհրդարանի օրակարգին վրայ:

«Վակներ» խումբը կ'ապստամբի Ռուսաստանի Պաշտպանութեան նախարարութեան դէմ:

Յուլիս

Փութին եւ Ալիեւ քննեցին Ղարաբաղի հարցը: Ռուսաստան ձեռք դրած է ուքրանական ցորենին վրայ: Թուրքիան ՆԱԹՕ-ի կազմէն դուրս պահելու արշաւ: Տօղու փարինչէքի կողմէն հայ-թրքական հաշտութեան գործընթացը կաղաքումի մէջ:

Պայտըն կը խոստանայ աջակցիլ Թուրքիոյ: Թուրքիոյ հայոց պատրիարքը ողջունեց Փաշինեան Էրտողան հեռախօսազրոյցը: Արեւմուտքը՝ կողմնակից է հայ թրքական հաշտութեան:

Ռուս-իրանա-թուրքիա համաժողով Թեհրանի մէջ: Իրան ազդարարութիւն ուղղեց Հայաստանի հետ սահմանի առնչութեամբ:

Օգոստոս

Նոր պատերազմի վտանգ Եւրոպայի մէջ, սկսելով Քոսովոյէն ու Սերպիայէն:

Առաջին անգամ հայ մը գաւառապետ կը նշանակուի Թուրքիոյ մէջ: Հայաստան ու Վրաստան իրարու միացան բարեկամութեան կամուրջով: Աղանոն ու Բերձոն դատարկուեցան: Ռուս խաղաղապահները կը խոստանան աւելի ուշադիր ըլլալ, Եւրոպահայեր արցախի համար ցոյց ըրին փարիզի մէջ: Կարօ Փայլանի դէմ ծրագրուած մահափորձ:

Սեպտեմբեր

Հայաստան մարդասիրական օգնութիւն առաքեց Ուքրանիա: Ատրպէյճան զօրքեր կը կուտակէ սահմանին վրայ:

ԱՄՆ պաշտօնապէս կը զօրակցի Հայաստանին: Ռուսաստան կը սպառնայ Հայաստանի ղեկավարութեան: Ռուբին Վարդանեան ձերբակալուեցաւ ազերիներու կողմէ:

Լեմքինի հիմնարկը մեղադրեց աշխարհի առաջնորդներուն ըսելով «Դուք մեղսակից էք Ղարաբաղի մէջ ցեղասպանութեան»: Պաքու սկսաւ ձերբակալել հայ զինուորականները:

Յոկտեմբեր

ՄԱԿ-ի դիտորդներու խումբը հասաւ Արցախ, երբ գիւղերն ու քաղաքները գրեթէ դատարկ էին...: «Ձանգեցողուի միջանցք»-ի հարցը կը մնայ օրակարգի վրայ:

Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Քարին Քոլոննան Հայաստանի մէջ կատարեց օգտակար առաջարկներ:

Շարլ Միշել ըսաւ. «Ակներեւ է որ Ռուսաստան դաւաճանեց հայ ժողովուրդին»:

Եւրոպայի Խորհրդարանը դատապարտեց Ատրպէյճանի կառավարութեան ցեղային զտումներու հայատեաց քաղաքականութիւնը եւ ըսաւ. «Ատրպէյճան պէտք է ապահովէ Ղարաբաղի հայութեան անվտանգ վերադարձը եւ արժանապատիւ ապրելու իրաւունքը»:

Երեւանի մէջ բացուեց Գանատայի դեսպանատան: Նիկոլ Փաշինեան Թիֆլիսի մէջ ներկայացուց «Խաղաղութեան Խաչմերուկի 4 սկզբունքները»: Ըստ Փաշինեանի «Ատրպէյճանի հետ խաղաղութեան հիմնական սկզբունքները համաձայնեցուած են»:

Նոյեմբեր

Որոշուեցաւ նոր անցակէտ մը կառուցել հայ-իրանական սահմանին Մեղրիի մէջ: Գերմանիոյ արտաքին գործոց նախարարը Հայաստան ու Ատրպէյճան կ'այցելէ:

Փարիզի քաղաքապետը դատապարտեց Արցախի պաշտօնատարներուն գերիվարութիւնը:

Ռուսերը կ'ուզեն հսկել Ատրպէյճանի ու Նախիջևանի միջեւ երթեւեկի վրայ: Արարատ Միրզոյեան Լոնտոնի մէջ ներկայացուց «Խաղաղութեան խաչմերուկ» ծրագիրը: Ատրպէյճան կը նախընտրէ բանակցիլ միայն Ռուսաստանի միջնորդութեամբ եւ ոչ թէ ԱՄՆ-ի:

Ատրպէյճան սահմանի վրայ բանակցելու առաջարկ ներկայացուց Հայաստանին: Եւրոմիութիւնեան յատուկ ներկայացուցիչը Թոյլօ Գլաար իր ելոյթին մէջ ըսաւ. «Հայաստանէն անցնող որեւէ ճամբայ պէտք է հսկուի Հայաստանի կողմէ»:


Դեկտեմբեր

Հայաստան Ատրպէյճանի առաջարկեց սահմանազատման յանձնախումբերու նիստ գումարել երկու երկիրներու միջեւ պետական սահմանին վրայ: Եւրոմիութիւնը որոշեց պատժամիջոցներ սահմանել Ատրպէյճանի դէմ: Հայաստանէն հաղորդուեցաւ որ Թուրքիոյ հետ սահմանային Մարգարա անցակէտը պատրաստ է: Ատրպէյճանի կրակոցներէն հայ զինուոր մը զոհուեցաւ:

Ատրպէյճան 32 հայ գերիներ արձակեց: Շարլ Միշել կոչ ուղղեց շուտափոյթ աւարտին հասցնելու խաղաղութեան պայմանագրի ստորագրութիւնը:

Հայաստան կը խորացնէ Եւրոմիութեան հետ իր յարաբերութիւնները: Եւրոմիութեան նոր գրասենեակի բացում Իջևանի մէջ:

Ամերիկա ազդարարութիւն ուղղեց Ատրպէյճանին, մարդու իրաւունքներու հարցով: Ատրպէյճան այլեւս ռազմական նպատակներ չունի եղբ...:



Վարդերես Գարակտոզեանը Մեր Յիշողութեան Մէջ ՅԱԿՈՐ ՏԻՆԵԱՅԵԱՆ

11 տարի առաջ, 2012-ի վախճանէն առաջ՝ 31 Դեկտեմբերին, Լուս Անճելըսի մէջ անժամանակ մահով կեանքին հրաժեշտ տուաւ պոլսահայ գրող եւ բազմաթիւ գիրքերու հեղինակ Վարդերես Գարակտոզեանը (Պոլիս, 18 Օգոստոս 1939 - Լուս Անճելըս, Գալիֆորնիա, 31 Դեկտեմբեր 2024), երբ դեռ ունէր տալիք մեր գրականութեան:



Բանաստեղծ, խմբագիր, մանկագիր, արուեստի սիրահար ու անոր անսակարկ նուիրեալը, որ ասուպի նման յայտնուեցաւ պոլսահայ գրականութեան երկնակամարին, ապրեցաւ քիչ մը աստանդական, գաղթական կեանք՝ երկրէ երկիր տեղփոխուելով, մեզի թողեց գրական երկեր ու գրական ինքնատիպ դրոշմ՝ Վարդերես Գարակտոզեան նաեւ իբրեւ հրապարակագիր, յետոյ անադմուկ հեռացաւ, շրջապատի որոշ մարդոց ցուցաբերած վերաբերմունքէն ու անոնց անտեսումէն քիչ-շատ դժգոհ, ինչ փոյթ, որ իր շուրջի բացասական երեւոյթները մղեցին սեբաստացի ընտանիքի գաւակ Վարդերես Գարակտոզեանը, որ իր ուժերը լարէ դէպի գրականութիւն՝ յորձանքին ու բովին մէջ գրապայքարի: Ի վերջոյ ան ունեցաւ ժողովրդականութիւն ու սիրուեցաւ գրական բազմաթիւ շրջանակներէ:

Յաճախէիք ետք Պօղոսեան-Վառվարեան վարժարանը՝ Գարակտոզեան կ'անցնի Պոլսոյ Կեդրոնական վարժարանը, ուր կ'ընդարձակուի իր մտածողութեան դաշտը եւ կը հիմնաւորուին այն գիտելիքները, որոնք յետագային աստղաձր պիտի կազմէին իր գրական անդրանիկ բովանդակներուն: Կեդրոնականէն ներս ան կ'աշակերտէ հայերէն լեզուի ուսուցիչ, պոլսահայ ծանօթ արձակագիր եւ գիրքերու հեղինակ Տօքթ. Վարդան Կոմիկեանին՝ ամուսինը պոլսահայ համբաւաւոր եւ փնտուռած ասմունքող, «Ասմունքի Իշխանուհի» եւ ներկայիս ալ Ուսուցչաց Հիմնարկի մանկապատանեկան «Ժպիտ» պարբերաթերթի ժրջան խմբագիրներէն Սիլվա Կոմիկեանի: Նոյն վարժարանէն ներս Վարդերես Գարակտոզեան իրեն ուսուցիչներ կ'ունենայ մասնաւորապէս Հրանդ Անդրէասեանը՝ գրաբարի, հայր Ներսէս Աթիթեանը՝ մատենագրութեան: Կեդրոնականէն շրջանաւարտ կ'ըլլայ 1958-ին:

Վերոյիշեալ երեք դաստիարակներուն շունչին ներքոյ հայերէնագիտութեամբ զինուած ու հայերէնի իմացութեան բաւական պաշար ամբարած Վարդերես Գարակտոզեանի հոգիին մէջ երկու տարի ետք պիտի պայթէին գրական բողբոջներ, որոնք իբրեւ առաջին արձագանգ ու երախայրիք՝ պիտի տպուէին «Մարմարա» օրաթերթին մէջ, երբ ան հազիւ 20-21 տարեկան երիտասարդ մըն էր: Կը ներկայացնենք Գարակտոզեանի ութ տողնոց այդ բանաստեղծութիւնը՝ «Ծովի Նման» խորագիրով.-

Անգոյն ես ծովի նման,
Գոյն ես փոխեր դարերով,
Արքաներու թագերու շուկաներէն յամրընթաց
Անցեր ես գառի նման.
Անգոյն ես, հզօր, խրոխտ,
Մեծ վանքի քարի նման.
Աղէկ ու գէշ նորն ալ կ'անցնի,
Կը մնա՛ս ծովի նման:

Պոլսահայ «Սան» եւ աւելի ուշ «Ճառագայթ» պարբերաթերթերուն բերած խրախուսանքն ու իբրեւ գրական բեմեր՝ 40-ականներէն անոնց մէջ իրենց գրական տաղանդը արտացոլացնող գրողներուն՝ Կարպիս Ճանճիկեանին, Զահրատին, Ռոպէր Հատտէճեանին, Զարեհ Խրախունիին, Գեղամ Սեւանին, Վարուժան Աճեմեանին եւ շատ ուրիշներու, յետագային պիտի միանար Վարդերես Գարակտոզեանը, իր ներդրումը բերելով իր երէց գրչեղբայրներուն կողքին:

Համաշխարհային Բ. Պատերազմէն ետք յայտնուող յիշեալ տղաքը տակաւ առ տակաւ պիտի հիմնաւորէին գրական նոր շարժումի մը, գրական նոր դպրոցի մը սիւները, որոնց քովն ի վեր Գարակտոզեան՝

յատկապէս թրծուելով խրախուսիչ շունչովը Կարպիս Ճանճիկեանի, ստեղծեց ի'րը, հունաւորեց ի'ր գրական-բանաստեղծական ուղին, հարստացնելով պոլսահայ գրականութեան գանձարանը, որ 1915-էն ետք շարունակուած էր աւաշտրդիլ արեւմտահայ ոսկեհոռ օղակին կապուած Մատթէոս Զարիֆեանի, Յակոբ Մնձուրիի եւ ասոնց նման ականաւոր դէմքերու գործերով:

Վարդերես Գարակտոզեան թէեւ երկար չմնաց Պոլիս ու չհասաւ տալու նշանակալից երկեր 60-ականներուն, սակայն Հայաստան գաղթելէ ետք՝ հոնկէ ալ Միացեալ Նահանգներ՝ հանդէս եկաւ ուշագրաւ երկերով, իր տեղը հաստատեց ոչ միայն իբրեւ քերթող, այլեւ խմբագիր ու մանկագրական երկերու հեղինակ:

«Մարմարա» օրաթերթին մէջ տպուած իր առաջին քերթուածէն շատ չանցած՝ 1960-ին, Պոլսոյ մէջ լոյսի բարիքին եկաւ իր առաջին քերթողագիրքը՝ «Իմ Մասիս» խորագիրով, արժանանալով յատկապէս պոլսահայ նորարարական շարժումի տղոց ջերմ գնահատանքին, մինչ պահպանողական ուղեգիծը բռնած որոշ գրաքննադատներ հեզնական վերաբերմունք ցոյց տուին Գարակտոզեանի երախայրիքին հանդէպ:

«Մարմարա»ի հետ Գարակտոզեանի հոգեկան կապին անդրադառնալով, տեղին է յայտնել, որ 60-ականներու սկիզբներուն, ան իր երէց գրչեղբօր՝ Օննիկ Ֆշրճեանին հետ շրջան մը համատեղ հրատարակեցին «Մարմարա» օրաթերթի մանկապատանեկան էջը՝ խրախոյս տալով յատկապէս գրական նոր ուժերու ընձիւղումին, ծաղկումին: Մանկապատանեկան գրականութեան



Պոլսոյ Կեդրոնականի շրջանաւարտները 1958-ին, որոնց շարքին է շրջանաւարտ Վարդերես Գարակտոզեանը, որուն նկարը վերը ձախից նրումած առանձին, յստակ է:

սիրահար Գարակտոզեան, տարիներ ետք՝ 1981-ին, Զարեհ Խրախունիի հետ ալ գործակցելով, արեւմտահայերէնի վերածեց Յովհաննէս Թումանեանի մանկական աշխարհի պատմուածքները, հեքիաթները:

1959-ին, հազիւ քսանամեայ գրող մը, Մկրտիչ Մարկոսեանին (Տիգրանակերտի Խանչէքէթ Թաղը, 23 Դեկտեմբեր 1938 - Պոլիս, 7 Ապրիլ 2022) հետ Գարակտոզեան խմբագրեց «ԹՕ» ամսագիրը, որ այդ ժամանակներուն կը համարուէր պոլսահայ գրականութեան կարեւոր բեմը: Աւելի քան 50 մանկապատանեկան գրքոյկներ Գարակտոզեանէն լոյս են տեսած «ԹՕ»ի թիւերուն մէջ: Նոյն «ԹՕ» ամսագիրին մէջ է, որ Զարեհ Խրախունիին առիթ ընծայուած էր լուսաբանելու, մեկնաբանելու իր ստեղծած «Առարկայական Խորհրդանշապաշտութիւն» շարժումը: Առաւել, «ԹՕ» կարեւոր բեմ կը համարուէր նոր գրողներուն համար, որոնք իրենց արդիաշունչ ստեղծագործութիւնները յառաջ մղելով կը միտէին ձեռքագտնել դասական կապանքներէն: Դժբախտաբար, սակայն, կարճատեւ կեանք մը ունեցաւ այս ամսագիրը:

Արդարեւ, իր երախայրիքին լոյս ընծայումէն երկու տարի ետք՝



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏՕՔԹ. ԵՒ ՏԻԿ.
ՅԱՐՈՒԹ ԵՒ ՄԱՅՏԱ ԵԱՂԱՉԵԱՆ**

Վարդերես Գարակեօզեանը Մեր Յիշողութեան Մէջ

1962-ին, դարձեալ Պոլսոյ մէջ, Գարակեօզեան հրատարակեց իր քերթուածներու երկրորդ ժողովածուն՝ «Զոյգ Աչքերէս» խորագիրով: Այսպէս, 60-ականներու սկիզբներուն, գրեթէ միաժամանակ մէկը միւսին ետեւէն հրատարակ կ'իջնէին Զահրատի «Մեծ Քաղաքը» (1960), Հայկազուն Գալուստեանի «Գործիս Ճամբուն Վրայ» (1962), Զարեհ Խրախունիի «Քար Կաթիլներ» (1964), Արսէն Ճանեանի «Արեւուն Տակ» (1964) եւ այլ գրողներու երկերը, խանդավառութեան խրախուսիչ մթնոլորտ մը ստեղծելով համայնքէն ներս:

Բացի «Իմ Մասիսը» եւ «Զոյգ Աչքերէս» քերթողագիրքերէն, Գարակեօզեան ներդրում ունեցած է՝ ինչպէս նշեցինք՝ մանկական գրականութեան մէջ, հրատարակելով «Շնիկիս Հետ» (Պոլիս, 1961) եւ «Կենդանիներուս Խաղերով» (Պոլիս, 1962), գիրքերը, որոնք յետագային արժանանալով երկրորդ տպագրութեան՝ լոյս տեսան Փարիզի մէջ, 70-ականներուն:

1963-ին, Վարդերես Գարակեօզեան բարձրագոյն ուսման համար կը մեկնի Հայաստան, ուր 1967-ին կ'աւարտէ Երեւանի Պետական Համալսարանի (ԵՊՀ) բանասիրական բաժանմունքը: Կ'աշակերտէ Հրանդ Թամրազեանին, էտուարտ Զրբաշեանին, Մ. Մկրեանին եւ նման անուանի գրողներու՝ անոնցմէ ստանալով գրականագիտական հարուստ գիտելիք ու պաշար, միաժամանակ զարգացնելով իր գրարուեստը: Այս շրջանին է որ 1965-ին Փարիզի մէջ լոյս կը տեսնէ իր երրորդ քերթողագիրքը՝ «Շատ Լաւ» խորագիրով:

Համալսարանական ուսումը աւարտած տարին ան կ'անցնի Փարիզ, ուր կը հետեւի Սորպոնի գրականութեան եւ գրականագիտութեան դասընթացներու՝ ուսումնասիրելով Անատոլուի հայ աշուղներու, քրտական բանահիւտութեան եւ ժողովուրդներու մշակոյթներու առանձնայատկութիւնները:

1971-ին նոր գիրք մը իրմէ՝ «Հատընտիր» (Պէյրուսթ) խորագիրով, որ մաս կը կազմէ «Սփիւռքահայ ժամանակակից Բանաստեղծներ» մատենաշարին: Տաս տարի ետք՝ 1981-ին վերջնականապէս Լոս Անճելըս հաստատուելէ ետք, «Ապրիլ» գրատան հովանաւորութեամբ եւ «Էրեբունի» հրատարակչութենէն լոյս կը տեսնէ «Կեանքին Զուգահեռ» բանաստեղծութիւններու հատորը: Այս քերթուածները կ'ընդգրկեն 1974-1980 տարիներու իր արարումները 6 բաժիններով՝ 144 էջերու մէջ: Այստեղ, Գարակեօզեան կ'երգէ մարդուն կեանքին առջեւ ծառայած դժուարութիւններու յաղթահարումը, անոր յոյսն ու հաւատքը եւ ճշմարտութիւնը բացայայտելու, անոնց դէմ ցցուող շարիքը, կեղծիքը, սուտը տապալելու իր անկոտորում կամքը:

Ութ տարի ետք լոյսի բարիքին կու գայ բանաստեղծութիւններու նոր հատոր մը՝ «Վերցրէք Մի Պոետ Երկնքի Մովից» (1989, Լոս Անճելըս, 135 էջ), 5 բաժիններով, դարձեալ «Էրեբունի» հրատարակչութենէն: 1979-1986 տարիներու իր քերթուածները ամփոփող գիրք մըն է այս մէկը, ուր Գարակեօզեան կ'երգէ հայրենի եզերքներն ու բնութիւնը,

անոր երկինքը, արեւն ու ջուրերը: Առաւել շեշտուած են Մայր Հայաստանի հանդէպ գրողին սէրն ու հաւատքը, անոր կառչելու, Հողին գուրգուրանքով ապրելու իր խոր համոզմունքը:


2005-ին «Արարման Հետ» հատորին հրատարակութեան առթիւ եւ նոյն տարին, Լոս Անճելըսի Պոլսահայ Միութեան մատենաշարով լոյս կը տեսնէ «Դեռ Չեմ Սպառել» խորագրեալ հատորը (309 էջ), որուն յառաջաբանին մէջ Գարակեօզեան երախտագիտական ջերմ խօսքերով հանդէս կու գայ իր ընկերոջ՝ Երուանդ Գոչունեանին մասին, որուն աշխատանքը՝ հատորը պատրաստելու, ձեռագիրները դասաւորելու եւ մեքենագրելու գծով եղած էր անչափելի զոհողութիւններով լի: Ինչպէս նկատելի է գործերուն ալ խորագիրներէն, Երեւան մեկնելէ ետք Գարակեօզեան ստեղծագործեց արեւելահայերէնով՝ Միացեալ Նահանգներ հաստատուելէ ետք ալ: Տեղ-տեղ ալ այդ բանաստեղծութիւններէն շատերը խառնուրդ մը կը կազմեն արեւելահայերէնի ու արեւմտահայերէնի: Ան գործածեց նաեւ Մեսրոպեան ուղղագրութիւնը:

Պիտի ընդգծել, որ կարգալով ու խորանալով Գարակեօզեանի ստեղծագործութիւններուն մէջ, ընթերցողը իր մէջ տակաւ առ տակաւ պիտի կազմէ արդարախօս նկարագիր, ի յայտ պիտի բերէ մարդկայնութեամբ շեշտուած ջիղ ու ոգի, փիլիսոփայական խոհեր: Հետեւեալ տողերէն կ'արտացոլայ ըստաւաններուն փաստը.-

Միամիտ խոհեր, մանկամիտ խոհեր,
Թեւածք այլուր, ինձ հանգիստ թողէր,
Խիղճն այս աշխարհիս վաղուց է քնել:
Կամ ուրիշ տեղ մը աւելի յուսալի,
Քանի մը թելադրութիւններ ու հայեացքներ...
Ծլող հունտը՝ ընկած հողին անգին,
Կարծեալ աղամանդից
Ոչ թէ օրին՝ այլ ժամ առաջ
Գերադասել պէտք է գիտնալ:

Յիրաւի, հայ մշակոյթի տարածման առումով անխոնջ դեսպան մ'եղաւ Վարդերես Գարակեօզեանը: Եղաւ որակաւոր հատորներու հրատարակիչ, ինչպէս՝ Գրիգոր Խանջեանի իր պատրաստած «Սուրբ էջմիածին» պատկերազարդ հատորը (1981), «էջմիածինի Գանձատուն» (արուեստի գանձերու հաւաքածոյ, որ կը գտնուի էջմիածինի «Ալեք եւ Մարի Մանուկեան» թանգարանին մէջ, 1984), «Արարատ» (ալպոմ, 1984) եւ այլ բազմաթիւ հատորներ ու հաւաքածոներ:

Պոլսահայ, հայրենի եւ սփիւռքահայ գրականութեան պատմութեան մէջ, Վարդերես Գարակեօզեանի գործն ու վաստակը ունին արժանի տեղ. ան ոչ միայն իբրեւ բանաստեղծ, մանկագիր եւ խմբագիր, այլեւ հայ մշակոյթի եւ արուեստի նուիրեալ ու անձնուէր գործիչ-տարածիչ, որուն մեզի թողած գրական ժառանգութիւնը այս իմաստով հարուստ է եւ արժանի՝ առաւել խոր ուսումնասիրութեան:



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՄԻՄԻԹԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ**



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԻԿԻՆ ԱԶԱՏՈՒՀԻ ՄՈՒԹԱՑԵԱՆ**

Կորաքամակ Հայը Պետք է Շտկի Իր Մեջքը (Ստորումներ Նոր Տարուան Ծեմին) ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Որքան էլ որ թո՛հ ու բո՛հ լինի աշխարհի տարբեր անկիւններում եւ Հայաստան աշխարհում, միեւնոյնն է՝ հայերը կը փորձեն եթէ ոչ ուրախութեամբ՝ գոնէ տարիների վշտից ու անգորութիւնից կորաքամակ դարձած վիճակում անգամ, Յիսուս Քրիստոսի ծննդեան եւ Ամանորի առիթով ժպտալ հորդացող արցունքից ակոսների վերածուած իրենց դժգոյն թշիւհներով:

Ամէն Նոր տարին չէ, որ ուրախութիւն, երջանկութիւն է բերում մարդուն երկրագործի տարբեր անկիւններում: Մի երկրում արիւն է հեղում, մարդկային արիւն, մէկ ուրիշ տեղ արժեքագրվում է երկրի դրամը, մէկ այլ տեղ նոր օրենքներ են հրապարակուած համատարած թմրամոլութեան դէմ, եւ այսպէս՝ խելամիտ, ու շատ անգամ էլ անմիտ ու վտանգաւոր որոշումներ՝ աշխարհի բոլոր ծալքերում:

Մի խօսքով՝ Նոր Տարի, նոր սպասելիքներ, նոր յուզումներ, նոր երջանկացած գոյգեր, եւ, սովորական դարձած, «օրինակացուած» հիասթափութիւնների մի խոշոր գրառուած տրցակ:

Այս վերջին հինգ տարուայ «Հիասթափութիւն» զգացողութիւնը չափազանց բնորոշ է մեր երկրին, Հայաստան աշխարհին, եւ նրա մտահոգութիւններին անբաժան մասնակից ու դրանք իրենք համարող Սփիւռքին, որը ի հեճուկա հայրենի որոշ իշխանաւորների, շատ աւելի ՀԱՅ է, եւ էլ աւելի ընկճուած, քան, թող ներուէի, իրենք՝ հայրենի ժողովրդին դեպի «լուսաւոր ապագայ առաջնորդող» իշխանութիւնը:

Չգիտեմ, թէ Հայաստանի միջազգային պարտքը քանի միլիարդի կը հասնի գալիք՝ 2024 թուականին, բայց վստահ եմ, որ ինչպէս արեւմտահայը կ'ասի՝ «ապագայ սերունդներուն ճիտին (վիզ) պարտքը պիտի ըլլայ այսօրուան Հայաստանի իշխանութիւններու ապիկար գործունէութեան հետեւանքով սնանկացած մեր հայրենիքին պարտքը վճարելը...»:

Չէ, ոչ, յաջողակ տարի չեղաւ Հայաստանում 2023 թուականը: Բազմաթիւ անյաջողութիւնների մէջ գլուխգործոցն անշուշտ Լարաբաղի 120 հազար բնակչութեան բռնի տեղահանումն էր իր բնօրրանից: Ընդամենը քսան օրուայ նորանշանակ նախագահը եկեղեցու տէր պապայի պէս, սկուտեղի վրայից մաս բաժանելու նման, արիւնարբու Ալիեւին յանձնեց մի ողջ հանրապետութիւն՝ «Առէք, կերէք կերէք, սա է մարմինն իմ...» մրմնջալով:

Տճ, այ... Սամուէլ Շահրամանեան, ի՞նչ անուն տամ քեզ, բաւարարուենք ԴԱԻԱՃԱՆՈՎ, մականունիդ մէջ երկու արմատ կայ՝ ՇԱՀ եւ ՀԻՄԱՆ: Առաջինը՝ ՇԱՀ էիր փնտռում՝ շահաբեր աթոռին տիրանալուց յետոյ, այնուհետեւ հրաման էիր տալու, որպէսզի ժողովրդից թալանած դրամով քեզ համար մի դղեակ կառուցեն ինչպէս նախորդ բոլոր նախագահների ժամանակ: Ի՞նչպէս ծուղակն ընկար ու ընդունեցիր նախորդ նախագահ Արայիկ Յարութիւնեանի առաջարկը: Չ'անդրադարձա՞ր, որ նա փախուստ է տալու Լարաբաղից:

Սրատես Ալիեւի աչքից ոչինչ չի վրիպում, եւ Հայաստան փախչելու ճանապարհին ազերիները Հոկտեմբերի Յին առեւանգեցին նրան ու տարան Բաքու, իսկ Շահրամանեանին ստիպեցին յանձնել Լեռնային Լարաբաղը:

Ի՞նչ էք կարծում մի քիչ հեքիաթի նման չէ՞ այս հնարովի պատմութիւնը: Ո՞վ է տեսել, որ ընդամենը 20 օրուայ հանրապետութեան նախագահը, ահաբեկումի կամ վախի ազդեցութեան տակ, ստիպուած լինի, փաստէի վրայ դրուած երկիրը յանձնել ուրեքիմ թշնամուտ:

Մեր կարծիքով այս քստմնելի իրականութեան ծալքերը շատ խորն են: Պէտք է ենթադրել, որ Լարաբաղի իշխանութիւնները եւ Ազգային ժողովը օրեր առաջ կամ աւելի վաղ, գաղտնօրէն պայմանաւորուել են Ալիեւի հետ՝ խաղաղ ճանապարհով յանձնել հանրապետութիւնը, որի փոխարէն իրենց հնարաւորութիւն կը տրուէր ունեցած շուքեցած դրամի վերածել ու իրենց շքեղ մեքենաներով ճողովել Հայաստան:

Առայժմ հնարաւոր չէ իմանալ իրական պատմութիւնը: Ժամանակը կը գայ եւ ամէն ինչ ջրի երես դուրս կը գայ: Երբեք պէտք չէ մոռանալ ծողովրդական առածը, որն ասում է՝ «ստի ոտքերը կարճ են...»: Ժամանակը ամէնադաժան դատաւորն է...

Օրերս Հայաստանի Ազգային ժողովում անվտանգութեան հարցերի յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեանը քննութեան առարկայ դարձրեց Սամուէլ Շահրամանեանի հարցը: Երբեք ժամ տեւած քննութիւնից յետոյ, թղթակիցների տուած հարցերին Քոչարեանը պատասխանեց մի կարճ լիկ նախադասութեամբ՝ «Նա եղել է անկեղծ»:

Այդ ինչպէ՞ս: Անկեղծօրէն երկիր են յանձնում: Չէ՞ որ դա զգալի,

դաւաճանական քայլ է: Այ դու նորեւիտիկ նախագահ, չես կարդացե՞լ Բաքուի ՍԱՄՈՒԷԼ պատմավէպը, որի մէջ հայրենիքի ազատագրութեան եւ անկախութեան սիրտն հերոսը սպանում է դաւաճան ծնողներին: Եւ դեռ, դու՛ Սամուէլ անունն ես կրում հա՛...այ թուլամորթ, ինչի՞ց վախեցար, ո՞ւր էր քո առողջ տրամաբանութիւնը: Նրանք քեզ մատով անգամ չէին դիպչի, էն էլ, այս օրերին, երբ Հայաստանն ու Լարաբաղը աշխարհի ուշադրութեան կենտրոնում են, ի մասնաւորի Եւրոպայի, Ֆրանսիայի եւ Ամերիկայի:

Ինչեւէ իրականութիւնը վաղ թէ ուշ երեւան կ'ելնի: Դաւաճաններ ու մատնիչներ՝ որքան կ'ուզես...

Ամէնակարող Պուտինն էլ՝ հեռուից նայում է ու ինքնիրեն ասում՝ «Լարաբաղ էիք ուզու հա՛..., դէ հիմա կերէք...»: Իսկ միւս կողմից, ի լուր աշխարհի յայտարարում:

Այն՝ ինչ տեղի է ունեցել Լարաբաղում, Հայաստանի Հանրապետութեան ղեկավարութեան կողմից, այդ տարածքն Ազրբեջանին մաս ճանաչելու անխուսափելի հետեւանքով էր:

Առարկութիւն չվերցնող մարգարէական խօսքեր, որոնք, վստահ եմ, շատ շատերի սրտով էր: Ես դեռ այն ժամանակ երբ նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինեանը ի լուր աշխարհի յայտարարեց, որ՝ «Լարաբաղը Հայաստան է եւ վերջ...»՝ ես ուրախութիւնից տեղս չէի գտնում, որովհետեւ շատ երիտասարդ տարիքում պատմաբան, աղբիւրագէտ, մատենագէտ հայրիկիս շնորհիւ, տեղեակ էի Լարաբաղի, Արցախի պատմութեանը: Եստ կարճ տեւեց իմ ուրախութիւնը: Որոշ ժամանակ անց, Փաշինեանը հարիւր ութսուն աստիճանով փոխեց իր ասածը եւ դարձեալ ի լուր աշխարհի, յայտարարեց, որ Լարաբաղը Ազրբեջանի անբաժան մասն է՝ լայն հնարաւորութիւն տալով Ալիեւին, որպէսզի ուզածն անի:

Բա երկրի ղեկավարին վայել է՞ նման ճակատագրական սխալ թոյլ տալը: Այդ յայտարարութեան շնորհիւ, բռնակալը ազատօրէն գործելու հնարաւորութիւն ստացաւ:

Ամբողջ Հայ Աշխարհը ափ ի բերան մնաց: Էստեղ են ասում՝ դէ արի ու էլը ցեխից հանի: Լստ օրինի, ազատօրէն գործելու իրաւունք ստացած ճիվաղն անցաւ գործի: Գրեթէ մէկ տարի կտրեց Լաչինի միջանցքով կապը Լարաբաղի եւ Հայաստանի միջեւ, թէեւ, Նոյեմբերի 9ի համաձայնագրով եւ իր ստորագրութեամբ վաւերական փաստաթղթով նա իրաւունք չունէր դա անելու:

Աւելորդ եմ համարում Լաչինի միջանցքի հետ կապուած անմարդկային, երբեւէ մարդու մտքով չ'անցած պատմութեանն անդրադառնալ, որին տեղեակ է ողջ քաղաքակիրթ մարդկութիւնը:

Բա Պուտինն ո՞ւր էր, չէ՞ որ նա հայերի բարեկամն է, հարցնում է դրացիս:

Է՛հ, բարեկամ, ռուսն էն գլխից, 19րդ դարից է ոտքը դրել Հայաստան աշխարհի հողի վրայ ու մինչեւ օրս դուրս չի գալիս: Դեռ Աշխարհաբարի հիմնադիր, միամիտ Խաչատուր Աբովեանն էլ ասում էր՝ «Օրհնուի էն սըհաթը, որ ռսի ոտը մտաւ հայոց հողը»: Էն էլ ո՞նց մտաւ..., մտել է ու 200 տարի է դուրս չի գալիս:

Մտաւ ու սկսեց անխտիր փակել Յարական Ռուսաստանի տարածքին գտնուող բոլոր հայկական դպրոցները ու այրել դրանց մէջ եղող գրքերն ու դասագրքերը: Փակեց հայկական բոլոր եկեղեցիները՝ տէր դառնալով դրանց ինչք ու կայքին:


Աստուածային պարգեւ Խրիմեան Հայրիկին էլ, հայկական դպրոցները վերաբանալու խնդրանքով մէկ ամիս անլուր տառապանքների նքվ իրեն գցեց Պետերբուրք, Յարի գրասենեակ, ոտեղից, բարձրագոյ հրճուցի տակ դուրս արին սքեմաւոր հոգեւորականին՝ ցինիկ վանկարկումով՝ ԴԱԻԱՅ ԸՍՏՈՒՑ՝ԱՐԱԲԷԴ՝ ՔԱՇԻ...:

Ժողովուրդը շատ է իմաստուն ախպե՛ր...: Պատահական չի, որ ասում է՝ «ասինք գարկ, չ'ասինք սպանի...»: Աստուածային օրէնք էլ կայ՝ ռուս Քրիստոնեան՝ միշտ Քրիստոնեայի կողքին պիտի լինի:

Հիմա էլ Եւրոպայի եւ Ամերիկայի ու Ֆրանսիայի վրայ ենք յոյաներս դրել: Տենենք թէ ինչով կ'աւարտուի այս՝ մկան ու կատուի խաղը...:

Ինչպէս տարիներ շարունակ, 2023ին Սփիւռքի ներկայութիւնը Հայաստանի վարած քաղաքականութեան մէջ բնաւ չ'երեւաց, իսկ ռուսի ներկայութիւնը հայ ժողովրդի կեանքում եւ իշխանութիւնների վարած քաղաքականութեան մէջ, ինչպէս նախկինում, երեւաց միայն ապրիլեան

» » »



Կորաքանակ Հայր Պետր Է Շուկի Իր Մեջքը

Հորսօրեայ Ապրիլեան կարճատեւ պատերազմի օրերին:

Ինչպէս քաղաքագետ Ռուբէն Մեհրաբեանը հաստատեց՝ «Ռուսաստանը մեր դաշնակիցը չէ», եւ աւելցրեց. Հայաստանի բարեկամութեան առաջնութիւնը վերջնականապէս փուլ եկաւ ապրիլեան պատերազմի օրերին, երբ ազերիները հայերի վրայ սկսեցին կրակել ռուսական զէնքերից»:

Ռուսաստանի եւ Պուտինեան իշխանութեան հանդէպ Հայ ժողովրդի հիմնական մասի մօտ անվստահութիւնը ունեւորուեց 44օրեայ պատերազմից յետոյ, երբ ՀԱՊԿը եւ Պուտինը առանց աչք թարթելու, անտարբեր հայեացքով Ադրբեյջանի կողմից Ղարաբաղի դէմ իրականացուած ուխտադրուծ յարձակմանն էին հետեւում առանց օգնութեան ձեռք մեկնելու: Իսկ Ալիեւն այդ համարձակութեանը դիմեց այն ժամանակ, երբ խելամոտեն երկու տարի առաջ էր դուրս եկել ՀԱՊԿի անդամակցութիւնից:

Հարց կարող է ծագել, թէ ինչո՞ւ Պուտինը աւելի շուտ չդադարեցրեց պատերազմը, ասենք՝ չորս կամ տաս օր առաջ: Որովհետեւ նրան պէտք էր Հայաստանն ամբողջովին թողնել Ալիեւի տիրապետութեան տակ: Նրանք գիտակցեցին, որ եւ փայտէր: Նրան պէտք էր ամբողջովին թուլացնել, չուլի վերածել մեր հայրենիքը, որպէսզի Հայաստանի ժողովուրդը իր ոտքերն ըկներ ու աղաչեր փրկել իրեն վերջնական կործանումից:

Եւ ամէն ինչ, այս նոր քաղաքականութեան մէջ տանում էր նրան, որպէսզի ռուսները վերացնեն Հայաստանի պետական կառուցուածքը եւ երկիրը վերջնականապէս իրեն ենթարկեն:

Ահա թէ ինչ է գրում մամուլը այդ առնչութեամբ.

Եւ նման սաղիստական գաղափարին ուժ ենք տալիս մենք՝ հայերս, բարձրագոյն յայտարարելով, թէ պէտք է գորացնել ռուսերէն լեզուի իմացութիւնը Հայաստանում:

Դեռ ցանկութիւն էլ կայ ռուսերէնը դարձնել պետական երկրորդ լեզու: Ռուսաց լեզուն առաւել տարածուած է Հայաստանի Հանրապետութիւնում եւ մենք շահագրգռուած ենք, որ այն աւելի ամրապնդուի, ասում է նախկին նախարար Լեւոն Մկրտչեանը:

Չի բացառում, որ ռուսների հեռահար նպատակն է գրեթէ ամբողջովին դատարկել Հայաստանը եւ բաւարարուել միայն ու միայն Երեւանի Նահանգով, այսինքն երկիրը դարձնել այնպիսին՝ ինչպիսի եղել է նախանցեալ դարում: Անշուշտ, այդ պարագային կը վերանան Հայաստան աշխարհի բոլոր գիւղերը եւ դրանց փոխարէն վեր կը խոյանան թունաբեր, շրջակայ միջավայրն աղտոտող քիմիական, հանքարդիւնաբերական գործարանների ծխնելոցները, որոնց արտաբերած թունաւոր գազերը կը հասնեն նաեւ Երեւան:

Այո, Պուտինեան Ռուսաստանը ցանկանում է Կայսերական Ռուսաստանի նման հայերին ամբողջացնել, ինչպէս կ'ասէր մայրս, «պատիկ» Երեւանի նահանգում: Հենց այդ նպատակի համար էլ արդէն քանի տարի, լայնօրէն բացել է ճամբէքը հայերի առաջ եւ օրնիբուն զբաղուած է նրանց տեղահան անելով իր մայր հողից, իր հայրենիքից, տանելով ու տարածելով հակայական ռուսական կայսրութեան մէջ:

Ապրիլեան պատերազմի արդիւնքում, հայ ժողովուրդը համոզուեց, որ ինքը միայնակ է, բարեկամ չունի, ու յոյսը պիտի դնի միայն ու միայն իր վրայ: Հասկացաւ նաեւ, որ ռուսական կողմի դրդմամբ Ազերին ներխուժեց Ղարաբաղ:

2023 թուականին Հայաստանից եկան ու գնացին բազմատեսակ խմբեր, անհատ կատարողներ: Մենք դէմ չենք, թող էլի գան ու գան, բայց գան՝ նոր, թարմ ծրագրերով ու նոր մտայնացումներով:

Ինչպէս ամէն տարի, այս տարի նոյնպէս, Գոհաբանութեան օրը «տեղի ունեցաւ» Հայաստան հիմնադրամի կազմակերպած Թեյէթոնը, որը միլիոնաւոր սփիւռքահայերին ծաղրելու, նսեմացնելու չարամիտ միջոց ընկալուեց մեր կողմից:

Ով է տեսել, որ Թեյէթոն արուի ոչ թէ կենդանի, այլ՝ տեսագրութեամբ ու առանց նուիրատուների անունները ցուցադրելու հեռուստացոյցի պատառի վարի մասում սահող տողերի վրայ: Բա դուք ամոթ չունէ՞ք: Էս ի՞նչ էք անում պարոններ, ժողորդին հաւկուրի տեղ էք դրե՞լ: Ութ միլիոն էք հաւաքել հա՞, երեք միլիոն էլ Լոս Անջելէսից: Մարդիկ հիմար ե՞ն, որ հաւատան այդ ցնդաբանութեանը:

Այդպէս էք անում էլի, որ յիշում ենք պատմութեան վերածուած Սէրժ Սարգսեանի հետեւեալ նախադասութիւնը.

Ա՛յ, տենց էք մտածում, որ ԽԻՅԱՐԸ թարս ա բունում...

Քաղաքագիտութեան դոկտոր Հայկ Մարտիրոսեանը գտնում է, որ նոր Սփիւռքը (նկատի ունի Հայաստանից արտագաղթածներին, Հեն. Ա.) «Ո՛չ ֆինանսապէս, ո՛չ ինտելեկտով բարեգործութիւն անելու մակարդակ չունի»:

Տօ~..., լսիր, ընկեր, այ տգէտ, ո՞վ է տուել քեզ այդ կոչումը, գուցէ թէ դու էլ ես փողով գնել այն, ինչպէս շատեր անկախութեան՝ հիմնականում առաջին տարիներին, էդ ո՞նց, այդ ո՞վ է այսօր մասամբ պահում Հայաստանի ժողովրդին: Այ՛, հայաստանցի սփիւռքահայը, ճիշդ է, այնքան դրամ չի տալիս Թեյէթոններին, բայց դրա փոխարեն ամբողջ տարին, ամսէամիս դրամ եւ ապրանքով լի խաւաքարթէ փքուն արկղեր է ուղարկում ոչ միայն իր հարազատներին, այլեւ անծանօթ մարդկանց ու հիւանդներին: Հայաստանցին փորձ ունի, դիտի, որ Թեյէթոնին ուղարկած դրամների աուիւծի բաժինը մսխուում է ու իւրացուում իշխանութեան կողմից:

Կորել է, կորե՛լ վստահութիւնը Հայաստանի իշխանութիւնների հանդէպ: Հայաստանցի սփիւռքահայը փորձ ունի, փո՛րձ...

Ա՛յ՝ միամիտ, դիւրահաւատ իսկական սփիւռքահայը, որ ամբողջ կեանքում ապրել է Մայր Հայրենիքի տեսլականով ու երբեք չի եղել Հայաստանում, նա՛ տուել է եւ միշտ է տալիս:

Աւարտուեց 2023 դժուարից էլ դժուարին տարին՝ Հայաստանի Հանրապետութեան նախկին նախագահ Պարոն Սերժ Սարգսեանի հետեւեալ կոչով.

«Անհանդուրժողականութեան կամ կուլակաթափութեան կոչերով ո՛չ մի տեղ չէք հասնի»:

Երանի՜ թէ Պարոն Սարգսեանը հասկանար իր ասածի միտք բանին: Եթէ նա իր յորդորկոչի մէջ օգտագործում է «Անհանդուրժողականութիւն» եւ «Կուլակաթափութիւն» բառերը, կը նշանակի ժողովրդի մէջ կայ անհանդուրժողականութիւն իշխանութիւնների հանդէպ: Իսկ ինչ վերաբերում է «Կուլակաթափութեան»ը, մի բառ, որ 8090 տարի է դուրս եկել մեր բառապաշարից, ըստ երեւոյթին նա նկատի ունի այսօրուայ Հայաստանի միլիոնամիլիարդատէրերին, որոնց հնարաւոր չէ ձեռք տալ ու կուլակաթափ անել...

Գալիք Նոր Տարում գուցէ Հայաստանում ստեղծուի հանդուրժողականութեան միջոցառում, որին սպասում ենք արդէն 30 տարի, եւ, մէկ էլ, թող մեր Կուլակ ընկերները նոր տարում արժանապատիւ տղամարդու վարմունքին յարիր կեցուածք ընդունեն եւ իրենց կարողութեան գէթ մէկ քառորդը նուիրեն Հայաստանի ժողովրդին:

Իսկ մեր ինդրանքահանձն այն է, որպէսզի երկրի վարչապետը Սէրժ Սարգսեանի պաշտօնավարութեան տարիներին երկրի միլիարդաւոր դրամ դիզած, առաւելական հարստութիւն դիզած՝ Հայաստանի էկոնոմիկայի կոմիտէի պետ Գաբրիլ Խաչատրեանից գրաւել մինչեւ վերջին լուծման ու այն յատկացնել խեղճուկրակ թոշակաւուներին: Իսկ վերջում մի հարց հենց իրեն՝ Գաբրիլ Խաչատրեանին.

Քո ունեցած միլիարդների չափ գումար կա՞ մեր պաշտելի Հայաստանի Հանրապետութեան գանձարանում:

ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

100 Տարի Առաջ 1923-ին (Նշանաւոր Իրադարձութիւններ)

Լոյս տեսած է «Ավանգարդ» պարբերականը:

Հիմնադրուած է Երեւանի Ռոմանոս Մելիքեանի անուան երաժշտանոցը:

Հիմնադրուած է Կոմիտասի անուան պետական երաժշտանոցը:

Լեւոնային Ղարաբաղի հայաբնակ մասէն կազմուած է Լեւոնային Ղարաբաղի ինքնավար մարզը (ԼՂԻՄ), Խանքենդի կեդրոնով, որ յետագային վերանուանուած է Ստեփանակերտ (մայրաքաղաք):

Հիմնադրուած է «Պետական Ֆիլմ» կազմակերպութիւնը, յետագային կոչուած է Համօ Բեկինազարեանի անուան «Հայփիլմ» կոնոստոլդիա:

Հիմնադրուած է Հայաստանի Ազգային Արխիւը:


Նիւ Եորքի մէջ վաճառքի հանուած է TIME-ը նորութիւններու աշխարհի առաջին շաբաթաթերթը:

Hollywood նշանի բացումը քաղաքամերձ բլուրին վրայ, նախապէս կը կոչուէր Hollywoodland:

Էլիզապէթ Թագուհին մայրն ամուսնացաւ ապագային Թագաւոր king George VI-ի հետ:

Իգմիրի մեծ աղէտը եւ Թուրքիոյ հանրապետութեան հռչակումը: Թուրքիոյ եւ Եօքօսամայի մեծ երկրաշարժը, որուն զոհ գացին 100,000 հոգի: Իսկ էթնա հրաբուխին պատճառով 60,000 բնակարան փուլ եկաւ:

Ինսուլին պատուաստը տրամադրելի կ'ըլլայ լայն հասարակութեան շաքարախտ տառապողներուն համար:



ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ.

ՎԱՐԴԱՎԱՌ ԵՒ ՈՍԿԻ ԱՆԹՈՍԵԱՆ



**ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆՔ ՉԵՐ
 ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ ՍՈՒՐՔ
 ԾՆՈՒՆԴԸ ՄԱՂԹԵԼՈՎ ՈՐ
 ԻՐԱԿԱՆԱՆԱՆ ՉԵՐ
 ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՆՉՆԱԿԱՆ ԵՒ
 ԱԶԳԱՅԻՆ ԲՈԼՈՐ ԻՂՉԵՐԸ**

ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌ ՍԱՐԳԻՍ

SARKIS PASTRY

Middle Eastern &

European Cakes

Delicious Pastry

For All Occasions

(Glendale, Anaheim & Pasadena)

KOLANJIAN BROTHERS

Երկչոտութիւն, թէ՞ Զգաստութիւն ԴՈՎՏ. ԳՐԱՅՐ ԵՒՊԵՏԵԱՆ

Ռոթշերտամ, Նետերլանտեր, հոկտեմբեր 2023:

Առիթը ունեցած եմ յաճախակի կերպով գտնուել Ռոթշերտամ: Նետերլանտները որպէս երկիր կը գերազանցեն իրենց գեղեցկութեամբ ու տակաւին ջրանցքները, որոնք կ'անցնին բոլոր քաղաքներուն մէջէն եւ որ երկրին կուտան յաւելեալ գեղեցկութիւն: Նետերլանտները լեռներ չունին բայց կանաչ մարգագետինները եւ ծառերը բաւարար չափով կը ստեղծեն հմայք: Ու տակաւին ոչխարները, արջառները, ձիերը եւ թռչուններու տեսակները՝ տարածուած ամէն կողմ, երկրին կուտան հրապուրիչ տեսք: Չեն ուշանար ենթադրութիւններդ, թէ այս երկրին մէջ մարդիկ ուրախ եւ հանգիստ են:

Ռոթշերտամի կեդրոնական հրապարակին վրայ տեսայ արձան մը որ կը մարմնաւորէ երիտասարդ տղայ մը որ կը քած է ինք իր մէջ: Արձանը ցոյց կուտայ անոր յուսահատ եւ յուսախաբ ըլլալու իրականութիւնը՝ իր կեանքէն, երկրի վիճակէն, տիրող մթնոլորտէն: Արձանին ետեւի կողմը կար այս գրութիւնը. «Անձնասպանութիւնը առաջին գլխաւոր պատճառն է մահուան՝ ի մասնաւորի երիտասարդութեան մօտ եւ յատկապէս երեսուն տարիքէն վար եղողներուն»:

Եւրոպայի այս գեղեցիկ եւ տնտեսապէս հարուստ երկրին մէջ մարդիկ՝ յատկապէս երիտասարդներ, ուրախ չեն: Անոնք կը քած են կեանքի յոյզերուն տակ եւ կը դիմեն անձնասպանութեան: Եթէ երիտասարդներու մօտ այս իրավիճակը ընդհանրացած երեւոյթ է, կառավարութիւնը այս արձանին նման միջոցառումներու կը ձեռնարկէ՝ փորձելով արթնութիւն եւ զգաստութիւն ստեղծել հաւաքականութեան մէջ:

Շարունակեցի կենալ հոն եւ խոկալ այս արձանին միտք բանիին վրայով: Եթէ մտածեցի որպէս հայ՝ հայրենիքին եւ Արցախին իրավիճակներէն մեկնելով, բայց նաեւ որպէս լիբանանցի ու արաբական աշխարհի մէջ ապրող անհատ, հարցերը ու տաղանայները մէկը միւսին ետեւէն կը հալածեն զիս-մեզ եւ կը մղեն բոլորս ընկրկումի, յուսահատութեան եւ յուսախաբութեան:

Յուսահատ ենք, որպէս հայեր եւ յուսախաբ ենք մեր ազգային, հաւաքական, հայրենի, եւ Արցախեան կեանքերուն մէջ գարգացած ու գարգացող իրավիճակներէն: Մենք ալ կը քած ենք մեր ներկայ ողբերգութիւններուն տակ: Արցախը կորսնցուցինք, մարդկային շատ զոհեր ունեցանք, Հայաստանի վիճակը անկայուն եւ բախտորոշ եւ սփիւռքահայ մեր շատ մը գաղութները կ'ապրին տաղանայալի օրեր:

Յուսահատ ենք: Այո:

Յուսախաբ ենք: Այո:

Պիտի մնա՞նք այս վիճակին մէջ: Եթէ ոչ, ի՞նչ պիտի ընենք:

Միասնականութիւնը եւ խօսքն իրական գործի եւ կեանքի վերածելու հեռանկարները շատ փայլուն եւ մօտալուտ չեր երեւար տակաւին: Ինչ որ ալ ըլլայ մեր ներկայ օրերու անընդունելի իրավիճակները, պիտի չի յուսահատինք համահայկական միտք-գործ իրականացնել Հայաստան, Արցախ եւ սփիւռք երամիասնութեան տեսլականով: Եթէ այսօր Արցախի հողը կորսնցուցինք բայց ոչ հոգին:

Հերի Գունտագճեանը համաշխարհային վաստակ ունեցող լուսանկարիչ եւ լրագրող էր: Հերին եւ հայրս գարմիկներ էին: Հերի կ'ապրէր Սուրբ Նշան եկեղեցիին թաղամասին մէջ՝ Պէյրութ, եւ որուն հանդիպակած կողմը «Ուստի Ապու ձեմիլ» էր: Պատանեկան տարիներուս, 1960-ական տարիներուն, այս թաղը կը կոչէինք ,հրեաներու թաղ: Բաւական թիւով հրեաներ կ'ապրէին հոն: 1967-ի արաբ-իսրայէլեան պատերազմի նախօրեակին, հրեայ բնակչութիւնը բոլոր թաղամասը պարպեցին առանց որ որեւէ մէկը իմանայ: Մեր ընտանեկան մէկ հանդիպումին, Հերի ըսաւ հօրս. «Վահէ, երկար տարիներու լուսանկարչական ասպարէզիս մէջ ասոր նման իրողութիւն մը չեմ տեսած: Բոլոր թաղը պարպեցին առանց որ որեւէ մէկը իմանայ»:

Կրնա՞նք որպէս հայ ժողովուրդ՝ վերօյիշեալ դրուագին նման, սկսինք քիչ խօսիլ եւ շատ աշխատիլ: Պիտի կարենա՞նք գապուածութիւն եւ կարգապահութիւն յառաջացնել մեր հաւաքական ու ազգային կեանքերուն մէջ, որպէսզի արդիւնքի հասնինք: Մտահան պէտք չէ ընել, որ երբ մեր ուժերը կը տրամադրենք խօսքի, խօսելու, եւ հակաճարելու՝ կը սպառենք մեր հաւաքական միտք-ուժը եւ գործ իրականացնելու կարողականութիւնները կը նուազին:

Ընկերային տեղեկատուութեան ցանցերը՝ դիմատետր թէ՛ այլ, զգլխած ու անցած եւ նաեւ «տնօրինած» են մեր կեանքերը: Անոնք «երկայլի» սուրի նման են: Եթէ լաւապէս օգտագործուի, կարելի է մեր



կեանքերուն մէջ յառաջխաղացք արձանագրել: Բայց կայ ժխտական կողմը: Անանոնք նոյնքան կրնան կիրքերը, զգացումները հրահրել եւ հոգիները ու տրամադրութիւնները աղաւաղել ու տակաւին անհանդուրժողական կեցուածքներ սրել: Պիտի կարենա՞նք մեր իսկ գործածած ընկերային ցանցերուն տալ դրական պարունակ: Կարծէք հեւքի մը մէջ ենք այս ուղութեամբ:

Եթէ առաջին Քրիստոնեայ պետութիւնն ենք, եւ ենք, այս պիտի նշանակէ թէ պիտի վերադառնանք մեր ակունքներուն եւ մեր ՀԱՒԱՏՔԻՆ: Մեր քրիստոնէական հաւատքին, որ ունի իր մէջ ՈՒԺ մը, որ կը փոխէ եւ կը շինէ: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Աստուած մեզի երկչոտութեան հոգի չի տուաւ՝ հապա գորութեան, սիրոյ եւ զգաստութեան» (Բ. Տիմոթէոս 1.6): Աստուածաշունչի այս համարը մեզի կուտայ ուժ: Ուժը փոխելու, փոխուելու, շինելու ու վերաշինելու:

Այսօր յուսահատ եւ յուսախաբ ենք երիտասարդ արձանին կերպարին նման եւ կը քած ենք: Այլ խօսքով, երկչոտ եղած ենք: Բայց ունինք հաւաստիացումը Հաւատքին եւ անոր դրոշմած ուժին: Ուժը, որ մեր կեանքերուն կուտայ գորութիւն: Այս գորութիւնը կրնայ փոխել մեր երկչոտ իրականութիւնը:

Այս գորութիւնը պիտի լիցքաւորէ մեր հոգին: Այս հոգին գորութիւնը կ'օգնէ մեզի, որպէսզի մեր սրտերուն մէջէն դուրս հանենք անհանդուրժողականութիւնը, քննը եւ ատելութիւնը եւ լեցնենք մեր սրտերը սիրով՝ հանդուրժելու եւ ընդունելու զիրար:

Այս գորութիւնը պիտի լիցքաւորէ մեր միտքը: Այս մտքի գորութիւնը կ'օգնէ որպէսզի կարենանք համարել մեր համահայկական միտքը եւ քով-քովի գալ՝ կազմելու համար ազգային եւ մտաւոր կարողականութեամբ օժտուած ուժ մը:

Այս գորութիւնը պիտի լիցքաւորէ մեր մարմինը: Այս մարմնի գորութիւնը կրնայ առիթը ստեղծել կազմելու ռազմական եւ դիւանագիտական կարողականութիւն, որպէսզի նաւարկենք տարածաշրջանային մեր վրայ պարտադրուած շատ մը դժուար պայմանները:

Այսօր կը քած եւ երկչոտ ենք: Բայց կայ հոգին: Այն հոգին, որ երկչոտութիւնը կը վերածէ գորութեան: Եւ գորաւոր մարդն է, որ կը սիրէ կեանքը, մարդը, հայը եւ հայրենիքը: Այս գորութիւնը եւ սէրը մեզ միշտ զգաստ կրնան պահել, որպէսզի մեր կեանքերը տանինք պատմութեան շարունակականութեան մէջ:

Երկչոտութիւն, թէ՞ զգաստութիւն: Պիտի ըլլանք երկչոտ, թէ՞ զգաստ, որպէսզի տեսնենք թէ՛ ինչ պիտի ընենք, որպէսզի դուրս գանք այս ազգային մեծ աղէտէն ու պատուհասէն: Ընտրութիւնը մերն է: Բայց զգաստութիւնն է, որ պիտի ապրեցնէ մեզ՝ հայը:

ՀՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
Armenian Missionary Association
of America

Արցախից Կարելի՞ է Հրաժարուել...

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ձախորդ օրերը ծանր են ու դժուար անցանելի, ինչպես իրադարձություններն են մատնանշում դեռ հիմակ ու հիմակ օձապտոյտ ճամբան մեր առջևն է: 2018 թվականից մինչև օրս ձախորդեցնող օրեր են եղել եւ դեռ շարունակում են, ե՞րբ վերջ կը գտնեն հայկական տարածքների բռնագրավման անաբեկող սահմանային կրակոցները, կարծեմ, պիտի դիմենք Եփրեմվերդուն կամ աստղագետներին: Ինչպես երեւում է Հիւսիսսփայլից յոյսը կտրուած Արեւմտափայլին են դիմում, գոնէ սա արեւ ծագեցնի, Հիւսիսսփայլը ծառը ճիւղակտոր է արել, Հայաստանից երես է դարձրել, քաղցր հայեացքը մեր թշնամուն ուղղուած, չեմ կարծում սա տեւական լինի, քանի որ թուրքին հաւատալն ու բարիք անելը անարդիւնք հեռանկար է, ոչ յուսադրող: Հայաստանը արեւելքում, իսկ Արեւմտափայլը արեւմուտքում հազարաւոր մղոններ հեռու այլ երկրների գլխից անցնող ճամբաներ: Այստեղ դիմենք ՀԳՄ նախագահ Էդուարդ Միլիտոնեանի «Դեմոկրատիայի աճուրդ» գրութեան առածին՝ «Դեռ ջուրը չհասած, մի՛ բոբկացէք, մինչև ջրին հասնելը, գուցէ փուշ մտնի ձեր ոտքը»:

Գրութեան վերնագիրը՝ գլխաւոր, մեզ հարց է տալիս՝ «Արցախից կարելի՞ է հրաժարուել...», սիրելիներ, նա մեր պատմական տարածքն է հազարաւոր տարիներով բնիկ հայեր են ապրել մինեւ օրերս նախքան բռնի տեղահանումը, ինչպէս կարելի՞ է հայկական աննման Արցախն իր այդ աննկարագրելի հարստութեամբ զիջել կամ նահանջել, նա Հայաստանի ողնաշարն է, թիկունքն ու ապակէնը, լաւ մտածէք հայ ժողովուրդ, շարունակ այսպէս զիջելով էք ապրել, որ այս խեղճ ու կրակ վիճակին էք հասել, լաւ իմացէք վաղն էլ ուրիշ տարածք էք զիջելու: Զիջելը հանգիստ մեր մէջ սովորութիւն-բնագը է դարձել...

Ներկայիս Միջին Արեւելեան աշխարհաքաղաքական պատերազմական վիճակը մեզ յուշում է՝ զգոն քաղաքականութիւն: Դէպքերն ու իրադարձութիւնները այն համոզումն են առաջացնում, որ պէտք է մեր միասնական հայութեան ուժերին եւ ջանքերին հիմնուել: Այստեղ պիտի յիշեմ վարդան Գեւորկեանին՝ «Ուշ միջնադարեան հայ բանաստեղծութեան մէջ» գրութեան, ուր գրում է՝ «...Հայ ժողովուրդի եկեղեցական եւ աշխարհական պատասխանատուները երկիրը պատսպարելու, ներսից ամրապնդելու փոխարէն այգու պահապաններ էին որոնում այս կամ այն երկրում...»: Սա է եղել մեր անցեալի կործանիչ քաղաքականութիւնը: Այդուհանդերձ ըստ մեր աշխարհագրական դիրքին ու կարողութիւններին, անհրաժեշտ է բարեկամներ ունենալ փոխադարձ օգտակարութեամբ եւ պաշտպանութեամբ: Հայ ժողովուրդը իր մտքին ու բանականութեան պիտի ուժ տա՛ եւ խորհուրդ տա՛ իշխանաւորներին՝ մտածելով քաղաքականութիւն վարել, հեռատեսութեամբ ծրագրել իրենց անելիքները, որ մէկը որ երկրի գոյատեւման, զարգացման, հզորացման սատար կը հանդիսանայ այդ ճանապարհը ընտրել հաւատարմօրէն

պաշտպանելով բարեկամութիւնը, ոչ թէ ճիւղից ճիւղ թռչկոտել, ապահով եւ խոստումնային հիմք պիտի ընտրել գոյութիւնը ապահովագրելու համար մեր այս բարդ տարածաշրջանում թշնամիներով շրջապատուած, որոնք ամէն յարմար առիթ օգտագործում են Հայաստանին ճիւղակտոր անել, երախները բացած Հայաստանին կուլ տալու եւ միջոցներ են փնտռում իրենց դարաւոր երազը իրականացնելու համար:

Հայ ժողովուրդը իր դարաւոր մշակոյթով ու օգտաւէտութեամբ արժանի է ապրի խաղաղ ստեղծագործ կեանքով, սակայն ամէն ձգտում իր գինն ունի, որն է երկիրը պէտք է հզորանայ տարբեր ուղղութիւններով սերտ յարաբերութիւնների միջոցով բարեկամ երկրների հետ: Ահաւասիկ իմ կարծիքով սա պիտի լինի մեր որեւէ իշխանաւորի ճամբի քարտէզը:

Նկատելով նոր տարեմուտի սեմին ենք գտնուում, մեր մտքերն ուղղում են դէպի Ամանորին եւ մտածումներ են ծնում: Շատ ու շատ ամանորներ են մեր գլխից անցել շատ անգամ խեղճ ու կրակ, երբեմն առօք-փառօք պայմաններում: Այդ տօնական օրերին հայրենա-ազգային բարեմաղթանքներ եւ պատգամներ շատ են հնչել հոգեւոր եւ աշխարհական խոհուն անձնաւորութիւնների կողմից, գրութիւններ են գրուել գրողների, մտաւորականների եւ թերթերի խմբագիրների կողմից, եթէ մենք ուշադիր հետեւէինք նրանց մտահոգութիւններին, առաջադրանքներին, յորդորներին եւ դաս առնելով այսօր մենք կ'ունենայինք հզոր հայրենիք, մշակոյթ եւ տնտեսութիւն ոչ կախեալ օտարներից խաղաղութիւն աղերսելու դերում: Ցաւօք մեծամասնութեամբ խուլ ենք մնացել վայելչանքով տարուած անփոյթ մեր հայրենիքի շահերի նկատմամբ, որով այս վիճակին ենք մատնուել Արցախը բռնաթափ եղած, Հայաստանից տարածքներ գրաւուած եւ այլ վտանգներ ու աշխարհում ցիր ու ցան, դեռ շատեր էլ ցանկանում են որքան շուտ հայրենիքից դուրս գալ, իսկապէս ողբամ զքեզ հայ ժողովուրդ, որ որդեգրել էս՝ որտեղ հայ, այնտեղ էլ կայ, այս է եղել մեր դժբախտութեան պատճառը, եթէ ամուր կառչած լինէինք մեր հայրենիքից ոչ տարածքներ կը զիջէինք, ոչ էլ խաղաղութիւն կը մուրաչինք, այսօր պատուով եւ խաղաղ կ' պրէինք առանց տարտղնուելով աշխարհով մէկ: Առաձն յիշեցնում է՝ վնասի առաջը երբ բռնեա օգուտ է:

Գալով վրայ հասնող տարեմուտ 2024-ին մեր սրտագին մաղթանքն է մեր ժողովուրդին հայրենիքում եւ Սփիւռքում քաջաւորութիւն, միասնական ոգու ամրապնդում, հայոց մշակոյթի անսասանութիւն, ժողովուրդի բարօր կեանք եւ մեր արդարացի պահանջների հետեւողական անխոնջ աշխատանք, անզիջում կեցուածք իրաւունքների պաշտպանութեան տեսանկիւնից ուր էլ գտնուենք:

Նոր յոյսերով, նոր գործերով, նոր ձգտումներով ի շահ հայրենիքի հզորացման եւ բարգաւաճման:
Շնորհաւոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

Մամուլը Հոգեւոր Բերդ «Մասիս»-ը Նոյնպէս

Ահա տարին 2023 թիւը պատմութեան է անցնում Հայաստանի եւ հայութեան համար ձախորդութիւններով լի: Այն ինչ ցանկացել եւ երազել էինք հին տարում Հայաստանի եւ Արցախի համար, ոչ մէկը չիրականացաւ, այլ նոր կորուստներ ու նոր գոհեր տեղի ունեցան: Ամենամեծ կորուստը 44 օրեայ պատերազմն ու Արցախի հայ բնակչութեան տեղահանումն էր գոհերով, սրանից մեծ կորուստ չի կարելի երեւակայել, յուսով իշխանաւորները իրենց կարելին կանեն հայութիւնը վերադարձնել իրենց օձախները: Արցախը կորցնելով յետագային էլ կը կորցնենք ուրիշ տարածքներ, քանի որ մեր թոյլամորթութեան շնորհիւ զիջելը սովորութիւն է դարձել: Բոլորս էլ լաւապէս ըմբռնում ենք, որ Արցախը՝ Հայաստանի ողնաշարն ու թիկունքն է, հայութեան ապակէնը իր աներեւակայելի հարստութեամբ:


Ամանորեան այս նոր 2024 թ. տարեմուտի առիթով սրտագինս շնորհաւորում ենք «Մասիս» շաբաթաթերթի խմբագրին եւ ողջ

խմբագրական կազմին մաղթելով նորանոր յաջողութիւններ այս գալիք տարում եւ ամուր կամք ու եռանդ լծուած հայրենաշինութեան եւ հայապահպանման: Այստեղ յիշենք երջանկայիշատակ Վազգէն Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարճ ու կտրուկ պատգամը՝ «Հայրենիք ստեղծելը հերոսութիւն է, հայրենիք շէնացնելը՝ առաքինութիւն»:

Ասում ենք մամուլը՝ հոգեւոր բերդ է, հայկական հոգեմտածողութեան պատնէշ: Հայ մամուլը մեծ առաքելութիւն ունի Սփիւռքում սերունդների մէջ առկայծուն պահելու հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնը, նաեւ պաշտպանելու մեր մշակութային եւ բարոյա-իմաստասիրական արժէքները:

Ահա այս մտորումներով ընդառաջ գնանք մուտք գործող տարեթիւն, 2024-ի մեր խոհուն, մտաւորական եւ հայրենասէր անձանց պատգամներին ու խորհուրդներին ունկնդիր:

Ռ. ԿՈՐԻԻՆ



ԱՆՈՒԱՆԱԿՈՂՅՈՒԹԻՒՆԸ ՏԵԱՌՆԸ ՁԱԻՆ Ա ՔՅՆ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Յուճուար 13-ը, ութօրէքն է Սուրբ Ծննդեան, անշարժ թուական մը ինչպէս Յուճուար 6, երբ Մանուկը անուանեցին ՅԻՍՈՒՍ համաձայն հրեշտակին իր մօր Մարիամին տուած աւետիսին: Անշարժ թուական պիտի ըլլայ նաեւ Փետրուար 14-ը երբ քառասնօրեայ Մանուկը Տաճար պիտի ընծայուի:

Յիսուս եղաւ առաջին անուանումը, որուն անմիջապէս կցուեցան Փրկիչն ու Օծեալը: «Օծեալ»ին յունարէն թարգմանութիւնն է Քրիստոս՝ «զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ որ է Օծեալ Տէր ի քաղաքի Դաւթի», ինչպէս կը կարդանք Ղուկասու Աւետարանին սկիզբը: Սկզբնական այս երեք անուանումները, Յիսուս, Քրիստոս, Փրկիչ, իրենց յատուկ բովանդակութեամբ տրուեցան, Յիսուս «որ պիտի փրկէ իր ժողովուրդը», եւ Քրիստոս «Աստուծոյ օծեալը», եւ «Փրկիչն աշխարհի» որ պիտի ազատէ մարդիկ իրենց մեղքերէն իր կեանքի զինով, արեան հեղմամբ խաչին վրայ, տէրը կանգնելով իր անուններուն:

Աւելի հիմնական անուն մը, նոյնիսկ իր ծնունդէն առաջ, Մարգարէներէն կուգայ եւ Աւետարանիչն ալ այդպէս նշած է, թէ Բեթղէհէմի ծնունդ Մանուկը էմմանուէլ պիտի կոչուէր, որ եփրայերէն լեզուով կը նշանակէ «Աստուած մեզ հետ», էլ-ը էլօհիմն է (Աստուած), եւ էմմանու (մեզ հետ): Արաբերէն լեզուն եւս նոյն կոչումը կ'արձագանգէ՝ «մա'անաե (մեզ հետ) «Ալլահ» (Աստուած): Այս անուանումը շատ յատկանշական է քանի որ Յիսուսի ծննդեամբ Աստուած յայտնուեցաւ, եւ ոչ թէ միայն մանուկ Յիսուսը ծնաւ: Հայոց եկեղեցին կը շեշտէ այս կէտը եւ միայն Ծնունդ չի կոչեր այս մեծ տօնը, այլ նաեւ Աստուածայայտնութիւն:

Այս չորս անունները, էմմանուէլ, Յիսուս, Քրիստոս, Փրկիչ, սրբագործուեցան անուանակոչումով մը եւս, այս անգամ Հայր Աստուծոյ կողմէ Յիսուսի մկրտութեան պահուն, երբ «սա՛ է Որդին իմ սիրելի», ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾ ՈՅ բարձրագոյն անունով կոչելով զինք: Իր երեսնամեայ աստուածային առաքելութեան շրջանին եւ մանաւանդ աւարտին Յիսուս այս անգամ ինք ինքզինք կոչեց նաեւ Որդի Մարդոյ, զայն յատկացնելով իր մարդկային բնութեան, եւ երկուքին՝ աստուածային եւ մարդկային բնութիւններուն միացմամբ իր Անձին մէջ, աշակերտներուն յայտնելով վերջին դէպքերը՝ թէ ինչ պիտի պատահէր իր կեանքի վերջին օրերուն:

Յիսուս Քրիստոսի Համբարձումէն ետք նորակազմ եկեղեցին Պօղոս Առաքեալի բերնով զինք անուանակոչեց եօթներորդ եւ լրացուցիչ անունով մը թէ ինքն է ՏէՐԸ, «անուն մը բոլոր անուններէն վեր»:

Էմմանուէլ՝ Աստուած Մեզ Հետ

Եփրայերէն արական յատուկ անուն որ երկու անգամ կրկնուած է Եսայի Մարգարէութեան մէջ (7:14 եւ 8:8) իր թարգմանութեամբ՝ «Աստուած մեզ հետ», եւ այն մեկնաբանութեամբ թէ Աստուած իր ներկայութիւնը ցոյց պիտի տայ իր ժողովուրդի փրկութեան համար: Մարգարէութիւնը կատարուեցաւ Բեթղէհէմի Մանուկին ծնունդով որ կոչուեցաւ Յիսուս: Մատթէոս Աւետարանիչ կը հաստատէ զայն ըսելով թէ Եսայի մարգարէի բերնով ըսուած է թէ՛ «ահա կոչուր պիտի յղանայ եւ որդի մը պիտի ծնի, եւ զայն պիտի կոչեն էմմանուէլ

որ կը թարգմանուի Աստուած մեզ հետ» (1:23):

Քրիստոնէական հասկացողութեամբ էմմանուէլ անունը կը նշանակէ Աստուածայայտնութիւն: Ան նաեւ Քրիստոսի հետեւորդներուն վրայ կը թողու ծանր պարտաւորութիւն մը՝ եթէ Աստուած մեզ հետ է, արդեօ՞ք մենք ալ Աստուծոյ հետ ենք: Ծանրակշիռ պարագայ մըն է որ սակայն կարելոր մասամբ իր քաղցր պատասխանն ունի Քրիստոսի եկեղեցին միջոցաւ: Ո՞րքան երջանիկ պէտք է զգայ Քրիստոնեայ աշխարհը որ Քրիստոսի մարմնաւոր ներկայութիւնը կը շարունակէ իրագործել իր հոգեւոր մարմնոյն՝ եկեղեցին միջոցաւ, այսինքն մեղալից հաւատացեալներու ջերմեռանդ պաշտամունքով:



Յիսուս-Քրիստոս ՏէՐ ԲՈՂՈՐԻՆ


Ան որ մարդոց մեղքերը իր վրայ պիտի վերցնէր ինչպէս ինք ըլլալով միակ անմեղն ու Օծեալը ինչպէս գրած է Ղուկաս Աւետարանիչ (2:8-20): Փրկիչը Մեսիան պիտի ըլլար իր Օծեալ Քահանայապետի հանգամանքով, որովհետեւ օծեալը Հայր Աստուծոյ ընտրեալ Որդին էր միանգամայն: Եզրափակիչ ՏէՐ անունը յայտնապէս տրուեցաւ Յիսուսի իր առաքելութեան աւարտին Համբարձումէն ետք որպէս փոխառեալ անուն Հին Կտակարանէն, եւ Յիսուսի ծննդեան պահուն իրեն տրուած ազդանշանէն: Այս անգամ Պօղոս Առաքեալի կողմէ հռչակուած անուանակոչում մը եղաւ իր նոր բովանդակութեամբ, երբ Առաքեալը հրաւիրեց նորադարձ քրիստոնեաները ճանչնալու Փրկիչը որպէս ՏէՐ եւ իբր այդպիսին պաշտելու զինք: Քանզի այդ անունին առջեւ, որ գերիվեր է ամէն անունէ, ամէն ոք պիտի ծնրադրէր, երկրի վրայ եւ կամ երկնքի մէջ: ՏէՐ անունը անմիջապէս պաշտամունքի կեդրոնական տեղը գրաւեց եկեղեցիներուն մէջ, ցոյց տալով որ ամէն քրիստոնեայ ենթարկուած կը մնայ Յիսուս Քրիստոսի որպէս ՏէՐ բոլորին, բոլոր պարագաներու ներքեւ: (Փիլիպեցւոց 2:11):

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԻԱՐ ՊԵՐՃ ՉՈՒԱՔԵԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿ.
ՄԻՀՐԱՆ ԱՂՊԱՊԵԱՆ

Ամանոր-Վանատուր ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Հանճարդ Հայկական, Նաւասարդեան սա տօներուն արեւափառ,
Ա՛լ վերածնէ փլատակներէն, եւ փառակոչ քնարդ ա՛ռ:
Յանուն ուժին, յանուն գեղին, մտիր մեհանն աստուածներուն:
Ձաւր ձեռքիդ՝ բազմէ բազմ համասփռէ Հոր ու արին:
Եւ Բարձրացուր Անահիտի Լանջն Ի Վեր Բաժակդ նուր,
Յետոյ զոհուող քերթողներուն սրտին վրայ Լեցուր, լեցուր:
Ձի մենք, յանուն սերին, սերմին քու հին ցեղիդ Մարմարէ կոյս,
Մենք զաւակներդ օգոստափառ, պիտի կերտենք Նոր Արշալոյս:
Դանիել Վարուժան



Արմին-Հայոց նախնիների համայնադիցարանում վանատուր աստուածը հիւրընկալութեան, պանդուխտների, օտար ճամբորդների օթեան պարգեւողը ու հովանաւորողը, համաժողովրդական սիրոյ արժանացած աստուածն էր: Իսկ Ամանորը, Արմին-Հայերի նախնիների նոր տարին անձնաւորող «նոր պտուղների ամենաբեր» բերքի ու ուրախութեան աստուածն էր: Նրա տօնը կատարուում էր Նաւասարդին՝ Արմին-Հայերի հին տոմարի Յուլիսի ու Օգոստոսի սկզբներին, երբ հասունանում էին մրգերը, երբ արտերում ցորենի հասկերի ոսկեծուփ հեղեղ էր հոսում: Նաւասարդեան տօնախմբութիւնները բացառիկ ցնծութեամբ էին կատարուում, յատկապէս իրենց տիեզերական հաւատքի կեդրոններ՝ Բագրեւանդ գաւառի դաշտավայրի Բագաւան՝ դիցաւան-աստուած, աւանում: Այնտեղ էին Ամանորի ու հիւրընկալ Վանատուրի պաշտամունքատեղիները:

Վանատուրը, Նաւասարդին ու այլ օրերին Բագաւան եկած հիւրերին ու ուխտաւորներին հիւրընկալելու տեղ ու օթեան էր տալիս: Կարծիքներ կան, որ Վանատուրը ու Ամանորը նոյնացուած ու «Նոր Տարի» տօնը անձնաւորող աստուածներնէին: Հայոց հայկազուն Արտաշէսեան թագաւորական տոհմից Տիգրան VI թագաւորը՝ իր եղբօր Մաթան քրմապետի Բագաւանի գերեզմանի կողքին սրբապաշտ կառուցել, որ անցորդները կերակրուէին տեղում գոհաբերուող կենդանիների միտով եւ այնտեղ էլ հիւրընկալուէին ու զիշերէին:

Մեր թուարկութիւնից չորս հարիւր տարիներ առաջ, յոյն զօրավար-պատմագիր Քսէնոֆոնը, տասը հազար (մէկ բլուր) մարտիկներ հաւաքած (Բիւրեաց արշաւանք) եկել հասել էր պարսկաստան, երկրի տիրակալ Կիրոսի ու նրա գահին յաւակնող Դարեհի միջեւ ծագած կռուին մասնակից լինելու: Ռազմի դաշտում պարտուել, ընկել էր Կիրոսը: Քսէնոֆոնը հեռանում ուղարկելով դաշտից, նահանջում, որը պատմութեան մէջ յիշուում է որպէս «Բիւրեաց Նահանջ»: Դէպի ծովի ելքի վերադարձի կարճ ճանապարհը համարել է Արմինա երկրի լեռնաշխարհի տարածքը:

Տասը հազար մարտիկներ անցնում էին արմինների երկրի ճամբաներով: Արմինայի շէնքերի մարդիկ ապաւէն տուել, ապաստան շնորհել, իրենց ճամբաներին պատած խրճիթներում՝ կերակրել, զարիի ջուր հիւրասիրել: Եւ այդ պատմագիր-գօրավար Քսէնոֆոնը պիտի գրէր՝ «առատութիւն էր Արմինա աշխարհում, հողն էր մշակուած, այգիներ ու անձայրածիր հանդեր ճամբաներին»: Եւ մինչեւ հիմա էլ կիսաքանդ են մնացել Գեղամայ ծովից Սիւնիաց աշխարհ գնացող բարձրադիր լեռնային ճանապարհի պատասպարան խրճիթները, ժայռափոր կացարանները:

Վանատուրի պատուին տօնախմբութիւնը կատարուել էր Արմին-Հայ նախնիների Նաւասարդ ամսուայ առաջին օրը, նոր տօնացոյցի Օգոստոս ամսուայ 11-ին, երբ իրենց այգիներում ծառերը ծիածան գօտի կապած ողջոյնում արեւին, արտերում ցորեանն էր ոսկի հասկերով պար բռնում լեռներից եկած հովիտների հետ: Հասունացած բերքի երախայրիքն էին նուիրել իրենց աստուածների բազմիններին: Արմին-Հայեր, գնացել Բագրեւանդ գաւառի Նպատ լեռան ստորոտի Բագաւանի Վանատուրի տաճար, նրան նուիրուած օթեաններում, խրճիթներում տօնախմբութիւններ կատարել: Նրա բազմին խուրճերով ցորեան, կթոցներով մրգեր նուիրել: Տաճարի ու օթեանների առաջ պարեր բռնել, երգ, խաղերի մրցոյթներ, թասերով գինի ըմպել, կարմիր գինի շաղ տուել կրակ քարից երկնած Վանատուր աստուծոյ անդրին, գոհեր մատուցել նրա բազմինի առաջ, նրանց տաք արիւնով օծել իրենց ու Վանատուր աստուծոյ ճակատները: Աշխարհիկ կեանքի սքանչանքի վայելքի հրայրք, Վանատուր աստուծոյ պատուին կատարուած տօնահանդէս էր: Աշխարհական մարդիկ, արարող մարդիկ, բնութեան երեւոյթների, ճշմարտութիւնը, կեանքը փառաբանող մարդիկ:

Արմին-Հայը հազար-հազար տարիներ քայլում է իր արարման խորհուրդով, իր հոգում անթեղած Արմին-Հայոց աշխարհի Նահապետի

քաջին վայել ոգին, աւանդաբար իրեն հասած նախնիների յիշատակութեան արժանի բազում քաջ գործերի պատուները, նրանց տիեզերական իմաստութեան աստուածների հաւատքի ճշմարտութիւնը: Բարեպաշտ էին իրենց աստուածները՝ կրակ ու լոյս պարգեւել արմիններին, մայրանալու հրաշքի հէքիաթ պարգեւել իրենց դաշտերին, արտերին, այգիներին, երկնի կապուտից ընկած Աստղիկ դիցուհու վարդաթերթիկների հազար գոյների գեղեցկութիւն հոսել հարսերի դէմքերին, թշնամու դէմ մղուած մարտերում յաղթանակի ոգի ցօղել մարտիկների սրտերին, երկնից ջուր անձրեւել դաշտերին, հողը պաշտելու կրակ վառել սրտերին, հոգիներին արքաների հանդէպ սիրոյ հրավառութեան շանթեր տեղացել: Իրենց հոգիների տաճարներում ցեղի արարման հրաշքի լոյսը պահպանելով՝ դարձել յաւերժութիւն: Ստրուկ չի եղել երկրում, յանցանքի համար պատիժ եւ ոչ թէ մահապատիժ սահմանել:

Աշխարհ անցիր Արմին-Հայ-ի նման օտարին յանդուրժող, հիւրընկալ մարդ չիք: Քու ճանապարհին հայոց շէնքերով անցնելու ատեն զարկե՞լ ես մէկի դուռը: Տանտէրը, տանտիրուհին դուռը լայն բացում քու առաջ, այնտեղ կանգնած շինականը ժպտադէմ դիմաւորում, իրենց Միհր արեւ աստուծոյ լոյսի մաղթանքի «Բարեւ, բարի արեւ, բարի Օր» մաղթանքով տուն հրաւիրում: Եթէ պապակդ յագեցնելու համար ջուր խնդրէիր, թասով թան, մի գուցէ եւ թասով գինի էլ հրամցնէին: Հայոց նախնիների Վանատուր աստուծոյ հիւրընկալութեան ոգու լոյսն է աւանդաբար հասել իրենց սրտերին, յոգնատանջ անցորդին հիւրընկալել ու բարի մաղթանքով ճանապարհել: Արմինա երկրի բարեպաշտութիւնը հասել հարաւի երկիր, հոսել «Աստուածորդի»-ի հոգուն: Նրան հետեւորդները հաւատք տածել նրա բարեպաշտութեանը, այն համարել կրօնք, որը իր ժամանակին աշխարհը փրկել էր «չարութիւնից»: Ո՛վ զարմանալի, նրանից երեք հարիւր տարիներ յետոյ, պարթեւների ցեղից մի մարդ, իր ցեղի ու զարմի վրէժի համար սպաննեց Արմինա երկրի աստուածներին, հարիւր տարիների կռիւներում մարեց ա՛յն հաւատքի լոյսը, որ իր պաշտած Աստուածորդու կրօնի լոյսը նրանց իմաստութեան ակունքներից էր ճառագել:

Իրարու ոչ յարիր ժողովուրդների ու իր թշնամի ցեղի հետ դաշնակցային բռնադատուած միութեան մէջ եղող Արմին-Հայոց անչափ փոքրացուած աշխարհում, օտարին յանդուրժող, նրան տունտեղ, աշխատանք տուող Արմինա-Հայաստան երկրի նման մարդիկ չեն եղել ու չիք: Արմին-Հայերի որդիք, որոշ հանգամանքներում էլ նրանց նոյնիսկ աւելի նախամեծար համարել...: Արմինա-Հայաստանի արեւմտեան կողմն աշխարհի ահաբեկուած հայ մայրեր կանչել էին՝ «Քուրտին... գիտե՞ս քուրտին»: Նրանց գիր տուին, հող տուին, այբենարան յօրինեցին, դպրոց բացին, թողին իրենց ճանասփիւռի կայանից ժամերով երգեն-խօսեն-պարեն իրենց լեզուով, լրագիր տուին, ա՛յ քեզ Աստուածաստեղծ Արմին-Հայ մարդ: Իրենց երկրում ստրուկ չի եղել, արարող մարդիկ էին, իրենց արարումից բաժին հանել թագաւորին, իրենց աշխատանքը ու հողը պաշտպանող քաջերին, իրենց մարդացած աստուածներին: Ինչո՞ւ Աստղիկ, Նանէ, Անահիտ, Նար Մովինար աստուածուհիներ կը լինէին եւ ոչ նաեւ նրանց սպասարկող քրմուհիներ ու քուրմեր, որոնք վայելել են



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԵՐ ԵՒ ՏԻԿ.
ԱՒՕ ԵՒ ԱԼԻՍ ՄԱԶՄԱՆԵԱՆ**

Ամանոր-Վանատուր

ամուսնական կեանքի ու մայրանալու հրճուանքը, իրենց գաւակներին նուիրել աստուածներին, հողի մշակութեան, հայոց գորքի մարտական վաշտերին: Հայոց հին աստուածներ, արմինների արի ցեղի տիեզերական աստուածներ, ասացէ՛ք ինչպէ՛ս գովերգեմ ձեզ, իմ գրչով ուզում եմ ձեր տիեզերական իմաստութիւնը նորէն հոսէր Արմին-հայերի սրտերին, նրանց հոգիներում մեհեաններ պատէի ... որ այնտեղ իրենց հազար-հազար դարերի «Հայ-Հայ» աստուածոյ պաշտամունքը լինէր: Տարօն աշխարհի հորիզոնն էր վառուած մայրամուտի բոսոր լոյսի հեղեղով, ծովն էր ծիրանի կապել: Մայրամուտի լոյսով հանդերձաւորուած, Արմին-հայերի աշխարհի մարդիկ գալիս Տարօնի եւ Բագրեւանդի սահմանազխին, Երիզա գաւառի՝ սրբազան Արածանի գետի ափերին, Նպատ լեռան ստորոտի Բագարանի տաճարներում տօնախմբելու իրենց Նահապետ Հայկի յաղթանակի, Արամազդ աստուածահօր, ամենաբեր դից Անահիտի, Ամանորի ու Վանատուրի յիշատակները: Տօն էր Նաւասարդի, բնութեան բերքի ու ծաղկունքի լինելութեան: Նաւասարդի խրախճանքներին նրանք եկել էին Արածանիի հեռու ափերից, որտեղ տօնել էին Աստղիկ դիցուհու Վարդավառը, եկել մասնակցելու նաեւ «Ամանոր-Նաւասարդ»-եան հանդէսին: Աստղիկ դիցուհու վարդավառը հայոց հին տարուայ վերջին սրբազան տօնն էր, որի խրախճանքից յետոյ Աստղիկը, Մայր Անահիտի, Նանէի, Վահագնի, Միհրի հետ գալիս մասնակցելու Նաւասարդի տօնախմբութիւններին:

Գալիս էին Արմինա-Հայ աշխարհի ասքերգուներ, գուսաններ, աշխարհական մարդկանց հոծ բազմութիւն, աստուածներին սպասարկող քուրմ-քրմուհիներ: Հապա հայոց արքան, թագուհին ու արքունիքը, երկրի իշխաններ ու իշխանագուներ, ճանապարհի երթից յոգնած գնում իրենց վրաններ: Գուսանների խմբերն էին ընդհանուրից քիչ առանձին, իրենց նուագարանները լանջերին սեղմած կէս քուն ու արթուն, քնելը մեղք էր հին տարուայ գիշերը: Խոկում էին հեռացող տարուայ յիշատակները՝ հարսանիքներ, պալատում արքայի խնձոյքներ, արքայազուհիների ծնունդ, աստուածների հանդէսներ: Իրենց հոգիներն էին հրճուած տեսնելով հորիզոնում վառուող աստղի ճրագալոյսը: Տարեց գուսանն էր աղօթք մըմնջում Տիր աստուծոյն՝ «Արմէն-հայերի ապրելու ժամանակը երկար տարիների մէջ տեղաւորիր»:

Արեւ աստուած Միհրը գարթնում քնից, այգելոյսի ջահ վառում Արմինա-հայոց սրբազան լեռան՝ Արարատի գագաթ, իր այգեծաղկի առաջին շողերը ափում Արմինա-հայոց աշխարհին: Արածանի սրբազան գետի ափերին, Բագարանի ու Բագրեւանդի մեհեանների առաջ կանգնած Արմէն-հայերն էին ափերով ծաղկացած լոյս քաղում, իրենց մանչերի ակները ողողում, իրենց դէմքերը ցողում: Եթէ դու լինէիր Արածանիի ափին պիտի տեսնէիր քու ցեղի արքան, թագուհին իր թեւերին, նրան շրջապատած արքունիքը, հայկազուն իշխանները, աշխարհական ժողովուրդը: Միհրի արեւածաղիկ լոյսն են համբուրում, որպէս Նաւասարդեան պարգեւ այն իրարու փոխանցում, արքան նրա լոյսով թագուհու լանջն է ողողում: Այգեբացի լոյսի առաջին ճառագայթները վառում Արածանիի ջրերի վրայ: Արածանիի ջրեր, գետն էր հազար գոյներով ժպտում: Հայոց Գողթան երգիչները լոյսն էին փառաբանում՝ «Թող վարդեն յիշողութեան նուագները, մոռացումի Ամանոր ու Վանատուր մեհեանների հրապարակում, արքան, իշխանները աշխարհական մարդիկ Վանատուրի ու Ամանորի հանդէս տօնախմբում: Գողթան աշխարհի երգիչներ երգեր հնչում, երգեր, որոնց հնչիւնների արձագանգները հասել Միհրի Գառնի տաճար, որտեղ արեւային քրմուհիներ ինչքան անուշ են հնչում այն: Թմբուկ զարկում, փողեր հնչում, տարբեր գործիքների լարերից մեղմանուշ հնչիւններ ծորում: Մեհեանի շուրջ բոլորը խարոյկներ էին բացավառում, որոնց բոցերը ճախրում երկինք, գնալու կրակի ու լոյսի աստուած Արա-ին ողջոյնելու, աւետելու նրան իրենց լինելութեան առհաւատչեան, աւետելու նրան կրակի ու լոյսի խորհուրդի յաւերժութիւնը: Ծամփուրների վրայ իրենց լեռների լանջերին վազող որսած երէններ էին, խորոված մսի անուշ բոցն էր պատել մեհեանի հրապարակը: Երկու կտորիճ տղաներ, խորոված երէի շամփուրի երկու կողմերից պահած, տանում մատուցելու իրենց արքային: Ամանոր աստուծոյ տօնախմբութեանը առաւել խրախճանալու համար սովորակաւնից կանուխ էին ճաշում: Վանատուր աստուծոյ հիւրընկալ խրճիթներ, սպասաւորները կացարան էին տրամադրում հեռու վայրերից ժամանածներին, մեհեանի բազմիկներին զոհուած կենդանիների եփած միս, նոր բերքի երախայրիքի մրգեր հիւրասիրում, կարգն էր այդպէս: Արմինա-Հայաստան աշխարհում, աստուածների բաշխած բերքի առատութիւն էր: Արմին-Հայ, այդ ինչքան երախտիքի ոգի են քու հին աստուածները լցրել հոգուդ տաճարների բազմիկներին, որ մինչեւ հիմա էլ քու արարչական


երկրիդ լեռների ճամբաներին կացարաններ կան... պատսպարելու կարիքաւոր անցորդներին, փառք առհաւատչեայ լինելութեանդ:

Աշխարհական մարդիկ, արքան, արքունիքը, իշխանական տները, մեհեանի հրապարակում էին: Մեհեանի քրմապետն է այսպէս խօսել:

-Արմինա աշխարհի արքայ, ողջ լեր: Ողջոյն Արմինա երկրի իշխաններին, աշխարհական մարդկանց: Տօն է այսօր՝ Նահապետ Հայկի յաղթանակի, Արամազդ աստուածահօր, ամենաբեր դից Անահիտի, Ամանոր ու Վանատուր աստուածների յիշատակութեան: Տօն է՝ Ամանոր աստուծոյ, բնութեան ծաղկունքի լինելութեան, Արմին-հայերի նոր տարին անձնաւորող «նոր պտուղների ամենաբեր» բերքի ու ուրախութեան: Տօն է Նաւասարդի՝ երբ մրգերն են հասունանում, երբ արտերում ցորենի հասկերի ոսկեծուփ հեղեղ է հոսում: Նաւասարդ, Նահապետ Հայկի յաղթանակի օր, Արմինա աշխարհում «Նոր Տարի», Ամանորի ու Վանատուրի յիշողութեան օրն է: Բոլորի սրտերին խրախճանքի խարոյկներ բռնկեն, աշխարհական տօնախմբութիւն լինի, գինի հոսի մեհեանի որմերին ու նրա բացատին: Թմկահարներ՝ թմբուկ զակէ՛ք, երգիչներ, փողահարներ՝ աստուածների յիշատակութեան տաղեր հնչեցէ՛ք, գինի ըմպէ՛ք, շուրջ պարեր լինեն, քաջերի խաղեր լինեն: Սպիտակ հագուստներով պարմանուհիների բոլորակ շարքն էր հանդերում պարի ելած փերիների նման ելեւջում, նրանց իրաններից ձկնի փաթիլներ մաղում: Նրանց շարժումների նազանքից՝ պարմանների սրտերին ուկիտանների անդունդների խռովքն էր փոթորկում: Արքան էր կանգնել, բուռն ծափահարում: Պարմաններ էին բացատ ելել: Իրենց հատու վերամբարձ շարժումները աստղեր էին վար բերում, որպէս իրենց աստուածների տաճարներից փրցուած ծաղիկներ՝ պարմանուհիներին մեկնում: Թմբուկների զարկերի հետ գետինն էին ուժգին տոփում, կարծես շարքերով թշնամու դէմ մարտի էին ելել: Լանջաբաց երկու կտորիճ պարմաններ, դաշոյնները վեր պահած խոյացել բացատ: Արեւ աստուած Միհրի լոյսն էր դաշոյններից փախնում, գնում պարմանուհիների այտերին վառուած: Դաշոյններն էին իրար զարկում, Արմինա աշխարհի փափկասուն կանայք երկիւղում. . . ծիծաղում էին պարմանները: Մարտ վարելու բազում հնարքներից յետոյ գրկախառնում, Արմինա աշխարհի գոյգապար բռնում: Վերեւ պարզած թաշկինակները թափահարում, Միհրի լոյսի եօթ գոյներն էին ծաղկում մեհեանի որմերին: Նրա բացատում էին թմկահարները, փողահարները, գողթան երգիչները, պարում են, երգում են, թասերով գինի ըմպում, թասերով գինի ցողում պարմանուհիների իրաններին, ծնրադրում, նրանց հանդերձներից ծորած գինի ըմպում: Արքան, արքունիքը, իշխանները այդ օրը խրախճանում էին աշխարհական մարդկանց հետ, դիտում մեհեանի բացատում Ամանորի Նաւասարդեան խաղերի մրցումները, արքան էր ծաղկունքով հիւսուած պակներով պարգեւատրում յաղթողին: Բազում օրեր խրախճանում, քրմապետն էր ազդարարում տօնի աւարտը:

Ամանոր աստուած, Արմին-հայերը բազում դարեր տօնախմբեցին նրա յիշողութիւնը, մի անօրէն մարդու գաւակ, թագաւորի հետ ստիպեցին մարել այն, այրեցին ու փլեցին այն բոլորը, որ կարող էին յիշեցնել նրանց աստուածների իմաստութիւնը: Նրանց աստուածների իմաստութեան տօները վերիմաստաւորեցին նոր հաւատքի ուսմունքին: Իզուր եղաւ նրանց ու յետագայ վայրի ցեղերի յանդգնութիւնը մարելու արարչական մարդկանց ցեղին սրտի ոգին, նրանց հին աստուածների յիշողութիւնը: 'Վանեմ հիւսիսային ժողովուրդների'' այդ ցեղի մարդկանց ոգու կրակը շարունակեց առկայծել, Արարատի դիմաց կանգնած երկրի աշխարհային մարդիկ սկսել են տօնախմբել իրենց աստուածների ծնունդ, շղթայուած Արտաւազդ թագաւորին բերել հայոց գահին: «Ամանոր» աստուծոյ անունը հասարակ անուն եղաւ, Նաւասարդի հետ շարունակեց խորհրդանշել «Նոր Տարի», «Նաւասարդ», ցեղակից յոյներից փոխ արած՝ «Կաղանդ»:

Դէպի Ասորիք արշաւող Մեծն Տիգրան արքայի գորքի հետ, Արմինա-Հայաստանի լեռների լանջերի մարդիկ հասել՝ գէնքով նուաճուած սելեւկեանների մայր ոստան: Փոխ արքան, նրանց մի մասին վերաբնակեցրել «Մուսա»-ների պաշտամունքի մօտիկ լեռների լանջեր, որտեղ բազմեցին՝ արեւից բուսած ծաղիկների «վեց շէներ»: Ջարիթափ լանջերի հողին դարաւանդներ պատեցին, երկրից իրենց հետ բերած տնկիներով այգիներ արարեցին, որոնց ծառերի սաղարթներին աստղեր էին իջնում: Նրանք շարունակեցին պահպանել իրենց աստուածների յիշողութիւնը, տօնախմբեցին նրանց իմաստութիւնը: Կրօնափոխ լինելուց յետոյ էլ պահպանեցին այն, վկայ՝ նրա լանջի շէնում ակները լոյսին բացած, այս





**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ**

**ՄՐՏԱԳԻՆ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԲՈԼՈՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ
ՄԱՂԹԵԼՈՎ ԱՆՈՆՑ
ԵՐՁԱՆԻԿ ՈՒ ԲԱՐԵՔԵՐ ՏԱՐԻ ՄԸ**

ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌ ՎՐԷԺ

VREJ PASTRY

**PASADENA
626-797-2331**

**GRANADA HILLS
818-366-2526**



ՄԱՍԻՍ - 2024

Թող Գալուստդ Բարեբեր Լինի
Ռ. ԿՈՐԻԻՆ

Ամանոր հին եւ նոր օրերի
Մուտքդ թող բարի լինի,
Որ մտնում ես ամեն մի տուն,
Խինդ ու ժպիտ թող լինի:
Դու գալիս ես ճիշտ ժամին,
Չես վրիպում ոչ մի տարի,
Սարեր, ձորեր ու վիհեր,
Ծովեր, ովկիաններ անհուն,
Բուք ու բորան ու
սառնամանիք,
Քեզ չեն վախեցնում երբեք:
Գործն բարի անվեհեր
Յաղթահարում ես ամեն
տարերք:
Ժամացոյցի թիք-թաք, թիք-
թաքերով,
Դափերի հարուածներով,
Շեփուրների նուազներով,
Չանգերի դողանցներով,
Խանդավառ կանչերով,
Պերճեղեւնիք գարդարուած,
Շողշողուն ճրագներով
պճնուած,
Երեխաներ շուրջ պար բռնած,
Քեզ են դիմաւորում
հրապուրուած:
Դու մարդ-էակ չես, որ
շօշափուես,
Դու մարմին չես, որ տեսնուես,
Դու մտային յիշողութիւն ես,
Ասուած ու գրուած պատգամ
ես,
Տոմարների հաշուարկումով
տարին է՝ որ բոլորում է,
Քեզանով նորն է սկսում,
Յունուար մէկով ես հռչակում:
Ամանոր ես, բայց
խորհրդաւոր,
Քեզ խորհրդանշողն է կաղանդ
պապէն:
Նոր ես, սիրելի դառնաս,
Տօն ես՝ ուրախացնես,
Հրճուանքի եւ գուարճանքի,
Գուրգուրանքի ու
փայփայանքի,

Նորութեան ու թարմութեան,
Նորոգման ու մաքրութեան,
Խորհուրդը դառնաս:
Դու մուտք ես գործում ամեն
մի տնից ներս՝
Մ ե ծ ա հ ա ր ու ս ու ն ե ր ի
ապարանքներ,
ճոխութեան ու շռայլութեան
մէջ մխրճուած,
Բեռեզներով ու մետաքսներով
հագնուած
Ապարանքներ, ականջկիթներ
ու բրոշներ
Մատանիներ ու վզնոցներ
մարգարտեայ,
Չարդերով պճնուած որպէս
պուպրիկներ,
Սեղաններ բարիքներով շռայլ:
Դու մուտք ես գործում
Խրճիթներ անհրապոյր,
Հիւանդ ու անկար տնեցիներ,
Կարօտ հացի ու
գուրգուրանքի:
Ոչ խինդ ու ուրախութիւն կայ,
Ոչ ժպիտ ու խայտանք կայ:
Ի՞նչ կասեն սրան...
Մէկը կարօտ, միւսը
յղփացած:
Դու մուտք ես գործում՝
Սգաւոր տնից ներս,
Հարազատ է կորցրել,
Տան հացբերն է մահացել,
Ցաւ է, վիշտ է ու մորմոք...
Ինձ ասա՛, հէ՛յ Ամանոր,
Ինչո՞ւ այսպէս պիտի լինի...
Թող որ քո մուտքով ոչ մի
տուն
Ոչ խեղճ լինի, ոչ անկեալ,
Ոչ սրտակից կորցրած լինի,
Ոչ տխրութիւն ու ցաւ լինի,
Գալովդ մխիթարանք եղիր,
Վիրաւոր սրտեր ամոքի,
Անխղճին գութ տուր,
Թող կարեկից լինի,
Արեւահամ մարդ լինի:

Ամանոր-Վանատուր

Շարունակուած էջ 33-էն

ալեհեր «Արմինը»:

Նաւասարդ, Ամանոր՝ Մուսա՝-ների լանջի շէնի բոլոր տների
բակերի ջրով լիքը ամաններում վեր էին խոյանում դափնի սաղարթաւոր
երկար ոստեր: Շէնի մայր ճանապարհի շուկայի կեղերոնական հրապարա-
կում՝ վառելիքի ու ցախի խոշոր դէպ էր: Ամանորի նախատօնակի
իրիկնադէմ, դաբնու ոստերը որպէս ջահեր վեր պարզած, Եօղունօլուզ
շէնի մարդիկ գալիս խմբուած խարոյկի բոլորտիքը: Չուարթ բացական-
չութիւնների հոնդիւն, ընդունուած կարգի համաձայն գիւղի աւազն էր
վառում խարոյկը: Կարմիր բոցեր էին ժայթքում դէպի վեր, արեւ
աստուած Միհրի դէմքն էր շառագունում, կարմիր ժպտում էր: Հագար-
հագար տարիներ Արմին-Հայ արեւորդիները սրտերում չէր մարել իրենց
նախնիների աստուածների տիեզերական իմաստութեան խորհուրդի
պաշտամունքը: Խելարում էր խարոյկը, պայթում էր խարոյկը, կրակի
կարմիր բոցերը բարձրանում վերեւ, լոյս տանում արեւորդիների հին
աստուածների տաճարներ, աւետելու նրանց՝ իրենց հրաշափառ
գոյատեւման աւետիսը, նրանց յիշողութեան առհաստաչեաց լոյսը:
Խարոյկի բոցերն էին շիկնում պարմանուհիների անուշ դէմքերը,
պարմանների սրտերին քաջութեան սիրանք, իրենց լեռներին պաշտա-
մունք, իրենց արտերին ու հանդերին սիրոյ հուր կաթում: Կրակի բոցերի
կարմիր խոյանքով արբեցած, բարձր բացականչութիւններով դաբնու
ոստերը գարկում խարոյկի բոցերին, կանաչն էր վառում, պայթում էին
սեւ սաթի պտուղները, բոցերից թռչում հագար-հագար կարմիր աստղիկ-
ներ, գնում Վահագնի Յարդագողի ճանապարհ՝-ին լոյս վառելու:
Պարմանները, խարոյկից պայթած աստղիկները փերի վրայ պահած՝
տանում որպէս սիրոյ ծաղիկ նուիրաբերում պարմանուհիներին: Ցնծու-
թիւն էր հրապարակում, արեւորդիները ցատկում էին խարոյկի վրայից,
նրա շուրջ բոլորը պար բռնում, նախնիների կրակի փառաբանումը,
Ամանորի յիշողութեան զարթնած լոյսի ջահերն էին վառում իրենց
հոգիներում: Աշխարհի դաւաղիր՝ Մեծեր՝, մարեցին Մուսա Լերան
շէների Ամանոր-Նաւասարդի խարոյկները, չէ, նման դաբնու ոստերով,
նման խարոյկ ուրիշ տեղ չիք, ինչու՞ այսքան արհաւիրք, մարեցին իրենց
հին աստուածների լոյսը, Նոր լոյսը՝ մթնեց հայոց սրբազան լեռնաշ-
խարհը, փոս եղեւ: Արմինների՝ երկրի, հողի, նախնիների աւանդապա-
տումների յիշողութիւնը յաւերժութեան լոյս հոսեց իրենց հոգիներին:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

ՏԻԱՐ ՎԱՐԴԱՆ ԼԻՊԱՐԻՏԵԱՆ

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԵՐ ԵՒ ՏԻԿ.
ՍՏԵՓԱՆ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ**



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ**

**ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ
ԱՌԻԹՆԵՐՈՎ ՄԵՐ
ԼԱՒԱԳՈՅՆ ՄԱՂԹԱՆՔՆԵՐՆ
ՈՒ**

**ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՄԵՐ ԲՈԼՈՐ
ՀԱՐԱԶԱՏՆԵՐՈՒՆ ԵՒ
ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ**

**ՏՕՔԹ. ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ
Central Diagnostic Imaging**